


85



2004

ԱԶԴԱԾԻՆ ՄԱՏԵՆԱԳՐԵՆ

25.

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՀԱՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐԵԱԸ

ԳՐԵՑ

ԳՐ. ՏԵՐ-ՊՈՂՈՍԵԱՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ՎԻԵՆԱ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԻՐԱՄ

- Ժ. Կիւշեսկան թ. ժ. մ., Եղիշէ, բնական ու առևտնասփրութիւն: 1909: Էջ հՀ+458: Փր. 10.—
- Ժ. Ակիմեան Հ. Ն., Տիմոֆէյս Կուզ Հայ մատենագրութեան մէջ: Էջ 1—60:
- Ժ. Աժառեան Հ. Հ., Հայերէն նոր բաներ Տիմոֆէյս Կուզի Հակածառութեան մէջ: 1909: Էջ 61—106: Փր. 3.—
- Ժ. Ակիմեան Հ. Ն., Զաքարիա Եպ. Կունիսեաց եւ իւր տաղերը: 1909: Էջ ԺԲ+87: Փր. 2.—
- Կ. Ակիմեան Հ. Ն., Կիւրիկն Կաթողիկոս Վրաց: 1910: Էջ ԽՀ+315: Փր. 7.—
- ԿԱ. Մհանվիշեան Հ. Գ. Ժ. մ., Հայերէն լիգուի ուղղագրութեան իրադրը: 1910: Էջ 73: Փր. 2.—
- ԿԲ. Քիւտերը Կ. Կ., Թիգանդիրն եւ Պարսկաստան աւ անոնց զրանագրաւական եւ ազգային-իրաւական յարաքերութիւնները Յուստինիանու ժամանակ: Թրգմ. Հ. Հ. Համբարձամ: 1911: Էջ Հ+162: Փր. 4.—
- ԿԴ. Սամոնեան Խ. Խ., Մխիթար Գօշի Դատաստանագիրը ու ինն Հայոց քաղաքացիական իրաւունքը: 1911: Էջ ԺԲ+344: Փր. 7.—
- ԿԵ. Առաքելեան Հ., Պարսկաստանի Հայերը, Նրանց ամցեալը, Ներկան եւ ապագան: Ա. 1911: Էջ Հ+97: Փր. 2.—
- ԿՒ. Յովանեան Հ. Ղ. Վ., Միջնադարեան ազգային տաղաշափութիւն ուամկախառն. Էջ 1—48:
- ԿԵ. Ակիմեան Հ. Ն., Յովսաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովսաթանեանը եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնը: 1911: Էջ 49—117: Փր. 3.—
- ԿԶ. Մհանվիշեան Հ. Գ. Ժ. մ., Գրիգոր Մագիստրոսի “Գամազականի”, ամբողջական լուծումը: 1912: Էջ ԺԱ+162: Փր. 3.—

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԵԼԻՍՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԻՐԱՆ

ՀՅ.

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՀԱՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐԵԱԸ



ՎԻԵՆՆԱ
ՄԽԱԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919

Ե.Բ.
309

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՀԱՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԲԵՐԵԱԸ

ԳՐԵՑ

ԳՐ. ՏԵՐ-ՊՈՂՈՍԵԱՆ

ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ՎԻԵՆՆԱ
ՄԽԱԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919

ԺԱՆՈՒՅՈՒՆ

“Նկատողութիւններուս,, Ա. մասը
լոյս տեսած է 1901ին, “Ազգային Մա-
տենադարանի,, շարքին մէջ, Հոր. ԼՀ: Այն
տեղ Հեղինակը քննութեան նիւթ ընտրած
էր Փաւստոսի Զ. Դալրութիւնը: Ներկայ
“Նկատողութիւններս¹, կը վերաբերին
Փաւստոսի “Ա. Դալրութեան,,.. առ այս
իրեն զրգիր եղած է Հ. Ա. Մատիկեանի
“Անանուն կամ Կեղծ-Սեբէոսը,, Վիեննա
1913 (Ազգ. Մատ., Հոր. Զ.), ուր Փաւս-
տոսի կը վերագրուի, իբրեւ նիւթ
“Ա. Դալրութեան,,.. այն Հայոց նախնա-
կան պատմութիւնն, որ կը գտնուի Սե-
բէոսի “Ի Հերակլ Պատմութեան,, սկիզբը:

Հեղինակն ունի հոս շարք մը ընտիր
նկատողութիւններու, որոնք ուշագրաւ են
“Անանունի,, եւ առ հասարակ Փաւստոսի
ուսումնասիրութեանն համար: Բաց երբ

1 Նախագէտ հրատարակուած Հանդես Ամ-
սորեայի մէջ 1914, էջ 183, 479, 626, 1916, էջ 149:

28-307



(1585-96)

309-2004

(102-2004)

Սիմէռն Ապարանեցոյ վիպասանութեան¹
կը յատկացնէ այս խնդրոյ լուծման հա-
մար կարեւոր նշանակութիւն, կը համա-
րինք թէ հոս իւր եզրակացութիւնները չա-
փազանց են եւ ոչ համածայն իրականու-
թեան. որովհետեւ Սիմէռն Ապարանեցի
աշքի աղջեւ ունեցած է այն նախագաղա-
փար ճեռագիրն, ուսկից ծագած է Սե-
բէոսի, ուստի եւ Անանունի ծանօթ օրի-
նակը, որ քնագիր եղած է տպագրութեան:
Ապարանեցոյ տողերը սխալ հասկցուած
են. հմմտ. այս մասին Համեց. Ամս. 1919,
էջ 93:

ԽՄԹԱԿՐՈՒԹԻՒՆ “ՀԱՅԹԻՌԱԾԻ”

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

Ա. “Անանուն կամ Աեղծ-Սեբէոս” (Հ. Ա. Մա- տիկեանի)	1—6
Բ. Փաւատոսի Գ. գպրութեան Ա. գլուխը	6—52
Գ. Անանուն Աեղծ-Սեբէոս.	
Դ. Սիմէռն Ապարանեցու օրինակը	53—71
Ե. Անանունի ժամանակը եւ նպատակը	72—89

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ղ. Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց.

Ճառ. Ա. 90—126

¹ Այս կէտին ընդարձակ անդրադարձաւ վերջերս
Հեղինակն սկատողութեանց առթիւ՝ Հ. Բ. Մարգիսեան,
Բազմնալիք 1915, Թ. 1-2, առանց կարեւոր հետեւու-
թեան:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԵԽՍՏՈՒՄ ՊԱՏՄՈՒԹԵԸՆ ՎԵՐԱԲԵՐԵԸՆ
ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Հ. Աղեքսանդր Մատիկեան “Անսնունը կամ
կեղծ-Մերէնու,, Քննական յիսումնասիրութիւն,
Վիեննա 1913:

“Ազգային Մատենագարանի, այս 70րդ
հատորն իր հարուստ բովանդակութեամբ մի
գեղեցիկ պանօրամա է ներկայացնում այն բոլոր
ծանր խնդիրների, որոնք անխուսափելիօրէն
հանդէս են գալիս Փաւստոսի եւ Խորենացու
մատենագրութեամբ զբաղուող իւրաքանչիւր մի
բանասէրի. խնդիրներ, որոնք երկու տամնեակի
շափ ազգային եւ եւրոպացի բանասէրների
յայտնած կարծիքներից յետոյ դարձեալ մնում
են անլուծելի, եւ որոնց մասին սակայն Հ. ԱՂ.
Մատիկեան աներկդիմի կարծիք է յայտնել եւ
վճիռ արձակել: Զը նայած որ այդ վերջին հան-
գամանքով եւս առաւել հետաքրքրական են
դառնում Հ. ԱՂ. Մատիկեանի հիմքերն ու բա-
նավարութեան ընթացքը, սակայն մենք կը հա-

մառօտենք նոցա, նկատելով՝ որ ՀԱՅԻ ընթերցող՝
ՆԵՐԻՆ ծանօթ են նոքա, եւ ապա մեր կարծիքը
կը յայտնենք նրանց մասին:

ԿԵՂԾ-ՍԵՐԷՍԻ ով լինելը որոշելու համար,
ՀԵՂԻՆԱԿԸ կանխաւ էջ 1—9 յիշում է ինդրի
Նախորդ գրականութիւնը եւ ապա յայտարա-
րում, որ ինքը պիտի ապացուցանէ, “որ ԱՆԱ-
ՆՈՒՆԻ ինչ ինչ հատուածները, որոնք գրքին
հազեւ կէսը կը գրաւեն, հատակոտրոներ են
Եւ գարու մէջ գրուած Հայոց նախնական պատ-
մութեան մը, որուն հեղինակն է ինքնին իսկ
Փաւստոս” (Էջ 9): Այս նպատակին հանելու
համար ՀԵՂԻՆԱԿԸ պարտաւորուած է զգում
ապացուցանել նախ՝ որ Փաւստոս գրել է զրհե-
ղեղից մինչեւ Քրիստոս մի նախնական պատմու-
թիւն ոչ - Հայերէն լեզուով եւ առ այդ հիմք է
ծառայեցնում այն մեկութիւնը, որ նա տալիս
է Փաւստոսի Գ. դպրութեան Ա. գլխին՝ յետոյ
Պրոկոպիոսի եւ Ղազար Փարափեցու յիշած
“Պատմութիւն Հայոց” գիրքը համարում է
Փաւստոսի այսօրուայ պատմութեան հեղինակի
կորսուած մի ուրոյն երկը եւ վերջում առաջա-
դրում է Պրոկոպիոսի Ա. եւ Գ. գրքերից Հայոց
Վերաբերեալ երկու հատուած՝ վերջինն իրը
Փաւստոսի նախնական պատմութեան փշուրը:

Գրքի այս մասը էական նշանակութիւն է
ունեցել հեղինակի համար, որովհետեւ ԱՆԱ-
ՆՈՒՆԻ Ա. հատուածի (= ՍԵՐԷՍ Ա. Դպր.)
մեծագոյն մասը հեղինակը համարում է Փաւս-
տոսի նախնական պատմութեան մնացորդը եւ

ապա նաեւ որոշում է այդ պատմութեան պա-
կասող մասերը (Էջ 66—70): Հիմնուած Փաւս-
տոսի Գ. դպր. Ա. գլխի մեկնութեան վրայ, որին
մենք համակարծիք չենք:

Այսուհետեւ մի նախնական Հայոց Պատ-
մութիւն Փաւստոսին վերագրելուց յետոյ՝ ՀԵ-
ՂԻՆԱԿԸ անցնում է իր բուն ինդրին — ապա-
ցուցանելու որ Փաւստոս եւ ԱՆԱՆՈՒՆ ՆՈՅՆ ՀԵ-
ՂԻՆԱԿՆԵՐՆ են՝ այն տարբերութեամբ, որ Փաւս-
տոս մնացել է առանց եղծման, իսկ ԱՆԱՆՈՒՆ
խմբագրուած եւ այսօրուայ ՍԵՐԷՍի Ա—Բ,
դպրութեան ձեւն է ստացած: Առաջ իւր գրքի
մէջ որոշուած են ԱՆԱՆՈՒՆԻ ոսկեդարեան եւ
ցեխադարեան հատուածները (Էջ 28—38) եւ
ապա ցուցակագրուած են բառերի, ասուլթեան
եւ ոճերի զուգակցութեան 29 դէպք ԱՆԱՆՈՒՆԻ
ոսկեդարեան հատուածներից եւ Փաւստոսի
պատմութիւնից: Այս մասում ՀԵՂԻՆԱԿԸ ար-
դարացիօրէն մերժել է Ստ. Մալխասեանի եւ
Գր. Խալաթեանի նպատակաւոր եղբակացու-
թիւնները ԱՆԱՆՈՒՆԻ լեզուի մասին (Էջ 38—
46): Բացի լեզուագիտական հանդիպութից, ՀԵ-
ՂԻՆԱԿԸ յաջողութեամբ յիշում է մի քանի
պատմական զուգադիպութիւններ եւս ԱՆԱՆՈՒ-
ՆԻ եւ Փաւստոսից, միանգամայն որոշելով Մա-
միկոնեան եւ բագրատունի նախարարութիւն-
ների նկատմամբ Փաւստոսի եւ Խորենացու դիքը
(Էջ 46—61): ՀԵՂԻՆԱԿԸ աշխատութեան այս
մասը ամէնից յաջող ընթացք եւ նշանակու-
թիւն ունի, բայց — պայմանով, որ բաժանուի

այդ մասից նրա սխալ եզրակացութիւնը։ Աեզրուագիտական եւ պատմական զուգագիպութեան դէպքերը, ինչպէս կը տեսնենք ներքեւում, ուրիշ եզրակացութեան են ծառայում՝ քան հեղինակին այդ թուացել է։

Այսուհետեւ հիմնուած Անանունի եւ Փաւստոսի զուգագիպութիւնների վրայ, հեղինակը գրում է Էջ 61. «Անանունի խնդիրը՝ այլ եւս լուծուած է. եւ անոր հետ եթէ չենք սխալիր, լուծուած է միանդամայն Խորենացւոյ գլխաւոր աղբեր ինդիրը։ Խորենացւոյ «Մարարաս կատինան Փաւստոս է, որուն հետ սակայն վարուած է այնպէս, ինչպէս անոր Բ. պատմութեան հետ (= արդի Փաւստոս Գ—Զ դպր.) ստրկօրէն կապուած է, բայց ստրուկ չնկատուելու վախէն, մանաւանդ թէ ինքն իրեն շատ աւելի մեծ հեղինակութիւն մը տալու տեխնալքէն, Փաւստոսէն պատմուածը միշտ այլափոխած եւ կամ Յ. Դաղբաշեանի լեզուաւ խօսելով՝ «Խարդախած է»։ Իսկ Անանունի աղբիւրն է Փաւստոսի նախնական պատմութիւնը = Պրոկոպիոսի եւ Ղազարի Պատմութիւն Հայոցը = Խորենացու Մարարաս կատինան։ Գլխաւոր հարցի հետ նուազ կապուած երկու մանրամասնութեան յիշատակութեամբ՝ Մարարաս Մծուրնացու եւ Փաւստոսի նախնական պատմութեան վերաբերեալ՝ վերջանում է հեղինակի աշխատութիւնը (Էջ 60—71), ուր երկու տպագիրների եւ երկու ձեռագրերի ընդամենը 98 տարրերութեամբ հանդէս է բերած

գրքի ծայրում՝ «Փաւստոսի Ա Պատմութեան հատակոտորները», Անանունի սսկեցարեան հատուածները (Էջ 71—91)։

Այս բոլոր ժամանակ հեղինակը մերթարծարծել եւ մերթ լուծել է հետեւեալ գլխաւոր խնդիրները։ Փաւստոսի ժամանակը, լեզուն, աղդը, աղքիւրները, պատմութեան բաժանումները, Երրորդ գպրութեան առաջին գլխի եւ յառաջաբանի համեմատութիւնը, ինչու է կոչուած առաջին գպրութիւնը երրորդ եւ սկիզբն, Փաւստոս գրել է նախնական պատմութիւն, Արարատ թէ Սարարադ, Մամգուն, արդի պատմութիւնը եւ Պրոկոպիոսի ու Ղազարի Հայոց պատմութիւնը մի հեղինակի աշխատութիւն է. Փաւստոս օգտուել է Մարարասից, Բարդեծանից եւ Ավրիկանոսից։ Նախնական պատմութիւնը Ղազար Փարպեցին չի տեսել։ Նախնական պատմութեան վրայից կ'ո՛ր գարում մի անյայտ անձն խմբագրել է արդի Անանունը եւ կցել է Սերէոսի պատմութեան։ Նախնական Պատմութիւնից թ'ո՛ր գարում կեղծ-Խորենացին օգտուել է, բայց նրա հեղինակին՝ Փաւստոսին յիշելու փոխարէն՝ Փաւստոսի աղբիւրներն է յիշել իր անմիջական գրադարան։ Այս բոլոր ծանրակշիռ խնդիրների լուծումը յաճախ հեղինակն առաջարկում է առանց վերապահութեան, վճռականորէն, մէն մին խնդրին վերաբերող գրականութեան քննութեան հետ միասին, կցուած Փաւստոսի եւ Անանունի տեկստի լեզուած գուագիտական եւ պատմական համեմատու-

թեան — ընդ ամէնը 70 էջի մէջ, ուր՝ նկատենք միայն՝ թռւել կարելի էր, ի հարկէ, այլ ոչ սպառել նոցա:

Բ.

Փաւստովի Գ. Դպրութեան Ա. զոսկից:

Փաւստովի ինդրի մինչեւ այժմ գլխիվայր դրուած լինելով այդ խնդիրը տուժել է չարաշար կերպով. մինչդեռ Փաւստոսի անձն ու դարը ճանաչել կարող ենք մենք միայն իր պատմութեան տեկստը ճանաչելուց յետոյ, ընդհակառակն քննադատներն առանց այդ տեկստի կանխապէս ստուգութեան՝ նրա հատուածները հիմք են դարձնում իրենց եղբակացութիւնների համար ոչ միայն Փաւստոսի այլ նաև Անանունի եւ Խորենացու ովկ լինելն ու նրանց հետ կապուած խնդիրները որոշելու համար: Դեռ աւելին կայ. մեզ հետ միասին ուրիշներն եւս նկատել են որ Փաւստոսի պատմութիւնը յետին դարերում խմբագրութեան է ենթարկուել, բայց այնուամենայնիւ այդ եղծուած դրութեամբ իսկ Փաւստոսի պատմութիւնը Հ. Մատիկեանին ընձեռել է ցուցումն այն մասին, իբր թէ Փաւստոս նախաքրիստոնէական շրջանի մասին պատմական մի երկ է գրել. եւ հակառակի պէս ցուցումն ընձեռել է այն հատուածը, որը հէնց արդինք է յետին խմբագրութեան: Այդպէս է Փաւստոսի Գ. դպրութեան Ա. գլուխը, որը ուրիշների նման Հ. Մատիկեանը կոռան է

դարձրել իր այնքան յաջող զուգորդութիւններից անպատճառ եղբակացութիւն ստանալու համար: Այստեղ պարզելով այդ գլխի բուն արժէքը, երեւան բերած կը լինենք նաեւ ամբողջ Փաւստոսի խմբագրուած ու այլայլուած լինելն ուշ դարերում՝ այնքան այդ միակ գլուխը նշանակալից ֆաբրիկ ի կամ այսի է: Իսկ Անառունի կամ Կեղծ-Սեբէսոսի, հաւասարապէս նաեւ Խորենացու, Եղիշէի եւ Ղազարի խմբագրութիւնները՝ անբաժան Փաւստոսի խմբագրութիւնից՝ երեւան կը գան այն ժամանակ միայն, երբ պատմուի¹ Փաւստոսի խմբագրու-

1 Այսպիսի մի աշխատութիւն մենք խոստացել ենք Հրատարակել («Ազգ. Մատիկ. Լ. էջ 8»), այս անդամ միեւնյնը կրկնելով մենք մեզ այնու ամենայնին պարտաւորուած չենք զգում շրտով կատարել մեր խօսքը երկու պատմառով: Անշապարփի, լուրջ եւ ծանրաքայլ ստուգութեան կարեւորութիւնը՝ որ պահանջնուում է այդ խնդրում, մեզ թոյլ չի տալիս մի շատ ակնյաց մատենագրական «Խոհանոցին հարցը թ-երկահարել. Օրինակ՝ թէ ո՞րքան Փաւստոսի մէն մի գլուխը պահանջնում է զգոյշ վիրաբերմնէք եւ բովանդակում է իր մէջ Հարցասիրական բազմալոյնմինի կէտեր եղծման եւ այլայլան նկատմամբ, ուրեմն եւ թէ ո՞րքան իրաւունք ունինք մենք չը շտապելու — դրան վկայթէլ մնի այն հարցերի շաբթը, որոնք մենք յարուցանում ենք սցանել շարունակութեան մէջ մի այն մի գլուխ մաս ունին, հարցեր՝ որոնց պատասխանը մենք սցանել միայն ամփոփելով ենք տալիս, եւ որոնք քննադատութեան սիւլ, շրջուած, գլմիվայր ընթացքի նորհիւ մեացել են առանց յարուցաներու: Երկրորդ պատմառը մեր իսկապէս անպարապ լինելն է. գատերը, տեսրակները եւ անձնական հոգաբերը սահպում են շատ քիչ ժամանակ յատկացնել կողմակի աշխատանքներին: Այսպահն ի տեղեկութիւն մեր այն բարեկամներին, որոնք բանաւոր եւ գրաւոր հարցում ներով մեզ դիմել են մեր խոստման առիթով:

թեան պատմութիւնը՝ իր բոլոր մանրամասնուշամբ:

Չը նայած որ հեղինակը Փաւստոսի մասին իր վերջնական կարծիքը չի արտայայտել եւ մտադիր է նրան դառնալ ուրիշ անդամ (Էջ 28), այնու ամենայնիւ գ. դպր. Ա. գլխին նա էական նշանակութիւն եւ ուրոյն տեղ է տուել իր գրքի մէջ. Թարգմանել, մեկնել եւ հիմնաքար է դարձրել այն մոքով, թէ Փաւստոս յայտնում է նրա մէջ որ ինքը նախաքրիստոնէական շրջանը պատմել է առաջուց: Խոկ մեզ թուում է, որ այդ գլուխը հէնց յետնադարեան խմբագրողի գործն է: Եւ ահա ի՞նչպէս:

ԱՌԱՋԻՆ. Փաւստոսի պատմութիւնը երրորդ Դպրութիւնով սկսուելու առիթով՝ Հ. Մատիկեան ենթադրում է, որ առաջին գլխի հեղինակը գրել է առաջին պատմութիւն, որ կորսուած է եւ վերջին պատմութիւն, որը մեզ հասած Գ—Զ. դպրութիւններն են: Երկու պատմական շրջանները շարունակութիւն չը կազմելով, եւ իրարից բաժանուած լինելով մի անջրգետով, որը ուրիշները պատմել էին հեղինակից առաջ, վերջինս վճռեց այդ շրջանի պատմական գրքերը երկրորդ կոչել: Ուրեմն՝ իրը թէ հեղինակի յիշած “առաջին, միջին եւ վերջին պատմութիւնները” պէտք է հասկանալ առաջին, երկրորդ եւ երրորդ դպրութիւն: Մենք տեսնենք միայն “երկրորդ դպրութեան”, իսընդիրն առ այժմ. նախ՝ անբնական եւ անսովոր մատենագրական ձեւ է այն, ինչ որ մենք չենք

անում եւ մեղնից առաջ էլ չեն արել, բայց կարծում ենք թէ “Փաւստոս”, արել է. արդարեւ՝ երբ է տեսնուած, որ մի հեղինակ իր աշխատութեան հասակի մէջ անջրգետի կեղծիք մուծանի, վերջին մասերն աւելի ցոյց տայ քան նախորդ մասերն են, օտարների “այլց,, բայց գրքերը իր “դպրութիւններից, երկրորդը համարէ եւ առաջին մասից յետոյ շարունակութիւնը երրորդ անուանէ եւ ոչ թէ երկրորդ: Պատահում է, որ մի հեղինակ ընդհանուր վերնագրի տակ այլեւայլ շրջաններ է պատմում, բայց չի պատահում, եւ չի կարող պատահել, որ նա ուրիշի անկախորէն հրատարակած գիրքը իր հատորներից մէկը համարի: Անհնար է՝ օրինակ՝ որ Կըմիածնի հրատարակիչները “Պատմագիրք Հայոցի,, երկրորդ հատորը առանց հրատարակելու, երրորդի սկզբում յայտարարէին թէ իրենք երկրորդ հատոր համարում են Ագաթանգեղոսի կրկնագրի Վիեննական հրատարակութիւնը: Պէտք է չը մոռանալ նաեւ որ “այլց,, գրած մատեանները շատ էին եւ բոլորը կոչել մի հատորով “երկրորդ,, դպրութիւն անհնար բան է. այլեւ, որ “այլց,, աշխատութիւնները “Բիւլղանդարան” անուան տակ չէին դրուած, իրենց ձակատին «երկրորդ» չէզք բառը մի ծանօթութեամբ հանդերձ չունէին: Մի խօսքով բոնազբոսիկ մեկնութեամբ քննադաշները փորձում են մեկնել արդի պատմութեան սկիզբը երկրորդ դպրութիւնով կնքուելու երեսոյթը: Այդպիսի բոնազբոսիկ մեկնութիւնները

իսանգարել են նկատելու որ Փաւստոսի պատմութիւնը բնագրի մէջ սկսուում էր արդի Չորրորդ դպրութիւնից եւ իսկոյն կը տեսնենք թէ ի՞նչպէս.

ԵՐԿՐՈՐԴԻ. վաղուց յայտնի է Ղազարի տեղեկութիւնը Փաւստոսի չորրորդ դպրութեան 15րդ գլուխ մասին տողովս — ըստ գրելոցն (գրեցելոց) ի պատմութեան երկրորդումն, ի ճառին հնգետասաներորդի (Պատմագիրք Հայոց, Ղազար Փարպեցի, էջ 25): Եւ քննադատները մինչեւ այսօր կարծել են որ Ղազարի ձեռքին Փաւստոսի պատմութեան մասերը կոչուած էին ա, բ, գ, դ, փոխանակ այսօրուայ գ, ռ, ե, զ: Այս սխալ հասկացողութիւն է, ճիշդը յետոյ բայց Հ. Մատիկեան Ճիշդը ըստ գտած, սխալն էլ չը կարողանալով հերքել՝ ինքնահերքման մէջ է ընկել. մի անգամ նա գրում է «որովհետեւ Փարպեցին Փաւստոսի Դ. դպրութիւնը Բ. պատմութիւն կանուանէ, ասկէց Փաւստոսի Գ. դպրութեան Ա. Պատմութիւն եղած լրաց չի հետեւիր (էջ 26), այլ այն՝ որ Փարպեցին անծանօթ է եղել Փաւստոսի պատմութեան եւ նրա այդ տեղեկութիւնը անվստահելի է «Փարպեցին Փաւստոսի ոչ անձին եւ ոչ իսկ գրութեան վրայ իրական ծանօթութիւն ունի, լոկ ենթագրութենէ անդին չեն անցնիր» (էջ 26): Այս սակայն ինքնահերքումն է, 26րդ էջում ասուած է ուղիղ հակառակը՝ Դրական ուրիշ զօրաւոր ապացոյց մալ ուսինք. Փարպեցւոյ արժանահաւատ վկայութեան համաձայն Փաւստոսի պատմութիւնը

ԵՐԵՒ դարուն մէջ կ'անուանուէր Հայոց Պատմութիւն: Փարպեցւոյ այս վկայութեամբը ո՛չ միայն գրոկոպիսի հատուածներուն աղբեր նոյնութիւնը կը հաստատուի եւայլն:

Մեր ծանօթութիւնը Փարպեցու խմբագրութեան մասին յայտնի է «Ազգ. Մատեն. ԱԼ, էջ 98—101) այստեղ այսքանը պիտի աւելացնենք սակայն, որ Փարպեցուն քննադատները սխալ են հասկացել. Փարպեցին խօսում է իր տերմինով, իսկ քննադատները նրան մեկնում են իր ենց տերմիններով: Փարպեցին յառաջարանի մէջ «Գիրք Գրիգորիսին» անուանում է Առաջին Պատմութիւն, Փաւստոսի «Պատմութիւն Հայոցը» անուանում է Երկրորդ Պատմութիւն, վերջապէս իր աշխատութիւնը իրբեւ նախորդների շարունակութիւնը անուանում է «Երրորդ Պատմութիւն» այս ի կարգէ նորին գրոց շարագրեալ տկարութեանս մերում»: Ուրեմն՝ Ղազարի էջ 25 խօսքերը ըստ գրելոցն ի Պատմութեան Երկրորդումն, ի ճառին հնգետասաներուդին նշանակում են Ղազարի տերմինութիւնը՝ «ըստ գրելոցն ի գիրս Պատմութեան Փաւստոսի, ի ճառին հնգետասաներուդին»: Քննադատների աչքում «Դպրութիւն», եւ «Պատմութիւն» տերմինները միացել են, մինչդեռ Ղազարի համար թէ յառաջարանում եւ թէ պատմութեան ընթացքում միակ Երկրորդ պատմութիւն գոյութիւն ունի ի դէմն Փաւստոսի աշխատութեան, եւ ոչ թէ այդ աշխատութեան մի մասի: Այդ այնքան

պարզ խնդիր է, որքան անհմաստ է գրա հաւառակը. եւ արդարեւ ի՞նչ նշանակութիւն ունի այն կոչումը որը քննադատներն են հասկացել. որ հեղինակը կ'ասի — Այս ինչ դէպքը նկարագրուած է երկրորդ մասի 15րդ գլխում, առանց բացատրելու թէ այդ ինչ մաս է կամ ինչի մաս է, այլ սոսկ միայն հանելուկային ձեւով: Ընդհանրակն՝ մի անդամ զաղար յայտնելով՝ յառաջարանի մէջ, որ ինքը երկրորդ պատմութիւնը համարում է ֆաւստոսի աշխատութիւնը, շարունակութեան մէջ իրաւամբ խուսափում է կրկնութիւնից եւ հեղինակի անունը տալուց՝ թերեւս նրա անբարեհամբաւութեան նկատումով, եւ յիշում է նրան “Երկրորդ Պատմութիւն, տերմինով”:

Բայց կարեւորը այդ մեկնութիւնը չէ, այլ հետեւանքը, այսինքն՝ այն, ինչ որ երկար պատմելու նիւթ ունի. այդ մեկնութիւնից հետեւում է որ Փաւստոսի բնագիրը զաղարի ժամանակ սկսուում էր գլուխների բաժանուել արդի չորս գործեան սկզբից միայն: Ուրիշ խօսքով՝ արդի Փաւստոսի մէջ յարդարուած են Երրորդ Դպրութիւնը եւ բաժանումները, ի թիւս այն յարդարումների, որոնց հետեւանքով ստացուած է “Խոստաբանութիւն նախագիտելի”, Զ. դպրութիւն եւայլն (Ազգ. Մատեն. և լը): Մի հանգամնք սակայն պէտք է չը մոռանալ. Զաղար սովորական ընթերցանութեան գրքերը սուրբ գրքից տարբերում է՝ առաջինները

գրեան, իսկ երկրորդը՝ “գիրք” կոչելով. Զի անդամ եւ զհուում գրեանդ ոչ ետուն զինի իմ. “զգրեանն նորա առ անդիտութեան փաթաղ ի կէս կոչէին”. “իմ... Կարդացեալ զգիրս արանց սրբոց...” զսաղմոսն Դաւթի պաշտել միայն պիտոյ է ի ժամուն անսխալ, եւ ոչ միշտ զգիրսն ի ձեռին ունելով՝ խօսել զայլայլը իրեւ զբանդագուշեալս: Իսկ մեր երանելի վրադապետին զամենայն զկտակարանս եկեղեցույց երիցս եւ չօրիցս ուսուցեալ մեզ ի սկզբանէ մինչեւ ի կատարած գրոցն...” Իսկ այժմ յուրզը ի լիրը մախողաց՝ եւ զանուանս անդամ եւ կամ զքանօնութիւնս կանոնեալ եկեղեցական գրենոյ հաղիւ կարեն գիտել (Թուղթ Ղաղարայ Փարպեցոյ...): Ինչ վերաբերում է Հայոց պատմական գրքերին՝ Ղաղար յիշում է կամ հեղինակի անունով՝ եւ կամ գրքի անունով, եթէ յատուկ անուն ունի գիրքը. այսպէս նա յաճախ Գիրք Գրիգորի է անուանում Ագաթանգեղոսի երկը եւ “Պատմութիւն նահատակին Գրիգորի”, “Կարդացեալ տկարամնութեանս իմց զգիրս արանց սրբոց...” եւ զմերցին առաքելանման նահատակին Գրիգորի (Թուղթ Ղաղարայ Փարպեցոյ): Իսկ Փաւստոսի պատմութիւնը, որ յատուկ անուն չունի, ինչպէս եւ հէնց իրա՝ Ղաղարի երկը նոյնպէս յատուկ անուն չունենալով՝ կոչուած են “Երկրորդ Պատմութիւն”, (էջ 25) եւ “Երրորդ Պատմութիւն”, էջ 186: Աւելի ուշադրութեան արժանի է այս վերջին կոչումը, որը միջնադարեան մի անյայտ

վարդապետի գրած եւ զազարի թղթին կցած
յառաջաբանի վերջում է գտնուում՝ “վասն որոյ
եւ զերրորդ Պատմութիւնս Հայոց Երանելի իմ
զազար պատմագրեաց. ընդ նմին գրեցաք եւ
զթուղթուն (նոյն) որից պարզ նկատելի է, որ
միջին դարերում եւս Փաւստոսին Երկրորդ Պատ-
մութիւն, իսկ զազարին Երրորդ Պատմութիւն
կոչելը ընդունուած էր զազարի յառաջաբանի
տերմինօլոժիայի հիմամբ։ Փաւստոսի Պատմու-
թիւնը Երկրորդ Պատմութիւն անունով ստի-
պուած էին յիշել, որովհետեւ Փաւստոսի աշ-
խատութեան բուն անունը՝ Հայոց Պատմութիւն,,
շատ ընդհանուր կոչումն է, իսկ զազարի Պատ-
մութիւնը Երրորդ անուանելու պատճառը նիւ-
թերի բազմատեսակութիւնն էր. Գիր եւ Գարու-
թիւն (Ա դրուագ), առաջին եւ Երկրորդ Կրօն.
պատերազմները (Բ եւ Գ դրուագներ)։ Այս
ընդհանուր անունն ու բազմապիսի բովանդա-
կութիւնը ուրիշ անդամ խուսափելով յիշե-
լուց, զազար ըստ հաճոյս գրում է կաթողի-
կոսների անունը. այսպէս Առաջին, Երկրորդ եւ
Երրորդ պատմութիւններ, կամ Գիրք Գրիգո-
րի եւ Պատմութիւն Հայոց եւ կամ Ագա-
թագեղսի, Փաւստոսի եւ զազարի գլքեր ասե-
լու փոխարէն, իմաստը խօսքի մէջ շրջում է
զազար եւ անուանում Գրիգոր նահատակի
Պատմութիւն, սուրբ Ներսէս եւ Սահակ կաթո-
ղիկոսների անէծք ու տեսիլ. — Սովուսին, Տէ-
րին, Խոսրովիկ թարգմանչին եւ Արքահամ
եպիսկոպոսին, իրեւ ժամանակակիցների, հալա-

ժուիլը լինելուց յետոյ, զազար գրում է. “Եւ
այսք այսպէս թշնամանեալք եւ հայհօյանօք
հալածեալք, ոչ յերեկոյս ինչ ժամանակաց
զրուցատրամբք յումբէ համբաւուց ծանուցաւ
մեզ, այլ առ մեօք իսկ եւ ի մերում ժամանակի
եղեալ տեսաք զայս ամենայն։ Իսկ զյառաջա-
գոյն գրելոց սուրբ արանցն, զորս ի պատմու-
թեանն նահատակին Գրիգորի գրոշմեալ յիշա-
տակէ, զինչ եւս ասացից, զարդար եւ զարժա-
ժանաւոր բարեպաշտ կաթողիկոսէն՝ զսրբոյն
Ներսէսէ, եւ զկրօնաւոր պռաքինւոյն եւ զմեծ
լուսաւորչէն Հայոց զտէր Սահակայ, եւ զայլոց
բազմաց, որոց ոչ բացեալ ի բարեբան զեբրանս
իւրեանց ի վերայ աշխարհին այսորիկ՝ վախճա-
նեցան (թուղթ զազարայ ... ib. 203), ուր
ակնարկուած են լուսաւորչի եւ Սահակի տե-
սիների այժերը եւ Ներսէսի անէծքը, յայտնի
Ագաթանգեղսից, զազարից եւ Փաւստոսից։
Տերմինօլոժիայի գէմ սոյնանման մեղանչման մի
ուրիշ օրինակ տեսանք արդէն Փաւստոսի
Գ դպրութեան առաջին գլխի առիթով, ուր
հեղինակի առաջին, միջին եւ վերջին
պատմութիւն որոշումները քննադատներն
ու Հ. Սատիկեան դարձրել են ու հասկացել
իբր առ աջին, երկրորդ եւ երրորդ գ
դպրութիւն։

ԵՐՐՈՐԴ. Փաւստոսի պատմութեան խմբա-
գրուիլն ու Արդի երրորդ դպրութեան յետագայ
շրջաններում կազմուիլն երեւում է նաեւ մեծ
շափերով երրորդ դպրութեան առաջին գլխից,

որը հետեւեալ պատճառներով՝ Ղազարի օրինակի մէջ չի եղել եւ Ղազար չի կարդացել այս: Այդ գլխի մէջ հեղինակն իր գործը երրորդ = վերջին պատմութիւն է կոչում կամ աւելի ճիշդը՝ վերջին շրջանի պատմութիւն: Եթէ այդ Ղազար իմանար, նա իր պատմութիւնը, որը Փաւստոսի շարունակութիւնն է, ոչ թէ երրորդ, այլ չորրորդ պատմութիւն կանուաներ: Ըստ այդմ՝ Փաւստոսին Ղազար համարում է երկրորդ պատմութիւն կամ երկրորդ շրջանի պատմիչ եւ հաւասարապէս Փաւստոսը երկրորդ = միջին պատմութիւն կամ միջին շրջանի պատմիչներ համարում է իր նախորդ մի շաբթ պատմիչներին, որոնց անունը նա չի յիշում, այլ բաւականանում է գրելով “ի ձեռն այլոց գրեցանո: Բացի այդ՝ Ղազարին յայտնի է մի աղքատ պատմական գրականութիւն Գիլք Գրիգորիսի եւ Պատմութիւն Հայոց Փաւստոսի, որոնց շարունակողն է ինքը. ընդհակառակն Ղազարի նախորդը Փաւստոս Գ. գպրութեան Առաջին գլխի մէջ յայտնում է որ բացի յիշածներից հարուստ պատմական մի գրականութիւն կար իրենից առաջ: Ղազար ահա այդ պատճառներով չեր տեսել այդ առաջին գլուխը, երբ գրում եր սոսկ Գիլք Գրիգորիսի եւ Պատմութիւն Հայոցի մասին իր յառաջաբանում: Ուրիշ անգամ մենք բացատրել ենք որ Ղազարի պատմութիւնն ու յառաջաբանը խմբագրուած են յատկապէս յառաջաբանի մէջ անուրանալի է երկու տարրեր ձեռքերի ներկայութիւնը

1958.5-96/

2004

(“Ազգ. Մատեն., ԱԾ, Էջ 98—101). Նոյնը մենք առիթ կ'ունենանք նոր հիմքերով հաստատելու. արդ՝ Փաւստոսի առաջին գլխի առիթով նկատի պիտի ունենալ Ղազարի յառաջաբանի հնագոյն հեղինակին, նրան՝ որը արդի Ագաթանգեղոսի փոխարէն յիշում է Գիլք Գրիգորիսի եւ Բիւզանդարանի փոխարէն Պատմութիւն Հայոց եւ որը իր ձեռքին ունէր Փաւստոսի “Պատմութիւն Հայոց”, իբրև երկրորդ պատմութիւն այն կերպարանքով, ինչ որ համապատասխանում է միայն Ներսէս Վեծի պատմութեան՝ պատմուած արդի Դ. գպրութիւնից սկսած:

ՅՈՒՐՈՐԴԻ. Առաջին գլխի ցուցումը միջին պատմութեան մասին սխալ են հասկացել քննադատաներն ու Հ Մատիկեան: Միջին պատմութեան սկիզբը նրանք համարում են Թագէոսից՝ այն է Արքարի զրոյցից, բայց սխալուում են. առաջին գլխի վերնագրի մէջ Միջին պատմութեան համար գրուած է. “Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թագէոսի Առաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին. կանոնք ժամանակադիր մատենից” . Նոյն վերնագրը ցանկի մէջ տարրեր խմբագրութեամբ հանդերձ պահել է “յետ քարոզութեան” բառերը. “Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թագէոսի Առաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին որդույ Թորդումյո: Ուրիշ անդամ պիտի ցոյց տանք որ Փաւստոսի բնագրի մէջ բացակայել է վերնագրերի ցանկը եւ նոյն իսկ հրեւէ վերնագրի պատմութեան ընթացքում չի եղել.

այլ բոլորը յետին խմբագրութեան գործն է: Վերսիշեալ՝ առաջին գլխի վերնագրի տարրեր խմբագրութիւններից, որ Փաւստոսի յետնադարեան խմբագրողն ուրեմն եւ առաջին գլխի հեղինակի գրչի գործն է, երեւում է, որ միջին պատմութիւնը իր մէջ չի ամփոփում առաքելական աւանդութիւնը, այլ միայն այդ աւանդութիւնից զկնի: Այդ վերահաստատում է առաջին գլխի հեղինակը այդ գլխի վերջին նախադասութիւնով եւ ամբողջ երկրորդ գլխով, որը միջին պատմութեան մի մասնաւոր ամփոփումն է. ահա այդ նախադասութիւնը. “Զի մի ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երեւեցի հուն մի, նշանակեցաք՝ զօր օրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կատարումն բովանդակութեան¹ այս ինչ, որ ինչ յետ այսորիկ կարգի, աստ պատմի աստէն առ սմին:, եւ իսկոյն երկրորդ գլուխը՝ իրեւ միջին շրջանի սկիզբն՝ յիշում է կցկտուր խմբագրութեամբ Գրիգոր Լուսաւորչին, Տրդատին եւ Արիստակէսին: Այդտեղ բացակայում են Թագէսի, Սանատրուկի, Աբգարի, Բարդուղիմէսոսի անուններն, այսինքն այն բոլորը ինչ որ նախ քան գր. Լուսաւորիչը յայտնի է եւ ինչ որ կազմում էր քննադատների հասկացած միջին պատմութիւնը: Ուրեմն Առաջին գրքի հեղինակը գրել է մի պատմութիւն, որը վերաբերում է նախալուսաւորչեան շրջանին եւ ոչ նախաքրիստոնէաւ-

¹ Այս տեղ հրատարակութիւններն ունին վերջակատ:

կան շրջանին, ինչպէս Հ. Մատիկեան եւ ուրիշներն են ենթադրել: Այդ սխալի հիմքը, ճիշդ է, նոյնպէս առաջին գլխի մէջ է, ուր երկրիմի իմաստով խմբագրական ձեւը նշանակում է թէ Թագէսուից սկսած եւ թէ Թագէսուից յետոյ բայց այդ երկրիմութեան գէմ խօսում է, ինչպէս ասացինք, նոյն գլխի վերնագրիը եւ մասնաւանդ երկրորդ գլխի բովանդակութիւնը: Ահա այդ երկրիմի խմբագրութիւնը “ի քարոզութեանէն Թագէսուի Առաքելոյ եւ նորուն յելից եւ ի մարտիրոսութեանէն մինչեւ ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի եւ իւրզյ հանգստեանն եւ յառաքելասպան Սանատրկոյ արքայէն մինչեւ յակամայ հնազանդելն հաւատոցն եւ ի նորուն հանդստեան Աբգային Տրդատայ այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան:”

ՀԻՆԳԵՐՈՐԴ. Վերսիշեալ երկրիմի ձեւը պահի է մի վկայութիւն այն շրջանի մասին, թէ երբ է կատարուած խմբագրութիւնը: Այդ տողերի մէջ երկու կերպ, քաղաքական եւ եկեղեցական որոշումն կայ շրջանների մասին. եկեղեցական որոշմամբ յիշուում են Թագէսուի եւ Լուսաւորչը անունները, իսկ քաղաքական որոշմամբ ոչ թէ Աբգար եւ Տրդատ՝ ինչպէս համամիտ է եկեղեցականին, այլ Աանատոր ու կ եւ Տրդատ: Այս ցուցումը ինքեան անհասկանալի կը մնար, եթէ նկատի չառնուինք Կարրիերի և Աբգարի Զօրոյցը, որով պարզուած է որ Հայոց առաքելական շրջանի պատմութիւնը մի շարք զարգացման շրջաններ է ունեցել, մերժ

մէկ կամ միւս առաքեալի, եւ մերթ մէկ կամ միւս թագաւորի անուան շուրջը խտացնելով աւանդութիւնը: Փաւստոփ առաջն գլխի մէջ Սանատուկի անուան հանդիպելը փոխանակ Արդարի¹ այդպիսի զարդացման շրջաններից մէկի մացորդն է հանդիսանում, որով Փաւստոփ խմբագրութեան ժամանակը գէթ մօտաւոր կերպով կը նպաստուէր բանասիրութիւնը որոշել, եթէ ի նկատի առնուած լինէր այդ հանդամանքը: Այդ հանդամանքը միակը չէ. Փաւստոփ երկրորդ գլուխը, որ ամփոփումն է միջն պատմութեան մասին, եւ որը պիտի ունենար արդի Ագաթանգեղոսի եւ Զենոբի յիշատակարանների հետ մերձաւոր կապ, այդ երկրորդ գլուխը իր վերջն տողերի մէջ յիշում է Գրիգոր Լուսաւորչի եւ Արիստակէսի մարմինների ամփոփումն Թորդանում եւ Թիլ Աւանում: Ուրիշ տեղեր Փաւստոփի պատմութեան մէջ յիշուած է Թորդանն՝ իրեւ Լուսաւորչի հանդստատեղին՝ Վրթանէսի (Գ. 11) եւ Յուսիկի (Գ. 12) մահուան եւ Դանիէլի ճգնութեան առկիթով (Գ. 14): Բայց Ագաթանգեղոսի մէջ չէ յիշուում Թորդանը իրեւ Լուսաւորչի հանդստատեղին եւ լուած է Լուսաւորչի մահուան եւ թաղման մասին: Լուսաւորչի Նշանարների գիւտի յետնագարեան աւանդութիւնը չէ միայն այդ երեւոյթի պատճառը, կայ նաեւ աւելի հիմնական հարց. Սրբոց Նշանարների պաշտամունքը միջն դարերում ծայրայեղ չափերի հասաւ, բայց գլխաւո-

¹ Աբգար անունը Փաւստոփ ու մի անդամ չի յիշում:

րապէս պատկերամարտութեան շրջանում այդ պաշտամունքի դէմ գրականութիւնը հարստացաւ: Դանիէլ ասորւցն պատմութիւնը այդպիսի գրականութեան արձագանքն է. Լուսաւորչի, Արիստակէսի, Վրթանէսի եւ Տրդատի ոսկորների պաշտաման հարցը խոչեմութեամբ լուութեան տալուց եւ հողի տակ թաղուած լինելը արձանագրելուց յետոյ, Փաւստոփի պատմութեան խմբագրողը Դանիէլ ասորւց Նշանարների առիթով համարձակօրէն գաւանաբանական-Նշանարյարդական հարցը եւ յարուցանում եւ լուծում է: Դանիէլին “Ճոպան ի փողը եղեալ՝ խեղդամահ” անելուց յետոյ, “բարձին զմարմին նորա բազմութիւն մարդկան, որք տեղեակ էին նմա, եւ գիտէին զնա. եւ կամեցան մեծարել զնա ընդ ոսկերս սուրբ վկայիցն Քրիստոսի: Ապա նմքն յայտնեալ երեւեցաւ առն սրբոյ աշակերտին իւրում, որոյ անուն կոչէր Եպիփան, զի մի ի պատիւ առցեն զոսկերս նորա իրեւ զայլոցն. այլ տարցին ի տեղին՝ ուր նմքն հրամայեաց եւ ծածկեցնեն ընդ հողով: Զի այսպէս յայտնեալ բարբառեցաւ նոցա. — զի եթէ տէրունական Մարմինն, ասէ, ի գերեզմանի ծածկեցաւ աւուրս երկուս մինչեւ ցօրն երրորդ՝ յորում յարեաւ առ Հայր իւր, որչափ եւս առաւել պարտ է մերում հողեղէն մարմինս ընդ հողով ծածկել: Ապա բարձին զմարմին նորա սուրբ սիրելեք իւր աշակերտ... եւ ընդ նոսա պաշտօնեայք բանակին եւ գնացին տարան եղին զմարմինն ի տեղւոջն՝ ուր յառաջադոյն էր կայեանք Խցկանն

իւրոյ յերկրին Տարօնոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, եւ այլն (գ. 14):

Փաւստոսը խմբագրողի այս պատկերամարտական պրոպականդը անբաժան ներքին շաղկապ ունի այն խնամոտ շեշտի հետ, որով նա Լուսաւորչը եւ իր որդոց “զովկերսն” հանդուցանելու եւ միայն նրանց յիշատակը կատարելու պատմութիւնն է արել գ. 2, 11, 12 եւ 14 մէջ:

Ա. Ե Ց Ե Բ Ո Ւ Դ. Ա. Ա. Ե յետնադարեան խմբագրութեան ըրջանն է մատնանշում առաջին գլխի մի ուրիշ ցուցումը. ովկ կարդայ Փաւստոսի այդ առաջին գլուխը, նա իսկոյն կը տեսնի, որ նրա հեղինակի ժամանակ Հայոց պատմական գրականութիւնը աղքատ չէր, մինչեւ անգամ հարուստ էր. բազմաթիւ ըրջաններ, ինչպէս են Թագէոս, Սանատորուկ, Գրիգոր, Տրդատ, “Վարք լաւաց եւ հակառակ ընդդիմակք այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան. որ միջին ինչ եղեւ, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ: Հայր Մատիկեան Փաւստոսի նախնական պատմութիւնը համարում է Ե՞րդ գրու մէջ գրուած էջ 9, իսկ ապա էջ 28 այլապէս. “Փաւստոսի պատմութեան նախնականը՝ ուրիշ լեզուաւ ըլլալըն՝ մեր ցայժմ ըսածները այնչափ վճռական չեն, որ կարենանք ստուգապէս եզրակացընել թէ Փարագեցւոյ ժամփնակ անոր Ըստաջին Պատմութիւնը հայերէն լեզուաւ կար եւ Փարագեցւոյ աչքէն վըիպած է:” Բայց ինչպէս էլ լինի Հ. Մատիկեանի կարծիքն այդ տուլերի մէջ, պարզ է Փաւստոսի Առաջին գլուխների ցուցումից, որ այնտեղ ենթա-

դրուած են առաքելական, արջամական եւ պատկերայարդական վարիանտներն այն զըսյոնների, որոնք ապա մերթ խմբագրուեցին ի մի եւ մերթ ուրոյն գիրքով պահեցին իրենց գոյութիւնը մինչեւ մեր օրերը: Ինչպէս այդ բազմապիսի աւանդութիւնների ըրջանը Ե՞րդ դարից դուրս է, նոյնպէս եւ Փաւստոսի առաջին գլուխը: Կման յիշատակութիւնը բազմապիսի պատմական յիշատակարանների մասին կարդում ենք նաեւ Փարագեցու Յառաջաբանի Բ—Ե պրակների մէջ (Էջ 2—7 Պատմագիրք Հայոց). բայց չենք տարածուածում որ այդ պրակները յետնադարեան կցկցումն են, որովհետեւ Ա պրակը իր հնութեան պարզ պատկերով անկասկած է դարձնում վերջին պրակների յաւելեալ լինելը, ինչպէս բացատրել ենք ուրիշ տեղ (“Ազգ. Մատ.՝ Ալ, Էջ 98—102): Փաւստոսի առաջին գլխից ցուցումը համապատասխանում է Ղազարի Բ—Ե պրակներին, ուր ասուած է “Ընդ բազում ձառս մատենից առաջնոցն պատմագրացն Հայոց անցին եւայլն, ուրեմն սրանց նման նա էլ հարուստ պատմական գրականութեան ըրջանի պատկերն ունի, թէպէտ պիտի այդ պատկերը նա չունենար, եթէ Ե՞րդ դարի գործ լինէր, ինչպէս չունի իսկապէս Ղազարի Ա պրակ՝ Ե՞րդ դարուց մնացած հատուածը:

ԵՕԹՆԵՐՈՒԴ. Թոռնեանի, Ա. Յանեանի եւ մանաւանդ Նորայր Բիւզանդացու շնորհիւ առհասարակ Փաւստոսի լեզուն եւ մասնաւորապէս նրա առաջին գլխի ոճաբանութիւնը ուկե-

գարեան է համարուած՝ 405—462 թուից։ Հայր Մատիկեանն այս թիւը համարում է քիչ եւ ֆաւստոսի թարգմանութիւնը ոչ-հայերէն մի լեզուից ընդունում է Երդ դարի վերջում եւ կամ Զրդ ի սկզբում։ Արդ պէտք ենք այդ խնդիրը եւս լուծել, երբ ֆաւստոսի առաջին գլուխը համարում ենք Ը. դարու խմբագրական։

Ասկեդարեան լեզուով եւ Կորիւնի ձեռքով կատարուել է ըստ Նորայրի Մակաբայեցոց գրքերի թարգմանութիւնը, որոնցից մի գլուխ առաջնորդ եւ դասական թերեւս նաեւ սրբազն օրինակ է հանդիսացել ֆաւստոսի, Պաղարի, Խորենացու խմբագրողների եւ Սերէսու Պատմչի համար։ Բ. Մակաբայեցոց երկրորդ գլուխ մէջ պատմուած է որ ոմն Յասոն Կիւրենացի Հրէից պատմութիւնը գրել էր հինգ դպրութեան մէջ, բայց նրա գրքերը դժուար էին կարդացում, «ծանր, թանձր, խոր, էին։ Մի անյայտ անձն այդ նկատում է եւ խմբագրում հինգ դպրութիւնը մի գրքի մէջ։» Հայեցաք մէք ի խուռն մեծաթիւ համարոյ բանիցդ, եւ որ ի ներքս ծանրութիւն թուիցի՝ որ կամիցին միսել ի բանս մատենիցդ այդրէն ի դոյն թաւալել վասն թանձրութեան հիւթոյ Խորութեան բանիցդ։ Հոգացաք մէք առնել ընթերցանելեացն զբօսանս խմաստնոցն յիշատակ առանց աշխատութեան եւ ամենեցուն անեղծ անարատութեան։» Բ. Մակաբ. Գլ. Բ. 25—27։ Երկար համեմատելով Յասոնի խմբագրի այս յառաջաբանով Բ. գլուխը մեր պատմիչների հետ, տեսնում ենք, որ նրան

ամենից ընդարձակ նմանւում են Սերէսու եւ Պաղար, յետոյ՝ հմուտ այլայլման շնորհիւ համառու եւ անձանաչելի է դարձած ֆաւստոս, իսկ Խորենացին գրեթէ ինքնուրցն եւ ինքնանը-ման։ Եւ այդ կարգը միեւնոյն նրանց խմբագրութեան ժամանակագրական կարգն է նախ Սերէսու, ապա Պաղար, յետոյ ֆաւստոս եւ ի վերջո Խորենացի։ Ահա Մակաբայեցոց յիշած գլուխ եւ մեր պատմիչների համեմատութիւնը։

Բ. Մակաբ. Բ. Սերէսու Խախեր- Դագար Փարպեցի
20-24-26: գանգ, 1851, Տվիլ. 1904,
էջ 42-3: 2-3, 5:

Այլ վասն Յու- Արդ զժամա- Սա (Ագաթան-
գայ Մակաբեանց նակո թագաւու- գեղոս) զնուա-
եւ եղբայրն սորին րութեան չա- զութե թագաւու-
եւ տաճարին մեծի րագործին Յաղ- րութեան Արշա-
որդութեան եւ կերտի եւ եթէ կունոյն Արտա-
սեղանոյն նաւա- որպէս նա կամեր ւանայ եւ զզօրա-
կատեաց, եւ կամ զլսուածայինն նախ Ստահրաց-
վասն ընդ երեւ- եղծանել կարգս ւոյն Արտաշրի-
եալ Անտիոքայ, եւ կամ որպէս սրդւոյ Ստասանայ՝
եւ կամ ընդ քա- քաջ նախարա- ստուգապէս յօ-
ջահայր որդի նորա րացն Հայոց եւ ըինուածով կար-
ճակատամարտու, նախանձաւորն զեալ գրոշմաց.
կամ որ ինչ յերկ- Աստուծոյ նա- զքինափնդու-
նից յայտնու- հապետն Մա- թիւնն Խորուվու-
թիւնք եղեն. այն միկոնէից տանն եւ զտարակու-
որ ինչ վասն քա- կարմիրն կոչե- սանս գոռողա-
ջութեան պնդու- ցեալ Վարդան, ցեալ Ստահրաց-
թեան օրինացն հանդերձ միա- ւոյն. զիսրհաւրդն
եւ կամ որ զքա- գունդ սպառա- եւ զիսուտմունան
ջութիւն ի մտի զէն նիզակակից գտորի հնարս
գնել եւ սակա- ընկերաւքն եւ յազագս մահուն

Բ. Մակար. Բ. Սեբէսո Նախնիք- Ղազար Փարպեցի
20-24-26: գանը, 1851, Տիկի, 1904,
էջ 42-3: 3-3, 5:

ւուք զբազումն որ զաւրաւքն իւ- Խոսրովիւ . զիսու-
զաշխարհս յաշս բեանց կազմեալ բամանկութեանն
զնէին զիսուժաւ զինեցան ի պա- զմտածութիւնն
դուժ ազգս հաւ տերազմ, առեալ Անակայեւ զսպա-
լածել, կամ զհոյ- ի ձեռն զվա- նումն ի նմանէ
ակապ ընդ ամեւ հանն հաւատոյ զնորուն Խոսրո-
նայն տիեզերս եւ զիեցեալ իր- վու՝ նենգաւառ
զլքեղ տաճարն ըեւ զլրահ ամ- Խարէութեամբ
վերատին շնել բութեան զնա- զմատնումն, յայնմ.
կամ զմեծ քաւ խանձն Աստու- հետէ զաշխարհիս
զաքն ամենայնիւ ածային բանին. Հայոց ի ձեռս
յամենայնէ յա- գոզցես թէ ա- թագաւորու-
զատութիւն հաւ ռաջի աշաց իսկ թեան օտարի ..
սանել, կամ զի ականատես դէմ զփախուցանել
ամենայն քաղ- յանդիմն տե- դայեկացն զորդիս
ցրութեամբ հե- սանելով զի վե- Խոսրովիւ . առ ի
զութեամբ խաւ րութիւն առ ի
զաղութեամբ նոյա զպսակն: յապրումն. զհըս-
Տեառն Աստուծոյ լլասն որոյ ար- կայաբար միւսան-
ընդ մեզ հաճ լի- համարհեալ գամ զգարձն Տըր-
նել: — զմահ եւ առա- գատայ եւ զյաղ-
ւել լաւ համա- թող մարտիւ ու-
րեալ տեսանել նելն զիւրոյին ըզ-
ի վերայ Աստու- նախնեացն քա-
ածային պողո- ջաբար զթագա-
տային: Եթէ ո՞ր- ւորութիւնն.
պէս ի վերայ նո- զդիմեն առ նա-
ցա էին զաւրքն սրբոյ Գրիգորի
պարսիկ սաստիկ զչեշտ պաշտաման
բռնութեամբ եւ տենչիւ, զնահաւ-
կամ ո՞րպէս ի տակութիւն նո-
դիմի հարեալ ըին սրբոյն. չւ
զիւրեանց կառ թէ ո՞րպէս տաւ-

Բ. Մակար. Բ. Սեբէսո Նախնիք- Ղազար Փարպեցի
20-24-26: գանը, 1851, Տիկի, 1904,
էջ 42-3: 2-3, 5:

տարեցին զնաւ բաւ անպատումն
հատակութիւն: եւ անբաւ բաւ
իւ կամ ո՞րպէս զում չարչարա-
ի ձեռս հեթա- նացն. զառաւե-
նոսաց լմբունեալ լապէս օզնակա-
սուրբ վկայքն նութիւնն Քրիս-
քիստոսի՝ կա- տոսի, որ ցուցաւ
տարեցին զնաւ ի վերայ սրբոյն,
հատակութիւնն ի հիացումն դեռ
իւրեանց յԱպր եւս մոլունալ
Շահը մերձ ի մարդկան. զհամ-
նիւշապուհքա- բերութիւն տե-
զաքի. ի տեղ- ւողութեանն այն-
ոչն որ կոչ չափ ամս ի վերա-
թէաբունի: — պին, ըստ կան-
խագէտ տնտե-
սութեանն վեր-
նոյն, որ պահէր
զնահատակն ի
գործն Հայոց.
զեկս սուրբ կու-
սանացն ի գործն
Հռովմայեցոց
քաղաքէն (եւ այլն
անընդհատ) —
— Զայն ամեւ — Այն ամեւ — Զայն ամեւ,
նոյն որ նու դանե նոյն է յեւն այլոց ես առաւել քան
հոմէն յեւն Յասու հրեցու որպէս զսոյն գիտութիւն,
նեայ կիւրենաց ցուցանէ նոյն իսկ յիւրում հաստա-
ւոյ ի հինգ գրուխս պատմութիւնն: տուն եւ ան-
դպրութեան ցու- Բայց —
ցեալ է, —
սիսալ կարգադրու-
թիւնն պատ-
մեաց մեղ եռանելի

Բ. Մակար. Բ. Սեբէոս Նախներ- Կազմար Փարպեցի
20-24-26: գանը, 1851, Տվիլ. 1904,
էջ 42-3: 2-3, 5:

այրն Աստուծոյ
սուրբն Ադա-
թանգեղոս:
— զայս ա մենացն
չունացած է ժ առաջ՝ որ ի Պերո-
հ լունիս հրավարտու- զի ժամանակին եւ
իս իսրահ է ի քրիզ զեալ շարութիւն
շուշանէւ: եւ զար ի խոս-
րովայ զապըս- թեան Երկրորդ
տամրութիւնն գրոցն աճեցուցա-
զԱրդանայ եւ նել յառաջ եւ
զզաւրացն պար- գրել յայնմէտէ
սիցն զապստաւ- զեղեալս յաշխար-
բեն ի յՈւ- հիս Հայոց: Բա-
մզգիեւ. զմահն զում զգուշու-
Որմզգայի. եւ թեամբ գրել եւ
զթագաւորելն կարգել մի ըստ
Խոսրովայ, զմա- միոչէ զամենայն
հըն Մաւրակյ եւ զհոգեւորացն զա-
զթագաւորելն ուաքինութիւնս
Փոկասայ. զառ- եւ զարանց քա-
նուն Եգիպտոս- չաց զլաւութիւն:
սի. զկոսորածն — (Պարակ Ա.
Ազերսանդրի. էջ 2) բուռու շն-
զդիմելն Հերակ- Յնս յայուղին ժոր-
զի ի կողմանս իսրե-որ . . . կար-
հիւսիսոյ առար- գել մի ըստ միոչէ
քայն թաէտա- զիրս եւ զգործս,
լացւոց. զյու- զբաղմայեղանակ
զարկումն ան- տիպունս Հայ-
հուն բազմու- աստան աշխար-
թեանն ազգաց. հիս, բաժանմանց
զասպատակն յերկուս թագաւ-

Բ. Մակար. Բ. Սեբէոս Նախներ- Կազմար Փարպեցի
20-24-26: գանը, 1851, Տվիլ. 1904,
էջ 42-3: 2-3, 5:

Ցունաց յԱտըր- որութիւնս (եւ
պատական, զառ այլն անընդհատ)
եւ զաւար եւ Եւ դիւլ զայ-
զդարձն ընդ փայ- մայն մինչւ օք
տակարան (եւ ուղիւն մարդու-
այլն անընդհատ) նութեան Հայոց
— Զայս ա մենացն Ա մանա-
կացոց է յնան հուցեցի յայն ուել-
իրոյն այսուրէի ի առա ուղան վաստա-
նաւուուր Ա մ վե ինց պատրութիւննաց:
ուստանէւ:

Այս բոլը նմանութիւնները, որոնք պատ-
մագրովների փոխադարձ ազդման հետքերն են,
Փաւստոփի պատմութեան խմբագրովը ամփո-
փել է այսպէս — Դ. գպր. գլ. Ա. Ի քարո-
զութենէն թագէսոսի առաքելոց եւ նորուն յԵլից
եւ ի մարտիրոսութենէն մինչեւ ի կատարումն
վարդապետութեանն Գրիգորի եւ իւրոյ հան-
գըստեան եւ յառաքելասպան Սանատրկոց ար-
քայէն մինչեւ յակամայ հնազանդելն հաւա-
տոցն եւ ի նորուն հանգստեան արքային Տըր-
դատայ զանցեալ իրացն զառաշնոյն զվարսն
լաւացն եւ որ զնոցուն հակառակ ընդդիմակաց
— այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան: Բայց
եւ մեք ի մերում աստ եղաք փոքր ի շատէ ի
կարգի պատմութեան, ոչ զանց արարեալ թո-
ղաք վասն պատշաճ իրաց կարգին:;

Այս կերպ ահա չորս պատմիչները իրենց
նախորդ շրջանների մասին խօսելուց եւ իրենց

պատմութեան սկիզբը միակերպ ձեւերով նաև
խորդ պատմութեան հետ շաղկապելուց յետոյ,
նրանք բոլորը նյնպէս միակերպ զբաղւում են
իրենց աշխատութեան գժուարութեան, ստու-
գութեան, ամփոփման խնդիրներով եւ լեզուա-
կան փոխառմամբ կրկնում են իրար մտքերը, որ
երեւում է հետեւեալ համեմատութիւններից,
ուր անմասն չէ հանդիսանամ նաեւ Ագաթան-
գեղոսի յառաջաբանը: Կախ ամփոփման խնդիրը.

Բ. Մակար. Բ. Սեբէոս 1851, Փաւստոս Գ. Ա.
24, 29, 33: Էջ 44, 1:

Զայս ամենայն Զայս ամենայն Այս ամենայն
չանացուք ի մի կամեցայ ի ձեռն ի ձեռն այլոցն
զլուխ հրովարտա- զրոյս այսորիկ զրեցան: Բայց եւ
կես հարճ է հարճա- հարճաւուր ձեզ մեքի մերում՝ ասու
ցուցանել: Զնըշ- վիպասանել:
գելն եւ զծշմար- Եղաք հարճ- ի կարդի պատմու-
տեին՝ զայն առաջ- ուրիւր զար- թեան:
նոյն թողաք, վեր- դեաց ժամանա-
վու եւ վետուելն կաց զաղետիցս
եւ զարժանութեան վերաբերութեան
ի համարու հայու- զամն եւ զա-
շանել, զայն մեր ու ուր հինդ թա-
դանդաղութեան:

Բայց սակայն տակելով:

Եւ այս անագո-
րոյն մտաց է,
զծառս մատենին
յառաջագոյն եր-

1 Հմմտ. Խոր. Բ. կէ. Կարճ ի կարճոյ իմն անցանե-
լով աջող քարտուղարն Տրդասայ Ագաթանգեղոս փոքր
ի շատէ պատմէ զմահն Արտաւանայ:

Բ. Մակար. Բ. Սեբէոս 1851, Փաւստոս Գ. Ա.
24, 29, 33: Էջ 44, 1:

կայնել, եւ զմա-
տեանն է հւեղին
համարու իսրաւ-
սոր պարհել:

Երկրորդ՝ աշխատութեան գժուարութիւնը.

Բ. Մակար. Բ. 27: Սեբէոս 1851, Ազաթանգ. Թիֆլ.
էջ 1: 1882, էջ 10-11:

Եւ մեզ որ Եւ եղեւ ոչ Հարկ վատանգի
զաշխատութիւնս է ի ամայական պէտ ստիպեաց զմեզ
զայս յանձն աւ որոյէ վարժ իսուս այսպիսի Յան Հառ-
ուաք վանն հաւ շահի լոն ուսուրա- ուսից¹ . . . ան-
մառուս բանիս, մի հրեւ ժամանակ ձամբ անձին մա-
դիւրին ինչ լոն եւ զնախնի քա- տուցանել: Մեծ
համարիչին, կամ չացն ձեռնարկե- եւ բազում կա-
սակաւ ուրունց եւ լով գրոշմել վի- եղեւթողութիւն: Նոցիկ որ յետ մեր
ժամի: Ալան գայցեն զկարգո
բազմացն համու-
թեանս զան յանձն
ուրուն:

Ոչ եթէ կամք
ինչ յօժարեցաք
հաւանել: Զայս
Յան յանձն կալու
անկեւալ ի վաճա-
ռականութիւն
բանց. ի խնդիր
եղեալ եւ իսու-
սիւն ի մէջ բե-
րեալ զկարգ
պատմութեան:

1 “Զայն վաստակի բառախմբի գործածութիւնները
ուսու Կորայր Բիւզ., Կորիւն . . . էջ 174—176:

Այս համեմատութիւնը երկու նշանակութիւն եւս ունի. նախ՝ նկատելի է ոսկեգարեան յանձն առաք, դարձել է ցեխադարեան ձեռնարկելու. եւ երկրորդ՝ արդարանում է Միջըդատանի ենթադրութիւնը (թէ Սեբէսով զանստարագրել բառը, որ Հ. Մատիկեան նշանակում է = զանսուտ գրեալ, իսկապէս սուրբ գրքի ջանդ բառի եղծումն է ստորագրել բառին կցմամբ (Սեբէսով 1851, էջ 15): Մակաբայեցւոց այս գլխի մէջ ջան բառը հանդիպում է հետեւեալ անդամները — 24 “Զայս ամենայն հրովարտակիս ջանացուք ի մի գլուխ հրովարտակիս կարճ ի կարճոյ ցուցանել”:
27 “Մի՛ դիւրին ինչ ջան համարիցիք”:
28 “Աւան բազմացն հաճութեան ջան յանձն առաքութեանի մի սեղմ հատուածի մէջ երիցս կրկնութիւնը բնականօրէն ազդել է Անանունի խմբագրողի վրայ, իսկ Ագաթանգեղսի եւ Անանունի կապը պարզ է:

Երրորդ՝ աշխատութեան ստուգութիւնը.

Բ. Մակաբ. Բ. 29, 31: Դադար 1904, 8իւն. 2/21, 3/30:

Զէւրեւ եւ գլուխութեան գատի . . . յանդուած եւ զայն առաջնոյն թողաք: յուրայէ կարդաւութենէ Հարցանելն եւ փորձելն եւ առաջին գրոյն: քննելն եւ զիետ վարել կարծեցին ոմանկը բանք հշմարտութեան բանիցն եւ ինչ ոչ յարմարք եւ գիշուրին խորհուրդա խորապէս պողք, որպէս առաջնոյն գիտութեամբ ի վեր բեր հետեւ թանգեղոսն կոչեցելոյ: այնց դպրութեանց ի նմանէ ինդրելի է:

Չորրորդ՝ պատկերաւոր արտայայտութիւնը Մակաբայեցւոց գրքերից անցել է Փաւստոսին.

Բ. Մակաբ. Բ. 30:

Փաւստոս Գ. 1:

Զկարճառութ բանն ի Բայց զի մի՛ ի միջի մերոյ համառութ կայուցանել պատմութեանս ընդհատ զայն մեք ոչ դանդաղեցաք: երեւեցի հուն մի, նշան Ուղիւր վասն հասարակաց նակեցաք լու օրինակ աղիւս շնութեան ապարանից՝ մի կարգած ի մէջ որմոյն բազմաց զգործ բաժանեալ, շինուածոյ, ի կատարութեան բայց սկիզբն եւ կատարածն ընուածոցն ի բաւն ճարտարապես անդր հայի. այլ շենքեն եւ գունելն եւ արձնելն եւ նկարելն՝ այն սովորական հմտութեան եւ այլն զարդարիչ անդր հայի. ըրիւնի, Ագաթանգեղոսի, Սոյնուր եւ մերս. հարցանելն եւ այլն: Սակաբայեցւոց հետ, տես Ն. Բիւղնադ, Կորիւն . . . էջ 46—50):

Հինգերորդ՝ լեզուական կրկնութիւնները բաց ի վերեւի համեմատութիւնների մէջ հանդիպածներից.

Բ. Մակաբ. Բ.

• 33. Արդ ասորի սկիզբն Փաւստոս՝ Այս ինչ որ արացուք բանիցդ պատահ ինչ յետ այսորիկ կարգի մել:

ասոր պատմի ասորին առ

Բ. 33. Արդ աստի սկիզբն Փաւստոս՝ Խոստութեան արացուք բանիցդ պատահ խոստացելոյց, Զորրորդ, մել խոստացելոյց:

Հինգերորդ եւ վեցերորդ խոստաբանութիւն:

1 Կերպիսեան Դպրոցի ձեռագիրը №. 29 չորրորդ Փեստաց ՊԵՏՐՈՎ

Բ. Մակաբ. թ.

Թ. Արշակ Արքայի կողմէց
գրուագի խոստաբանեալ
պատմութեանն Առվլսէսի
Խորենացւոյ (էջ 76, Պետ
աերը. 1887):

Ք. 23 Եւ 28. Վասն բաղ-
մացն համութեան ջան
յանձն առաք: Տեառն
Աստուծոյ ընդ մեզ համ
ինել:

Արդ աստիք ոիկէն՝
արտասցու բանիցդ պատ-
մել խոստացեսց, այս-
չափ ինչ օդիւնցու յու-
սակէն անդր:

Արքայի Այլն Փաւատոս
Համապիսի ինչ արդեօք ան-
յանպիս լողաց բան կար-
գէր ի պատմութեան իւ-
րում (1904, Տիկ. 4/29):

Սէբէստոն՝ Բայց ես նախ
արտասցու լուսու յահեղն ար-
քայ եւ յարի այրն ուսուց
սուել նախ զնախնեացն
պատմութիւնս ուստի եղեւ
ոիկէն ամենայն երկրի շե-
նուածոց լրմանց եւ անտի
ի այն պատուաստելոյ յու-
րէլ զգըուցակարգութեան
վէպս հակայազնացն (1851,
Պոլս 2):

Բ. Մակաբ. ժ. 38-39: Դազար պատմազիրը Հայոց
1904, Տիկ. 2/16-19:

Ե. Այն, որ ինչ վասն նիւ-
կանաւրայ իրացն Խոսք
են, այսչափ. Եւ յայնց
ժամանակաց յորում
հասու եղեն հերայեցիք
քաղաքին է ան լոյրէ եւ
ես զբանս կախմանեցի:

Եւ զրել զայս ամենայն
մինչեւ ցօր սկզբան մարզ-
պանութեանն Հայոց Աշ-
հանայ Ամամիկոնէից տեա-
հասու եղեն հերայեցիք
Հայոց եւ մեծի զրավարին
գագարեալ հանդուցից յայնմ
ուղարկ զբան վաստակոց
պատմութեանցս այսոցիկ:

Դպրութեան սխոստավանութիւնն բառի տեղ ունի խոստա-
քանութիւն:

Ա. Մակաբ. ժ. 23-24:

Փաւատոս, խոստաբանու-
թիւն նախագիտնելի:

Ն. Եւ այլ ինչ բանք որ
իցեն զՅովհաննէ վասն ցիւրաբանչիւր եւ յաշխար-
հարութ պարերազմաց իւր հէս +ահանայալութուց սրբոց
ուրաց ունաւութեանց, իւր շէլ արանց Աստուծութոյ եւ թա-
նուածուց պարսպաց կամ գաւորաց տէրանց աշխար-
հարութ բարութեան — հաց արշակունեաց եւ զօ-
այն ամենայն գրեալ է բավարաց որոնց անուածուց
ի մատեանս քահանայից, ունչ նախաբարաց եւ խա-
յորմէ հետէ եկաց նա զաղութեան եւ պարերազ-
քահանայապետ զինի հօր մն եւ լինութեան եւ աւե-
րածոյ եւ ուրութեան եւ անօրէնութեան եւ ուս-
ուութ պարագանեան եւ ամ-
բարշտութեան:

Բ. Մակաբ. թ. 25-27:

Ազաթանգեղոս 1882,
Թիֆլ., էջ 15:

Կ. Զի հայեցաք մեք ի
խուռն մեծաթիւ համա-
րոյ բանիցդ եւ որ ի ներքս
ծանրութիւն թուրիցի,
որ կամիցին փէլ ի բան
հարութից. այդբէն ի դոյն
թաւալին վասն թանձ-
րութեան հիւթոյ իս-
րութեան բանիցդ. հո-
գացաք մեք առնել
ընթերցանելեացն զրօ-
սանս իմաստացն. յիւ-
շատակ առանց աշխա-
տութեան եւ ամենե-
ցուն անեղծ անարատու-
թեան:

Հայոց խմբագրական յիշատակարանների
փոխադարձ ազդման նմուշներից, որոնք խմբա-
գրական գործի վկան են.

Փաւստու Գ. ա.

Հազար 1904, Տիկի.
Էջ 3/32 եւ 5/11:

Ը. Բայց եւ մեր ի մերում Յերկուացեալ հարկաւ-
աստ եդաք փոքր ի շատէ որին չասել զայնպիսի ան-
ի կարգի պատմութեան; Պարուած իւրիւած թիւղան-
ոչ զանց արարեալ թու- գացւոյ ռւսելըց: Սա (Վա-
զաք վասն պարուած իւրաց հան) . . . առաւել եւս
իւրիւն:
զայս (պատմագրելն) ի դեպ
Պարուած համարեցաւ:

Հազար 1904, Ազաթ. 1882,
Փաւստու Գ. 1: Տիկի. էջ 397 (վարդա-
պետութիւնից):

Ա. Զանցեալ իւ գրել եւ կար- Առաւել եւս
րայն լարածնեցն գել մի բատ միոնց զօրինակս տու-
շակառակ լաւացն զանցն զիու եալ համբերու-
եւ որ զնոցուն գեւորացն զաւ թեանցն եւս այ-
հակառակ ընդ- ռաքինութիւնս լոցն եւս տարին-
դիմակաց այն եւ զարանց քառ թղթովք՝ լարածն-
ամենայն ի ձեռն չափութիւններից նոցն լարան իրերւ
այլոցն գրեցան:
իւնա: Որպէս զի կաղապար արկա-
զիոգեւորացն սէին, թէ օրի-
ւնուրէ լուրան լուս նակ առէք, եղ-
եալ բազմոււ բարք, զերկայն-
թեան ժողովը- մտութիւն մար-
դոցն, նմանողք գարեիցն:
լինել ցանկաս-
ցին մարդիկ ճրգ-
նութեանց նու-
ցա:

Փաւստու Նախազիտելի Ազաթամնգ. 1882, էջ 10:
եւ Գ. 1:

Դ. Այսինքն կարգ անցեւոց Ատիպեաց մեզ... հրա-
կաց: Զանցեւլ իւրաց զա- ման թագաւորաց եւ ի
ունցուն վարօն լաւացն մէնջ հարկ պահանջնել զան-
... այն ամենայն ի ձեռն ցեւուն էրուն էրու մա-
այլոցն գրեցան:
անազրել:

Հայոց պատմական մատննագրութեան նա-
խակարգ յիշատակարանների համար Բ. Մա-
կաբայցւոց Բ. Գլսի թէ իրերւ ձեւանկար
(շաբթօն) եւ թէ իրերւ ոսկեգարեան լեզուի մի
օրինակելի հատուած լինելը տեսնելուց յետոց
— դառնում ենք այժմ առաջադրուած համե-
մատութիւնների նշանակութեան խնդրին: Նախ
միաժամանակ տեսնում ենք որ մի կողմից Մա-
կաբայցւոց գլքի ոսկեգարեան լեզուի նմուշ-
ները նշյունութեամբ անցել են Ագաթանգեզոսի,
Փաւստոսի, Անանունի, Սերէօսի Ղազարի եւ
Խորենացու յառաջարաններին ու մատենագրա-
կան ծանօթութիւններին եւ միւս կողմից՝ նոյն
Մակաբայցւոց գլքի ու գլսի ոսկեգարեան
ոճերի եւ ասութիւնների փօխարէն հանդէս են
եկել միեւնոյն պատմիչների գրչի տակ ցեխա-
գարեան ասութիւններ: Այստեղ՝ այդ երեւոյթի
պատճառը պարզելուց առաջ, յիշում ենք եր-
կու օրինակ Փաւստոսի Ա. եւ Բ. գլւխներից,
այդպիսի՝ ոսկեգարեան ու ցեխագարեան ըրջան-
ների հետքեր՝ կցուած իրար միեւնոյն նախա-
գասութիւնների մէջ:

1. Զանցեալ իրացն զառաջնոցն զվարսն
լաւացն եւ որ զնոցուն հակառակ ըն դ-

դիմակաց — այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան (գ. ա.):

Ստորագծուած ասութիւնը, որ կցուած է ոսկեգարեան շարահիւսութեան (տես վերեւ մեր համեմատութիւնը եւ Նորայր Բիւզանդացի՝ Կորիւն... 253), ցեխագարեան է. “Հակառակ ընդդիմակաց,, չէ պատահել Նորայր Բիւզանդացուն Կորիւնին վերագրուած մատենագրութեան մէջ, “ընդդէմ” նախադրութիւնը կալքայով եւ սրա երկրորդ արմատով բարդուած չէ, իսկ Հարկաւոր ժամանակ լինել եւ դառնալ բայերով է բաղադրուած:

Կորիւն — կացեալ յարքունական դիւսանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին:

Ագաթ. — Ոչ կարի ինչ ընդդէմ մարդացեալ դառնալ արքայատուր հրամանացն:

Գ. Մակաբ. Դ. 5 — Իսկ որ ի քաղաքի անդ հեթանոսք էին... աւգնել ինչ ոչ կարէին եւ ոչ ընդդէմ դառնալ հրամանացն արքունիւ (Նորայր Բիւզանդացի, Կորիւն... 66):

Վերջին օրինակի մէջ՝ Փաւստոսի ոճով պիտի լինէր — “Եւ ոչ հակառակ ընդդիմակը լինել հրամանացն արքունի:

2. Իսկ սոցա պատրաստեցան տեղիք բնակութեան եւ արժանի եղեալ շիրիմք հանդըստեան եւ Մեծին Գրիգորի ի Դարանաղեաց գաւառին, ի գիւղն՝ որ անուանեալ կոչի թորդան (գ. բ.):

Դիմաւոր բայի փոխարէն անցեալ գերբայը իբրեւ, յորժամ մակբայների մօտ եւ առանց նրանց եւս հանդիպում է Կորիւնի, Ագաթանգեղոսի, Բիւզանդի եւ Մակաբայեցոց գրքերում (Նորայր Բիւզանդացի, Կորիւն... 78 եւ 83), ուստի առաջադրուած հատուածի արժանի եղեալ շիրիմք հանդըստեան սուկեցարեան ասութեան ձեւ է, որ կարող էր այլապէս լինել. եւ արժանի եղեն շիրիմք հանդստեան (եւ) մեծին Գրիգորի ի Դարանաղեաց գաւառին եւ այլն: Սակայն այս ոսկեգարեան կիրառումը կցուած է մի աւանդութեան, որ ցեխագարեան ըրջանում ստեղծուեց Ա. Գրիգորի ոսկորների պաշտամունքի առիթով. Գրիգոր Լուսաւորչի նշխարաց գիւտը պատմում է մի աւանդութիւն (Սոփերք Զ. 10), որը նշխարաց գիւտը յիշում է ջենոնի կայսրութեան ըրջանում. Միջագետքի Պերինատիանոս զօրավարը ջենոնի հրամանով “բռնութեամբ յափշտակեաց զնշխարս սրբոն Գրիգորի եւ ետ զաջ ձեռնն Հայոց վասն լուսաւորելոյն յառաջադոյն զնոսա եւ այլ ինչ եւս մասն եւ տարաւ զնա բովանդակ եւ այլ մասն ինչ ի սրբոց Հռիփսիմեանց ի կոստանդինուպոլիս եւ ի մի տապանի եղին (Սոփերք, Զ. 10): Այս հատուածի հեղինակը, հակառակ Փաւստոսի, ոսկոր յարգութիւնը եւ Հայոց սուրբերի նշխարների յարգանքը Յունաց մէջ ընդունում է. ասում ենք հակառակ Փաւստոսի, որովհետեւ սրա խմբագրովը մերժում է ոսկորների

յարդանքը եւ լուսաւորչին յիշում է թաղուած թորդանում։ ինչպէս եւ վրժանէսին եւ Յուսիկին, համաձայն որի նաեւ դանիէլ տեսիլքով պաշտպանում է թաղուելու եւ ոչ թէ թափառական պաշտամունքի առարկան լինելու տեսութիւնը։ Այդու թէ Փաւատոսի եւ թէ Սովիերքի հեղինակները պատկերամարտութեան շըլանի մատենագիրներ են հանդիսանում։ թէ պէտ Սովիերքի հեղինակը բացորոշ չի քարոզում պատկերայրգութիւնը, այլ միայն իրոզութիւնն է արձանագրում աւանդութեան ցուցումով, ինչպէս բացորոշ պրօպականդ է անուր Փաւատոսի խմբագրողը¹:

Արդ ի՞նչպէս մեկնել այս եւնման երեւոյթ ները. մի կողմից միեւնյն գլխի մէջ տեսնում ենք ոսկեգարեան նմանաբանութիւն եւ միւս կողմից թէ պատկերամարտ ողով Գրիգորի, Վորժանիսի եւ Յուսիկի թաղումն ու դանիէլի մաշն արձանագրող խմբագիր Սովիերքին հակոտնեայ վազով եւ թէ ցեխագարեան ասութիւններ։ Դժբախտաբար մեր մատենագրութեան ներկայ ինդրի համար կարեւոր աշխատութիւններ չեն կատարուած եւ մեկք միայն ընդհանուր մատումներով ստիպուած ենք բաւականանալ։ Ուստի կ'ասենք, որ ով համեմատէ

1 Գր. Խալաթեան Խորենացու Բ. զա գլխի առիթով կարծում է, որ Սովիերքի Զ հատորի աւանդութիւնը «մշակուած է Փաւատոսի հիմամբ», ճշգագոյն կը լիներ արձանագրել միայն հակոտնեայ ընթացքը՝ առանց կանուխութեան ինդիրը շարժելու (ՀԱ. 1906, Ապրիլ 122թ):

ցեխագարեան Եղիշէն ոսկեգարեան Մակարայեցւոց գրքերի հետ, նրա համար զարմանալի չի լինել այն, ինչ որ տեսանք արդէն մեր համեմատութիւնների վրայից, ըստ որում Եղիշէի եւ Մակարայեցւոց գրքերի առնչութիւնն աւելի հարազատ, կապն աւելի մեծ է քան թէ Բիւղանդիի եւ Կորիւնի կամ Բիւղանդի եւ Ագաթանգեղսի կապը։ Թող այդ. մենք ձեռքի տակ ունինք Կորիւնի եւ նրա ենթագրեալ թարգմանութիւնների միայն 624 նման եւ նոյն ասութիւնների ցանկը Նորայրի աշխատութեամբ. եւ չունինք, Նորայրին իր ենթագրութեան մէջ ստոյգ ձանաշելու համար, Կորիւնի եւ նրա ենթագրեալ թարգմանութիւնների ցեխագարեան մատենագրութեան հետ ունեցած նոյնութիւնների եւ նմանութիւնների ցանկը, երբ կը կատարուի այդ աշխատութիւնը, Փաւատոսի, Ագաթանգեղսի, Եւթաղի եւ Մակարայեցւոց գրքերի Կորիւնի թարգմանութիւնը լինելու հարցն այն ժամանակ միայն կարելի է սպառուած համարել։ Խառն՝ ոսկեգարեան եւ ցեխագարեան ասութիւնների անտարբեր կիրառումը մեկնելու համար շատ նշանաւոր է Ղազարի մի ցուցումը, առանց որի մեր ենթագրութիւնը պարապ պիտի նկատուեր։ Տգէտ աբեղաները Ղազարին մեղադրում էին ի միջի այլոց նաեւ նրա համար, որ եկեղեցում պաշտօն կատարելու ժամանակ նա գրքին չեր նայում, անդիր եւ վարժ ասում անցնում էր, իսկ աբեղաները, չը կարողանալով հետեւել նրան, կարծում էին թէ Ղազար իրեւ-

Նից է շարադրում. այդպիսի բամբասանքներին՝ Ղազար այսպէս է պատասխանում. Սաղմոսը պէտք է “պաշտել” եւ ոչ թէ “միշտ զգիրանի ձեռին ունելով՝ խօսել զայլայլս իբրեւ զբանդագուշեալս.” “իսկ մեր երանելի վարդապետին, կցում է Ղազար իր ասածին, զամենայն զկտակարանս եկեղեցւոյ երիցս եւ չըրիցս ուսուցեալ մեղի սկզբանէ մինչեւ ի կատարած գրոցն՝ համարս պահանջէին ի մենջ զնոյնս եւ իբրեւ զդաւթի Սաղմոսն պաշտել մեղ հարկաւորէին։ Իսկ այժմ յօլովք ի լիբր մախողաց՝ եւ զանուանս անգամ... եկեղեցական գրենոյ հաղիւ կարեն գիտել. եւ նստեալք առ միմեանս՝ լու ի լու այլոցն զինչպէտս խօսին (Տփլ. 1904, 201)։ Այսպիսի անգիր պաշտօնները իրենց պատմագրութեան, թարգմանութեան եւ խմբագրութեան ժամանակ ոչ միայն կուրօրէն, այլեւ առանձին եռանդով աշխատում էին վերարտագրել Ա. Գրքի ոսկեդարեան ոճը, ասութիւնները եւ մատենագրական ձեւերը՝ կից իրենց անհատական, տեղի եւ ժամանակի թելադրած առանձնայատուկ ոճաբանութեան։ Այդ հանգամանքի հանդէպ անուշադիր լինել եւ ոսկեդարեան շըշանի մատենագիր, թարգմանութիւն եւ խմբագրի կարծել կորիւնին, Փաւստութիւն ուրիշներին հէնց միայն նրա համար որ հինգ մատենագրութեան մէջ 624 նման ասութիւններ կան քիչ է եւ վաղաժամ, Ընդհակառակն անխուսափելի է որ Ա. Գրքի անգիր սերտուելու դարերում հայ Մակարէի գործերը հրէայ Մա-

կաբէի նկարագրի կրկնութիւնը չունենար, իսկ հայ մատենագրութեան խմբագրական նշխարժները՝ հրէայ եւ յօյն պատմաբանների ոճն ու պատկերը։

Այստեղ մենք աւելացրինք յօյն, որովհիւսեւ բացի Բ. Մակարայեցւոց գրքի Բ. գլուխը, խմբագրական աշխատութիւնների ժամանակ մեր նախնիք աչքի առաջ օրինակ են ունեցել Եւսերիսիսին եկեղեցական Պատմութիւնը եւ Քրոնիկոնը. Նրանից է անցել Խօրենացուն, Փաւստութիւնը եւ Սեբէոսին “Ժամանակագիր կանոնք Մատենից, արտայայտութիւնը։ Ղազարին ընդ բարձում Ճառս մատենից առաջնոցն պատմագրացն հայոց անցի (պրակ թ): Բացի այդ Փաւստութիւն գպրութեան վերնագրի մէջ “մացուածք բանից ի ծայրէ, եւ Եղիշէի ութերորդ Յեղանակի Ճակատի “Արտաքոյ եօթն Յեղանակին ութերորդն, գարձուածները Փաւստութիւն գպրութեան եւ Եղիշէի Ութերորդ Յեղանակի հետ միասին յետին խմբագրութեան կցկցումն են — հետեւողութեամբ Եւսերիսի, որ Ճապրութեան կցում է այս — “Միանդամայն եւ աղօթիւք քովք, Երանելիդ Պաւլինէ, Պատմութերորդ գիրս ի վերայ այլոց գրոցս պատմութեան Եկեղեցւոյ յաւելցուք գնել, ի քո անուն ընծայելով, իբրեւ կնիք ողջոյն գործոյս զքեզ հոչակեսցուք” (Էջ 717, 1877, Ճարեանի թարգ.) բացի այդ՝ Փաւստութիւնը խմբագրութեան կամ գանկացել է սկսել Թագէոսից։ Եղիպր. 22 գլուխ (Հմիտ. նաեւ Զ. 21) հին-

Թարգմանութեան բարեւելիք էին ընդայն ժամանակս, նոր թարգմանութեան բարեւելիք էին ընդայն ժամանակին կային եպիսկոպոս անուանիք, վերնագիրը ֆաւստոսի խմբագրողը ցրել է Զ. Դ. Պ. Ք. Գլիի Ճակատին Յաղագս եպիսկոպոսացն, որ երեւելիք էին յայնման ժամանակի ի մասինն յաշխարհին Խոսրովու եւայլն:

Ցայժմ Նկատուած ազգումների եւ փոխառութիւնների օրինակները սոսկ խմբագրական գործունէութեան վկան են. բայց կան նրանցից այնպիսիններն եւս, որոնք ցոյց են տալիս նաեւ խմբագրութեան կամ աղաւաղելու նպատակը. մինչգեռ շատ անգամ աղբիւր յիշատակարան անարգուած է լինում թէ պատմական անձգութեամբ եւ թէ աղբային-եկեղեցական արժանապատութեան դէմ մտքեր տարածելով, ընդհակառակն խմբագրողը հարկաւոր է զգում այդպիսի յիշատակարաններից օգտուիլ եւ սրբագրում ու աղաւաղջում է այն. խմբագրուում են աննշան յիշատակարաններն ու բազմաթիւ մատենագրական անցայտ չեղինակի երկեր եւ յայտնիններից անգամ, չը ճանաչուելու համար շրջում են պարագաները եւ նոր բնոյթ են ստանում աւանդութիւնները: Իսկ եթէ պատահեց, որ խմբագրողը կարողացաւ աղբային պատմութիւնը շրջանների եւ հատուների բաժանել եւ սկզբից մինչեւ կատարած անթերի պատմել, այն ժամանակ շատ աննշան փաքրիկ երկեր եւ յիշատակարաններ, որոնք խմբագրողը ձեռքին աղքեւը են եղած, անգու-

նուում, մոռացուում եւ անհետանում են խմբագրողի չեղինակաւոր եւ ամենալի աշխատութեան շնորհիւ եւ հազիւ հազ կասկածի են ենթարկուում միայն աննշան երկերը խմբագրողի կեղծիքները. մեծ աշխատութիւնները ապրում են եւ ընդհանուր ընդունելութիւն գտնում: Էջմիածնի Թիւ 94 (Գ) ձեռագիրը ժողովածու է հին մատենագրութեան գրքերի համառօտ բովանդակութեան, քաղուածների, չեղինակների մասին ծանօթութեան եւ այլեւայլ պիտանի տեղեկութիւններ¹ է բովանդակում ժամանակի, չափի, թիւնամի եւայլն մասին. Էջ 113բ լուսանցքում տարբեր ձեռքով եւ թանաքով գրուած է մի բողոք ոչ-մեծ յիշատակարանները կեղծելու գէմ^{“Այլ} եւ յանդբանցան ոմանք յինքեանս վերնագիրս առնելով եւ զդէմն եւ զկարգս սաղմոսաց այլընդայլոյ ասեն, զորոց ես զնադգնութիւն նոցա ընդ հերձուածով գնեմ:” Այս բողոքը Էջ 113ա—113բ գէմ է, ուր կարգում ենք մի փոքրիկ յիշատակարան “կարգաւորութիւն ցուցակին թէ ով կամ յորում ժամանակի արարեալ են կամ ով երեր ի հայւ սասցուք սակաւուք,” վերնագրով. եւ անմիջապէս երկրորդ վերնագիրը, որին հետեւում է “կարգաւորութիւն ցուցակին.” Երանելոյն Մովսէսի Խորենացւոյ որ

¹ Էջ 127բ “Երկրաշափութիւն առ եգիպտացիսն,, չը լաբաշութիւն առ քաղցւացիսն. “թվականութիւն առ փիւնիկեցիսն. Երաժշտութիւն առ թրակացիսն,, Հմնտ. Խորեն. Ա. բ:

է գրիչ Սրբոյն Սահակայ հայոց հայրապետի:
Յետ ձժվա ամի սրբոյն գրիդորի սկիզբն եղեւ
թարգմանութեան հայերէն գրոյս. յԲ ամի
Վռամշապհոյ առաքէ սուրբն Սահակ ի Նաղիա-
զու քաղաքն բերել անտի զսերմ աւրհնէքն,
զկալ եւ զշնձանի... Յետ ձժվա ամի այս ամե-
նայն կարգեցաւ ձեռամբ իմով Մովսիսի հրա-
մանաւ սրբոյն Սահակի (շարունակութիւնը Յո-
հան Մանդակունու Եկեղեցական բարեկարգու-
թեան մասին է, ի միջի այլոց մաղղմայի եւ
սկիհի գործածութեան եւայլն):

Մինչեւ այսօր դեռ չի պարզուած թէ ին-
չու Խորենացին իր Գ գրքի մէջ չի յիշում
Փաւստոսի անունը եւ “Խորդախում”, աղաւա-
զում է նրա յիշատակարանը. ամենից արուես-
տագէտ խմբագրով լինելով՝ նա կարողացել է
գանազան նկատումներով մանր յիշատակարան-
ները ի մի ձուլել, բայց նա նաեւ մեծ յիշատա-
կարանն է կերպարանափոխել անձանաշելիու-
թեան չափ եւ քաղաքական տրամադրութեան
ու ֆէոդալական տոհմերի դիրքին յարմաքրել:
Արդ՝ որբան այս վերջին կէտը հասկանալի է
դառնում բագրատունի տոհմի տիրապետու-
թեան ընդարձակ ազդեցութեամբ Բիւզանդիո-
նից մինչեւ Ափիսազների երկիրն ու Անին, նոյն-
քան անհասկանալի է Փաւստոսի մասին նրա
լութիւն պահպանելը. բայց այդ անլուծելի
գաղանիք չէ. նրան յայտնի է Ղազարից Փաւս-
տոսի անբարեհամբաւութիւնը. նոյն իսկ նա
բառացի այդ անբարեհամբաւութիւնը կրկնում

է եւ յայտնում, որ ինքը դրուած է իր աշխա-
տութիւնը ապագայ վատանգից. կասկածից եւ
անբարեհամբաւութիւնից փրկելու վիճակի մէջ.
Եւ հասկանալի է դառնում, թէ նա Փաւստոսի
անունը ինչու չի յիշում եւ թէ ինչու է շրջում
նրա տեղեկութիւնները եւ այլ ընդ այլոց պատ-
մում, “Խորդախում”։ Ինչ որ Ղազար գրել է
Փաւստոսի գէմ, բոլորը Խորենացին ամիսինել
է Բ. 64 գլխում. Հետաքբբիր է այն եւս, որ
համեմատուող հատուածը գտնուում է Փարագե-
ցու Բ—Ե պրակներում, այսինքն՝ նոցա մէջ,
որոնք յետին խմբագրի գործն են ըստիս (“Սպդ.
Մատեն, Լ. 97—104)։ Այդ է պատճառը
որ Խորենացու օձը շատ չի տարբերուում Ղա-
զարի օձից. իսկ երկուսի խմաստն էլ միեւնոյնն
է. նոքա պախարակում են կասկածելի գրակա-
նութիւնը՝ մէկը Փաւստոսին յանուանէ յիշելով
եւ պարսաւանքն ուղղելով նրա պատմութեան
գէմ, միւսն առանց Փաւստոսին յիշելու, որով-
հետեւ ինքը նրանից օգտուում է, բայց չի ուղում
իմացուի, որ օգտուել է՝ պարսաւանքից խուսա-
փած լինելու համար։ Ահա նրանց համեմատու-
թիւնը

Ղազար Տի. 1904, 3-4: Խորենացի, Բ. 64:

Որում երկրորդ գրոցն Եւ այլ՝ որ ինչ կոսու-
անուանեն զոմն պատմագիր, բագոյն ազգ, եթէ աստ եւ
կոչեցեալ Փաւստոս Բոււ եթէ զկողմամբ Կորձէից,
զանդացի. եւ վասն զի կար հաստատէ այս Տիգրան.
գելոցն առ ի նմանէ ի տեւ որք միանդամ անազգիք
զիս ուրեք կարեցին ամանդ էին ի վաշտ եւ անձամք

(Հազար.)

բնու+ եւ+ ու+ յորմոր+ եւ+
որպէս առաջոյն հցրտոբնունիւն, Ազա-
թանգեղոսն կոչեցելոց, յեր-
կուացեալ հարկաւորին շա-
սել զայնպիսի անդուրամ
իւրիւն բիւզանդացւոյ զարմոց հայկազանց, ամանք
ուսելոյ:... Արդ յայնպի-
սումն քաղաքի եւ ի մէջ պատմեցուք. է ինչ՝ որ
այնչափ բազմութեանն ու-
սելոյ վարժեալ այսն Փաւա-
սոս այնպիսի ինչ արգեաք
անհաճոյսառոցաց բանհար-
գեր ի պատմութեան իւ-
րում: Քաւ եւ մի լիցի: Ու-
սոսի եւ անհաւարութեան իւ-
րում ուներաւութեան յոր-
մէցեալ այլ որ յանդուգն
եւ անհրահանդ բանիւ
լրբարար ձեռն արկեալ
յիւրն գրեաց զինչ պէտո
ըստ կամի. եւ կամ զի ու-
րուք նկարեալ¹ զիպոզ՝
այլաբանեալ ծառեաց, եւ
անոււամբ Փաւասոսին զիւ-
րոյ յանդութեանն սխա-
լանս համարեցաւ ծածկել.
եւ այն յայսնի ցուցանի
ամենայն հայցողաց քանզի
են ոմանք ի Յոյնս, այլ
մանանք առաւել ԱԱսու
կամ ի մէնջ՝ զարդարոյն

(Խորենացի.)

երեւելիք, եւ վասն նորա-
փրկութեան պատերազմեալ
ընդ Յոյնս, որը ի Կորճէլից
եւ որք ի մերմէ կողմանէս,
զյառաջագունից ասացելոց
մօտաւորաց վաճենից եւ
վարմոց հայկազանց, ամանք
իւեկաց: Զոր ոչ անոււամբ
ուում քաղաքի եւ ի մէջ պատմեցուք. է ինչ՝ որ
վասն աշխատութեան ի
վաստակին խոյս տալով,
եւ է ինչ՝ որ վասն յայսնի
ոչ լինեց մեզ. երլորդ, զի
եւ անհաւարութեան բոզ-
րոց կացէն է ներսու ոծէ ընտ
բնուանել: Եւ այսու-
րիկ աղազաւ ոչ ինչ վասն
այնց աղգաց, որք ի վերջ-
նոյն Տիգրանայ կարգեցան,
ճառեցուք, թէ եւ բա-
լրաբար ձեռն արկեալ
յիւրն գրեաց զինչ պէտո
ըստ կամի. եւ կամ զի ու-
րուք նկարեալ¹ զիպոզ՝
այլաբանեալ ծառեաց, եւ
անոււամբ Փաւասոսին զիւ-
րոյ յանդութեանն սխա-
լանս համարեցաւ ծածկել.
եւ այն յայսնի ցուցանի
ամենայն հայցողաց քանզի
են ոմանք ի Յոյնս, այլ
մանանք առաւել ԱԱսու
կամ ի մէնջ՝ զարդարոյն

(Հազար.)

բիս բազումք սպրդեցին եւ զէշարուէ: Զնոյն եւ
գալ յայսպիսի յայրառու-
թիւնս արք տգէտք եւ արգելում զընթաց բանից
յանդունք գրեցին յին-
յաւ պարագնէն եւ որ զնո-
քեանց ճառաց ընդունայնս
եւ անպիտաբանս եւ խառ-
նեալ եղին ի գիրս գիտուն
զքեզ, որպէս բազում ան-
լուղաց. այլ ընտրող մտաց
գամ. եւ այժմ աղաչեմ.
Ճանաչի յայտնապիս գիտ-
ուցն բանք եւ անմուացն
ըել զմեզ. եւ սակաւ եւ
կամ յորվ բանիւք զմեծ
եւ զչաւասոի բովանդակ
աշխատութիւնս մեր ընդ
վայր եւ աւելորդ շուշանէ-
ւէ հործ. զի նմանազոյնս
որպէս ինձ եւ քեզ գործէ
զբանչու:

Բաց ի իմաստի եւ ոճի համեմատուող
ասութիւններից եւ երկու խմբագրողների միա-
տեսակ գրդիչներից ու նպատակից, այդ հա-
տուածներից իւրաքանչիւրը տարբեր առարկա-
ներով միեւնոյն հարցն են շարժում. Ղազարի
խմբագրողը պնդում է որ Փաւասոսի մէջ մուտք
են գտել զինչ պէտո, այլաբանեալ շաղփաղ-
փութիւններ, բանք ինչ ոչ յարմարք եւ դի-
պողք, որոնք լնդհանուր իմաստ ունին եւ միայն
ենթադրութեամբ կարող են վերաբերուիլ թէ
Պանիէլի հակառակորայարդական այսինքն՝
պատկերամարտութեան շրջանի բառով՝ հակա-
հեթանոսական ցանկութեան, Յոհան եպիսկո-
պոսի ընչասիրութեան, Զաւէնի պէճնասիրու-
թեան եւ դաւանաբանական այնպիսի ինդիր-

¹ Եւ ոչ թէ «անկարեալ», հմտու Փաւասոս նախա-
գիտելի «գրումեալ նկարեցի», իւրաքանչիւր գլխովք:

ների մանաւանդ, որոնց Փաւստոսի խմբագրովը խիստ վարպետօրէն անցրել է իր տողերի մէջ, ուստի եւ մեզ համար անզգալի են մնում, մինչդեռ հին դարերում գրուածքի էական մասերն էին կազմում, խնդիրներ, որոնք մենք եւս չենք յարուցանում որովհետեւ 1—2 գլուխներից չեն բղխում, այլ կապուած են միւս հատուածների եւ գլուխների բնագրական ստուգութեան աշխատանքի հետ։ Խորենացին նկատի ունի միայն վէտուալական, տոհմաբանական իրաւունքը եւ ոչ թէ դաւանական, նա այդ ուղղակի ասում է համեմատուող հատուածի մէջ։

Մենք չենք շարունակում Փաւստոսի առաջին գլխի մասին մնացած հարցերը՝ նրանց ընդարձակութեան պատճառով թէ ինչո՞ւ, երբ, ինչ դրդիչներով են կազմուած առաջին գլուխը, իրբեւ յառաջարան, Գ դպրութիւնը իրբեւ միջին պատմութեան բովանդակութիւնը իրբեւ միջին, դպրութիւնների դասաւորութիւնը եւ առհասարակ այն բոլոր երեւոյթները, որոնք կապուած են ծագմամբ այդպիսի մի խմբագրութեան (= կեղծարարութեան) հետ։ Միայն կ'ասենք, որ արդարեւ արդարացի են Հ. Գ. Անէնկվիշեան եւ Գր. Մուրասո՞ւ այդ առաջին գլխի աղաւաղման ենթագրութեամբ, որը կատարուել է ըստ իս ՇԶԼ թուից յետոյ։

Բայց այնուամենայնիւ յիշածներից արդէն երեւաց մեր կարծիքը Փաւստոսի պատմութեան խմբագրութեան մասին, որով եւ մասամբ կատարած ենք լինում մեր խոստման գէթ չնչին

մասը։ Ակերեւի հարցերին որքան եւ տարբեր նշանակութիւն յատկացրուի մէկ եւ միւս քննադատների կողմից, այնուամենայնիւ նրանք այն էական նշանակութիւնն ունին, որ այսուհետեւ ոչ ոք Փաւստոսի այս կամ այն գլուխը քննական շէնքի կառուցման հիմքը պիտի դնի, առանց կանխապէս մատենագիտական վերլուծութեան ենթարկելու իր հիմքը՝ նրա խիստ սայթաքեցուցիչ եւ կասկածաւոր լինելով։ Միեւնոյն ժամանակ պարզուեց որ Անանունի եւ Փաւստոսի զուգորդութիւնների նկատմամբ վճռական լուսաբանութիւն տալ չի կարող նրանց ոսկեդարեան լեզուի նմուշների ցանկը, այդքանով չի ժխտուում Փաւստոսի իրբեւ մի ընդարձակ խմբագրութեան կաղապարի յօրինուածքը լինելը, ինչպէս չի ժխտուում Եղիշէի ցիխագարեան ծագումը իր նոյնատեսակ եւ դեռ աւելի կապով Մակաբայցոց գլքերի՝ իրբեւ ոսկեդարեան թարգմանութեան հետ։ Եւս առաւել այդ նմուշների առաջնորդութեամբ անհնար է որեւէ եղբակացութեան յանգել նախամեսրոպեան շրջանի մատենագրութեան մասին։

Սակայն Հ. Մատիկեանի նկատած լեզուագիտական եւ պատմագիտական զուգորդութիւնների շաբթը, որ խիստ յաջող եւ ակնյայտնի է, միայն այն են վկայում, որ Անանունի ծագումը եւ Փաւստոսի խմբագրութիւնը ժամանակով համապատասխանում են իրար. այս մէկ պարագան կազմում է Փաւստոսի առեղծուածի նկատմամբ Հ. Մատիկեանի աշխատու-

թեան դրական կողմը, որ իր տեսակում չունի նմանը մինչեւ այժմ։ Նրա ընդարձակումն նոյն ոգով կը բաղձանք մենք, եթէ Անանունի անձաւորութիւնը, իբրեւ խորհրդաւոր հարցի շացուցիչ մի կողմը, խանդարող չը հանդիսանայ իրեն՝ ի հարկէ։

Մենք թէ Հ. Մատիկեանի գտած եւ թէ հնարաւորապէս գտնուելիք ամէն լեզուագիտական զուգորդութիւն բացատրում ենք այսպէս։ Անանունի ոսկեդարեան կոչուած հատուածները բոլորը ժողովրդական վեպի մասեր են, ուստի նրանց գրի առնուիլը որ դարում եւ կատարուած լինի՝ դարձեալ նրանք պահպանած կը լինեն իրենց մէջ ոսկեդարեան մաքրարիւնութեան որոշ պատկերը։ Հէնց միայն այդ հանգամանքը զգաստացուցիչ է թիւրիմացութեան մէջ ընկնելուց Անանունի խնդրի առիթով։

Այժմ դառնանք Անանունի առեղծուածին, որը մենք կը լուսաբանենք Հ. Մատիկեանի եղբակացութեան հակառակ։

Գ.

Անանուն = իեղծ Սերենու։

—

Ա. Աէմեն Աղաբանցու օրէնակ։

Անանունին գտնել ցանկացող քննադատներից եւ ո՛չ մէկը չի շահեցրել դրա համար անհրաժեշտ մի տեղեկութիւն, որ պահել է

Սիմեոն Ապարանցին՝ Մամիկոնեան եւ Պահլաւունի տոհմերի ոտանաւոր պատմութեան մէջ (Հրատ. Էջմիածին 1870, էջ 7—33)։ Անանունի ներկայ ծաւալը եւ բաժանումները Սիմեոն Ապարանցու օրինակում ո՛չ միայն բացակայում էին, այլ նաեւ Անանունը վերագրուած էր ո՛չ թէ Սեբէոսին, այլ Ղազար Փարպեցուն, եւ կցուած էր Ղազարի Պատմութեան՝ իբրեւ “Առաջին ճառ”։

Այս տեղեկութիւնը կարեւոր է շատ կողմերով, չը նայած որ անուշագիր է թողնուած մինչեւ այժմ։ Ճիշդ է՝ դրանով Անանունի հարցը չի սպառուում, բայց լուսաբանուում է Կեղծ-Սեբէոսի խնդիրը. բացի այդ՝ Փաւստոսի եւ առհասարաց Ե դարից հոչակուած մեր պատմիչների — Ղազարի, Եղիշէի եւ Խորենացու — Խմբագրութիւնների պատմութիւնը հարստանում է “Անանուն, Սեբէոս, Ղազար, անունների տակ կորած Կեղծարար հեղինակով։ Կեղծիքի ժամանակը, տեղենցը, աղբիւրը եւ եղանակը լուսաբանուում են այնքան հանդամանորէն, որ երբեւիցէ մեր քննութեան նիւթը պիտի դառնար այդ Կեղծիքը՝ իբրեւ Փաւստոսի Խմբագրութեան ժամանակակից գրականութեան մի նշնար, որին Խոստացել էինք դառնալ Ազգ. Մատեն. ԼԸ. 8։ Հ. Ա. Մատիկեանի յարուցած հարցի առիթով այստեղ ենք կատարում այդ խոստման մի մասը. Նախ եւ առաջ ցոյց կը տանք Անանունի = Ղազարի միջնադարեան ծաւալն ու դիբքը՝ համաձայն Սիմեոն Ապարան-

ցու տեղեկութիւնների, եւ ապա կը քննենք այն բոլոր խնդիրները, որոնք ծագում են այս նշանաւոր կեղծիքից:

Սիմէռն Ապարանցին “Ղաղարի առաջին ճառին, է գիմել, որովհետեւ իրա նպատակն էր ոչ թէ յայտնի պատմական երկերի կրկնութիւնը տալ, այլ ընդհակառակն յայտնի երկերի հակառակ աւանդող բոլոր տեղեկութիւնները ի մի ժողովել. այդպէս հակառակ էր խորենացուն Ղաղարի “Առաջին ճառը”, որը Սիմէռն Ապարանցու դարում եւ այնուհետեւ քիչ էր տարածուած, ինչպէս այսօրուայ ձեռագրերի սղութիւնն էլ այդ ցոյց է տալիս.

Սիմէռն Ապարանցին այդ ուղղակի ասում է այս տողերի մէջ

ԶՀակառակողն մտածեալ
Զորոմացանսն խոկացեալ
Այն որ Ղաղարն կոչեցեալ
Ի Մովսէսին կարգն սկսեալ
Եւ զմացեալն վիպասանեալ:

Էջ 7, 8.

Ահա այդպէս՝ Սիմ. Ապարանցին ջըհեղեղի շըշանի համար խորենացուց օդտուելուց յետոյ, համառօտում է Ղաղարի Առաջին ճառը՝ իբր հակոտնեայ խորենացու, այսինքն բանաքաղում է մեզ յայտնի Անանունի բովանդակութիւնը. Հարցերը եւ կարգը, որով Սիմ. Ապարանցին յիշում է Ղաղարի Առաջին ճառի բովանդակութիւնը, նոյն են, ինչոր արդի Անա-

նունն ունի. Նա յիշում է 1. Մծուրնացի Մար-Աբայի մատեանը, 2. Ագաթանգեղոսին, 3. Հինգ թագաւորներին, 4. Բէլի եւ Հայկի աւանդութիւնը, 5. Աւանդութիւնը մինչեւ Արա նահապետը, 6. Շամիրամին, 7. Ունեքերիմին, 8. Հինգ թագաւորներին եւ Փառնաւազի մահը Բաբելոնում, 9. Արամի պատմութիւնը, 10. Վահէին եւ Աղեք. Մակեդոնացուն, 11. Պարթեւաց զօրանալը, 12. Վաղարշակին, 13. Բագարատին, 14. Հայ արշակունիներին, 15. Մամիկոնեանների ծագումը, 16. Մահմէտի եւ Ճենքակուրի ընդհարումը, 17. Մարտեակի սերունդը, 18. Հայաստանի բաժանուիլը Պարսից եւ Յունաց մէջ եւ այնուհետեւ այն բոլորը, ինչ որ գտնում ենք այսօր Ղաղարի Ա, Բ եւ Գ դրուագների մէջ:

Թէպէտ այս հարցերի բովանդակութիւնը՝ համեմատութեամբ արդի Անանունի նոյն է եւ կասկած չը կայ որ Ապարանցին Ղաղարի Ա. Ճառ ասելով հասկանում է այսօրուայ կեղծ-Սեբէսոսի երկը, սակայն մի քանի անդամ Սիմ. Ապարանցի համառօտութիւնը չի համապատասխանում արդի Անանունին եւ կարող է կարծուել հակառակը. բարեբախտաբար հէնց այդ դէպքերն են կարեւորը, որովհետեւ ամէն անգամ Սիմ. Ապարանցին մատենագրական ցուցումն է անում անհամաձայնութիւնների վերաբերեալ, հաստատելով որ իր յիշած “Ղաղարի Ա. Ճառը” արդի Անանունն է:

Քննենք այդ դէպքերը:

Առաջին. վերսիշեալ հարցերից 9րդը Եւ
10րդը — Արամի պատմութիւնը Եւ Վահէի
մահը — արդի Անանուն չունի Եւ Սիմ. Ապա-
րանցու օրինակում Եւս չը կային այդ կէտերը.
ուստի նա Խորենացուց քաղելով այդ հարցերը,
կանխաւ ծանօթացրել է, որ “Ղաղարի Աճառը”
(= Անանունը) չունի այդ հարցերը: Ահա նրա
տողերը.

Արդ յառաջինն (Խորենացւոյն) կարգ դարձեալ
իմ Սիմոնի որ զայս ոգեեալ,
Զի պատմութիւնս (Ղաղարայ) է վերջունեալ
Զհայկաղանցն անդիտացեալ
Եւ Խորագոյն իմն սկսեալ
Զքետուրածինս ազդաբանեալ:

Այսօրուայ Անանունի հետ համեմատելով
Ապարանցու քաղուածքը, արդարեւ երեւում
է, որ Անանուն չունի Արամի Եւ Վահէի մասին
որեւէ յիշատակոթիւն, այլ քետուրածին
պարթեւների զօրանալը նա տարբեր կերպով,
Նորագոյն իմն, է կապում Փառնաւալի բա-
րելոնում մեռնելու աւանդութեան հետ:

Ղաղարի թէ այս պակասը Եւ թէ առ-
հասարակ Խորենացուն հակոտնեայ ընթացքը
Ապարանցու համար առիթ էին անհանգստա-
նալու իր աշխատութեան ապագայի նկատմամբ
Եւնա երկար պատճառաբանութեամբ (Էջ 21—
23) արդարանում է ասելով, որ Ղաղարի աղ-
բիւրը Մարաբաս փիլսոփիան է, Եւ ինքը Ղա-
ղարը իրողութիւններն ստուգելուց յետոյ է

ընդունում, մի խօսքով “սնոտիապատու-
աստ, ոչինչ չը կայ նրա ներհակ պատմու-
թեան մէջ”:

Երկրորդ. “Ղաղարի Աճառը” հայ ար-
շակունիների սերունդը յիշելուց յետոյ՝ Մով-
սէսին հակառակ կելով, պատմում էր
Մամիկոնեան տոհմի ծագումը, ան կապ դիր-
քով, նախարարական բազմաթիւ տոհմերի ծա-
գումը զանց անելով: Եւ Սիմ. Ապարանցին յի-
շելով այդ բոլորը ընթերցողների միամտութեան
համար, որպէս զի Խորենացու անհամաձայնու-
թիւնով նրանք չը խրտչեն, աւելացնում է
նաեւ, որ Մամիկոնեան տոհմի ծագումը Ղաղարի
Աճառի մէջ գրուագագրեալ դիրք ու-
նէր: Այս բոլորը տեսնում ենք նաեւ Անանունի
= Կեղծ Սերէսոսի մօտ Եւ կասկած չը կայ, որ
Հարցը միեւնոյն մատենագրական նշխարին է
վերաբերում: Ահա Սիմ. Ապարանցու ծանօ-
թութիւնը.

Եւ այսպանիւք ոչ շատացեալ (Ղաղարայ),
Այլ ի յոլովն ձեռնարկեալ,
Սերունդ ազգին զաճումն առեւեալ
Մինչ ի Վարդանն պսակեալ:
Չորք հարիւր Եւ հինգ ամ տեւեալ
ՅԱՐՄԱՂԻՒՔ թագն բարձեալ
Ի յայս միջոցս բանս լրեալ
Ի յոլովն գոլով կասեալ
Զի պատմագիրն (Ղաղար) ոչ ախորժեալ
Զքերթողին կրկնարանեալ

Ա. Ա. զՃենաղունս յիշատակեալ
ԶՄամիկոնեանսն զեկուցեալ:
Վամն սոցա դրուագագրեալ
Բայց Մովկիսի ոչ ձայնակցեալ
Ագաթանգեղեայ դոլ հետեւեալ
Ա. Ա. որ զգեսպանս ճենաց հարցեալ.
Ի սոցանէ զստոցգմն ուսեալ
Յորմէ գրով մեզ աւանդեալ
Մամն եւ կոնակն եւն.

“Վարդան պսակեալի” եւ Մամիկոնեան
տոհմի ծագման պատմութիւններն այդպէս էին
շաղկապուած Ղաղարի Ա. Ճառի մէջ, այսինքն՝
Արշակունեաց անկումից յետոյ երբ խօսք է եղել
Վարդան սպարապետի մասին, Ղաղար այդտեղ
պատմել է Մամիկոնեան տոհմի ծագումը։
“Դրուագագրեալ” բառն էլ ցոյց է տալիս որ
այդ հատուածը ուրոյնացած էր կամ վերնա-
գրով եւ կամ սոսկ նոր գլխով։ Ինչ վերաբե-
րում է այդ ծանօթութեան մէջ յիշուող թուի
եւ պակասող հատուածների մասին, ինչպէս է՝
Արտաշէս մանուկի յիշատակութիւնը եւ Պա-
պից յետոյ մինչեւ Արտաշէս արշակունիների
սերնդի մասին ակնարկը — այդ բոլորը այսօր
պակասում են զնանունի մէջ. Նրանց փոխարէն
Պապից յետոյ արդի Անանունը յիշում է
“դրուագագրեալ”, դիքով Մամիկոնեանների
հատուածը, բայց նախակարգելով խորենացու
եւ Ասողիկի քաղուածքներով. այդ մասին եր-
կար գրել են ուրիշները եւ մենք էլ շարունա-
կութեան մէջ կը դառնանք դրան. միայն այս

նկատենք, որ արդի Անանունի առաջին գպրու-
թեան վախճանը ամփոփումն չունի՝ անկապօրէն
կանգ է առնում Պապի յիշատակութեամբ եւ
Արմ. Ապարանցու քաղուածքին չի համապա-
տասխանում, մինչդեռ Բ. գպրութեան մէջ Մա-
միկոնեան տոհմի ծագումը բառացինոյն է Ապա-
րանցու քաղուածքի հետ. խառնակութիւնն
ակնյայտնի է:

Երբորդ. Մամիկոնեանների պատմութիւնը
կրծատուած է արդի Անանունի մէջ. Ղաղարի
Առաջին ճառը պատմում էր այդ պատմութեան
կից նաեւ ձենաց երկրի գովքը եւ ձենացոց
քաջասրտութիւնից մի դէպք. այս պակասող
մասերը Սիմ. Ապարանցին յիշում է առանց
ծանօթութեան՝ թէ ինքն է քաղում որեւէ
տեղից. եթէ ուղղակի Ղաղարի Առաջին ճառից
չը լինէին այդ հատուածները, նա կը յիշէր իր
աղբիւրը, ինչպէս այդ արել է Արամի եւ Վա-
հէի պատմութեան առիթներով՝ յիշելով որ
Խորենացուց է լրացնում։ Այդ հատուածների
նշանակութիւնը էական է եւ նրանց կրծատումն
արդի Անանունի մէջ խմբագրական նշանակու-
թիւն ունի, ինչպէս կը տեսնենք վերջում։

Թէ ինչո՞վ էր վերջանում Ղաղարի Առա-
ջին ճառը Սիմ. Ապարանցին որոշ ցուցումն ունի.
Ձենացիների քաջութիւնը վկայող մի պատմու-
թիւնից յետոյ, ասում է Ապարանցին, Ղաղար
անկապ կերպով պատմում է քետուրածինների
գաղթը Հայաստան, որ ըստ բովանդակութեան
նոյն է “Ի Պամակոսէ ասեն գնացեալ զՄար-

սեակն, հատուածի հետ. արդի Անանունի մէջ Ղաղարի առաջին ճառի այդ վախճանական հատուածը գտնուում է Պարթեւների զօրանալու պատմութեան սկզբում. այս փոփոխութիւնն էլ վերջին խմբագրութեան ժամանակ է կատարուել, որովհետեւ Ղաղարի առաջին ճառի մէջ յիշեալ հատուածը անկապ եւ անմիտ նշանակութիւն ունէր նախորդի համեմատութեամբ. ահա Ապարանցու տողերն այդ մասին.

Զայս ամենայն մեզ ծանուցեալ
(Ճենաց մասին),

Եւ զո՞մ բանին առ այլս փոխեալ
ԶՄարսակէ սկիզբն արարեալ
Աբրահամու ընդոծին լեալ:

Ահա այդ հատուածով վերջանում էր Ղաղարի Առաջին ճառը, ասում է Ապարանցին էջ 33 եւ այնուհետեւ թ ճառը շարունակում էր Փաւստոսի պատմութիւնը: Վերցիշեալ տուեալներով Ղաղարի առաջին ճառը համեմատութեամբ արդի Անանունի ունէր հետեւեալ կարգով մի բովանդակութիւն.

1. Ղաղարի առաջին ճառն սկսուում էր Անանունի 1851թ. Տրատարակութեան սկսուածքով եւ շարունակուում էր մինչեւ նրա 9րդ էջը. այդ էջի «Քանդի զսյն ճառէ ժամանակագիրն՝ որպէս առաջիդ կայ», տողը վերջին նախադասութիւնն էր այդ հատուածի:

2. Դրա շարունակութիւնը Ղաղարի առաջին ճառի մէջ կազմում էր նյն 9րդ էջի

«Ապստամբութիւն պարթեւաց, որ եղեւ ի յայս ժամանակս վերնագիրն ու հատուածը շարունակաբար մինչեւ արդի Անանունի և դպրութեան վերջը:

3. Ղաղարի առաջին ճառի մէջ այդտեղ՝ այսինքն արդի առաջին դպրութեան վերջում յիշուում էր Արշակունեաց սերնդի աճումը մինչեւ Արտաշէսից թագի բարձուիլը եւ իշխանութեան զեկը պսակեալ Վարդանին անցնիլը: Արդի Անանունի մէջ այդ մասը չը կայ եւ Արշակունեաց սերնդի աճումը դադարում է Պապի յիշատակութեամբ:

4. Վարդանի իբրեւ իշխանութիւնը զեկավարող սպարապետի անուան կցուած էր նրա տոհմի, այն է՝ Մամիկոնեանների ծագումը «Դրուգագրեալ, դիբովլ. արդի Անանունի Բ. դպրութեան ծանօթ հատուածն է այդ մասը սկսած այս տողից «Եւ յետ նորա (Վարդանայ) պայազատք նորին զնոյն ձեւ աւրինադրեն զՄամիկոնէիցն սակս ազգաց զնեղութիւնն, քանզի ոչ են սոքա որդիք ազգածինն Արամանեկայ, այլ են եկեալ ի Ճենաստանէ, մինչեւ էջ 30 եւ վերջանում էր «Յայսմանէ այն է սպարապետն, տողով»:

5. Մամիկոնեան տոհմի ծագման պատմութիւնը Ղաղարի Առաջին ճառի մէջ աւելի երկար էր քան արդի Անանունի մէջ է. Երկու մեծ հատուած կար այստեղ, մէկի մէջ արուած էր Ճենաց երկրի բնական հարստութեան գովքը, իսկ միւսի մէջ պատմուած էր Ճենացիների

քաջութեան մի օրինակը։ Այս հատուածները քաղուածք էին խորենացու աղբիւրից եւ Պետոնդ պատմիչց, կամ նրա աղբիւրից։ Նրանց մասին խօսք կը լինի յետոյ։

6. Ղազարի առաջին ձառի մէջ ձենացիների քաջութիւնը պատմող հատուածին անկապօրէն կցուած էր քետուրածիների գաղթը Հայաստան, այսինքն՝ այն հատուածը, որը արդի Անանունի մէջ սկսուում է էջ 9 ՚ի դամասկոսէ ասեն գնացեալ զՄարսեակն, տողով, եւ որը նոյն ծաւալն ունէր, ինչ որ արդի Անանուն ունի, մինչեւ “Ապստամբութիւն Պարթեւաց, որ եղեւ ի յայս ժամանակս, վերնագիրը”։

Ապարանցու օրինակի մէջ Ղազարի առաջին ձառը վերջանում էր քետուրածիների գաղթի պատմութեամբ, եւ նա չունէր արդի Անանունի Բ. դպրութեան այն հատուածները, որոնք Մամիկոնեանների հատուածից առաջ եւ յետոյ են, այն է Պարթեւների պատմութիւնը կրկնաբար եւ համաժամանակեայցանկերը։

Այս բոլորից յետոյ ամենից առաջ պէտք է ստուգել Ապարանցու ցուցումների արժանաշաւատութեան չափը, որ կասկածից դուրս է մեր կարծիքով։ Ճիշդ է, չի գտնուած “Ղազարի առաջին ձառը, բովանդակող մի ձեռագիր Ապարանցու ցուցումների ստուերագծած պատկերով, բայց երեք կերպ կարող ենք վստահել Ապարանցու խօսքերին եւ աղազարի առաջին ձառի, քաղուածքի թէ հաւատարմութիւնը եւ

թէ հատուածների հետեւողական կարգը ճշմարիտ ընդունել։

Կախ՝ առձեռն ունինք Ղազարի պատմութիւնը, որը Ապարանցին շարունակել է համառոտել ոտանաւորով՝ սկսած Արշակի յունացրաժինը գաղթելուց մինչեւ Յոհան Մանդակունու յայտնի ճառը Գունի եկեղեցում Վահանի մարզպանութեան առիթով (Սիմ. Ապար. էջ 34—72)։ Համեմատութիւնը ցցի է տալիս, որ Ղազարի ոճակարգը Ապարանցին անշեղ պահել է, ոչ մի անդամ հատուածները չի տեղափոխել, չի զանց արել որեւէ պատմական նշանաւոր ամբողջութիւն, ոչ մի անդամ եղիշելի օգնութեան չի դիմել լրացնելու, “ուղղելու, եւ ոճաբանութեան համար”¹։

Երկրորդ՝ Ապարանցու հարազատ եւ հաւատարիմ ընթացքի ու վարմունքի ամենալաւ վկաներն են այն երկար ու բարակ մատենագրական ծանօթութիւնները, որ նա անում է մերժ Ղազարի Ա ճառի մէջ հատուածների անկապութեան, մերժ պատմահօր հակոտնեայ ընթացքի, մերժ պակասող բայց էական պատմական շրջանների մասին, ծանօթութիւններ, որոնք ապա ինքը հեղինակը լրացնում է յիշելով աղբիւրը։ Սակայն Ապարանցու ճշմարտախօսութեան համար ամենազօրաւոր ապացոյց-

¹ Իբրեւ եզակի բացառութիւն նկատում է մի անդամ Ապարանցու համառօտութեան եւ Ղազարի պատմութեան օտարութիւնը. այն է Մ. Խորենացու եւ Դաւիթ-Անյաղթի յայտնի աւանդութիւնը Թէոդոսուպոլսի վերաբնութեան մասին, որ Ղազար չունի։

Ները պահուած են արդի Անանունի մէջ, որով
եւ միանգամայն խնդրի այս մասը սպառում է:
Արդի Անանունի՝ համեմատութեամբ Ղաղարի
Ա ճառի տեղափոխուած եւ համառօտուած հա-
տուածները ստեղծել են անկապ, կեղծ դրու-
թիւն եւ անիմաստ ոճակարգութիւն. երբ այդ-
պիսի հատուածներն իրենց տեղն ենք կարդում՝
Ղաղարի Ա ճառի (= Սիմ. Ապարանցու) հա-
մաձայն, չքանում են իսանդարման ամէն տեսակ
հետքերը: Այսպէս՝ Ղաղարի Ա. ճառի վերջում
գտնում էր Մարսեակի գաղթը պատմող “Ի
Դամասկոսէ ասեն գնացեալ”, հատուածը, որը
Հիմայ Անանունի մօտ կեղծ գիրք ունի այնպէս,
որ իրար շարունակութիւն կազմող հատուած-
ների մէջ արհեստական անջրպետ է հանդիսա-
նում, որովհետեւ նրան կանխող եւ հետեւող
հատուածները իմաստով կապուած են իրար
հետ: Ահա այդ հատուածների մերձեցրած
պատկերը, ուր փակագծերի բազմակետը նշա-
նակում է դուրս ձգուելու արժանի “Ի դա-
մասկոսէն, հատուածը:

“Եւ ծառայեցին Մակեդոնացւոց մինչեւ
ցապստամբութիւնն Պարթեւաց եւ Մակեդոնա-
ցւոց եւ ցհամբարձումն Արշակոնեաց թագաւո-
րութեանն: Քանզի զսոյն ճառէ ժամանակադիրն
այդպէս, որպէս առաջիդ կայ [.] Ապստամ-
բութիւն Պարթեւաց որ եղեւ ի յայս ժամա-
նակի: Եւ եղեւ յետ մահուանն Աղքասանդրի
Մակեդոնացւոց, ծառայեցին Պարթեւոք Մակե-
դոնացւոց ամս կԱ, եւայլն:

Այսպիսի եւ աւելի կոպիտ անջրպետ է
ատեղծել Անանունի հատուածների մէջ Մամի-
կոնեանների հատուածը, որը դուրս ձգելուց
յետոյ պահուում է կապը Խորենացուց եւ Ասո-
ղիկից առած հատուածների մէջ:

“Արտաւան՝ ամս ԼԶ: Զսա սպանեալ
Ստահրացւոյն Արտաշրի՝ որդւոյ Սասանայ,
երարձ զտէրութիւնն Պահլաւաց¹ սկսեալ յե-
րեսուն ամի թագաւորութեանն Փիլադելիսս
Պտղոմէոսի կալեալ նոյա ընդ ամենայն ամս
ՆԾԻ: Յետ որոյ նուածեալ Ստահրացւոյն Ար-
տաշրի որդւոյ Սասանայ զամենայն արիս եւ
զանարիս եւ զբացումն ի նոյն ազգէ թագաւո-
րութեանն Պարթեւաց եւ Պահլաւակաց՝ թա-
գաւորէ ինքն² [.]]: Եւ եղեւ յետ մա-
հուանն Արտեւանայ՝ որդւոյ Ղաղարշու արքային
Պարթեւաց թագաւորեաց Արտաշրի որդի Սա-
սանայ միահեծան տէրութեամբ ի վերայ Բա-
բելացւոց եւ Ասորւոց եւ Մարաց եւ Պարսից եւ
Պարթեւաց ամս Ծ. եւայլն:

Երրորդ. Մամիկոնեանների հատուածը
վերջանում է մի տողով, որը մինչեւ այսօր չէ
հասկացուած եւ որը Հ. Ա. Մատիկեաննին հին
է երեւցել (Անանուն կամ կեղծ-Սերէսու,

¹ Զսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ
Սասանայ բառնալով զթագաւորութիւնն Պարթեւաց (Խոր.
Բ. կթ.)

² Յայսմ ժամանակի սպանանէ Արտաշրի որդի Սա-
սանայ զԱրտաւան Պարսից արքայ եւ թագաւորէ ինքն.
Ասողի Ա. 4, Էջ 51. Պարբ. 1885:

Էջ 54): Ղաղարի Ա ճառի մէջ Մամիկոնեան-ների հատուածից առաջ յիշուած էին հայ Ար-շակունիներից թագի բարձուիլը եւ Վարդան պսակեալի գործերը. այդ առիթով աչա Վար-դանի տոհմական ծագումը հետեւում էր դրան Ղաղարի Ա ճառի մէջ. յետոյ կրկին ծագ-ման պատմութիւնը փակուում էր “յայսմանէ այն է սպարապետն՝ նախադասութիւնով, ուր յիշուում է Վարդան պսակեալը, սպա-րապետը:

Ամիոփելով մինչեւ այժմ մեր ասածները Անանունի մասին, գալիս ենք այն եղրակացու-թեան, որ Սիմ. Ապարանցուց յետոյ՝ վերջին երեք դարերում Անանունը խմբագրուել է այն-պէս, որ նրա հատուածները տեղափոխուած են, նոր մասեր են կցուած նրան եւ ինչ ինչ մասեր նրանից դուրս են ձգուած: Նախ քան Ապա-րանցին՝ Անանունը յանուանէ Ղաղարի պատ-մութեան առաջին մասն էր, իսկ Ապարանցուց յետոյ նա դարձաւ Սեբէոսի պատմութեան սկիզբը: Իցին թէ դտնուէր Ապարանցու ձեռ-քում եղած Ղաղարի պատմութեան ձեռագիրը, ուր Ա ճառի մէջ պատմուած էին սոսկ եւ-եթ երեք գաղթի՝ բարելական, հրէական եւ ձենական, եւ չորս տոհմի ծագման՝ Հայկազեան, Բագրատունի, Արշակունի եւ Մամիկոնեան պատմութիւնները. ապա վճռականապէս (իսկ արդեանս միջնորդապէս՝ Ապարանցու ցուցմամբ) պիտի հաստատուէր հանգուցեալ Գր. Խալա-թեանի ենթագրութիւնը թէ Անանունի Բ մասը՝

մասամբ տարբեր հեղինակի գործ է, եւ միան-գամայն ապարգիւն պիտի նկատուէր Սեբէոսին եւ Անանունին միացնելու փորձը՝ ինչպէս որ նկատուած իսկ է վաղուց Պ. Ստ. Մալխսասեանի գործը:

Սեր այս եղրակացութիւնը համամիտ է Սեբէոսի եւ Ղաղարի ձեռագրերի հանդամանք-ներին: Յայտնի է, որ Էջմիածնի թիւ 611 = հին ցուցակի թիւ 2463 ձեռագիրը, որը բո-վանդակում է ի թիւս այլեւայլ պատմագրերի՝ նաեւ Ղաղարի եւ Սեբէոսի պատմութիւնները, գրուած է 1672 թուին Վարդան Վարդապետի կամ դիւրապետի հսկողութեամբ Բաղէշում: Այդ ձեռագրից են ծագել 19րդ դարի կեսե-րին Սեբէոսի մի քանի ընդօրինակութիւնները. նոյնպէս եւ Ղաղար Փարպեցու ձեռագրերը այդ ձեռագրից են ընդօրինակուած (Հմտ. Պատմա-գիրք Հայոց՝ Ղաղար Փարպեցի, Յառաջաբան, “Արարատ”, 1891, Էջ 148): Կը նշանակէ Ապարանցուց յետոյ են կատարուել Ղաղարի Առաջին Ճառի յապաւումը եւ Անանունի կամ Կեղծ-Սեբէոսի ստեղծուիլը իրենց այն բոլոր փոփոխութիւններով, որոնք յիշեցինք վե-րեւում:

Այս խնդիրը միայն մի լուսաբանութեան կարիք ունի. Սեբէոսի առաջին հրատարակիչը Միհրդատեան յիշում է մի ուրիշ ձեռագիր եւս, բովանդակութեամբ Սեբէոսի պատմութեան եւ Յակոբ Սծննայ հայրապետի աղօթքի, չի ասում թէ որը առաջ եւ որը յետոյ, միայն

“Կայր եւս ի միջի նորին աղօթք... Յակովը այ
Մծբնացւոյ:” Չեռագիրը գտնուած է, բայց
Միհրադատեանը գրում է, “Եւ գոյր ի վերջն
զայս յիշատակարան.” Արդ գրեցաւ... Թուին
Ռժէ, ի սուրբ եւ տիեզերական ուխտս Մար-
մաշնեու վանաց ։ Եւ էր գրոշմեալ ի ճակատն
Պատմագիրք Սեբէսոփի ի Հերակլ:

Մեղ թուում է թէ այս յիշատակարանը
եւ Ռժէ թիւը Սեբէսոփի պատմութեան գրու-
թեան չի վերաբերում, այլ նա կամ Յակոբ
Հայրապետի աղօթքի գրութեան տարին է՝ յե-
տոյ կաղմի մէջ կցուած Սեբէսոփի պատմութեան
եւ կամ Ռժէ միալ ընթերցանութիւն է Ռժէ,
եւ ահա թէ ինչու. նախ՝ Միհրգատեանը միեւ-
նոյն այդ ձեռագիրը նկարագրելիս ասում է.
“օրինակի միոյն չգոյր յիշատակարան՝ եւ էր
թերի. որ էր բոլոր գրով՝ հին թուղթ բամ-
պակեայ եւ թուի թէ ի վեշտասաներորդ գա-
րու գրեալ իցէ:” Այս թուի թէ բառերը
կամ նրա համար են, որ Ռժէ թուականը
կցուած էր Յակոբ Հայրապետի աղօթքին միայն
եւ կամ որ գժուար է եղել որոշել Ռժէ թէ
Ռժէ կարգալ: Երկրորդ՝ Վիեննայի Միհր.
Հարց, թ. 52 ձեռագիրը եւ թ. 86 համեմա-
տութիւնը ունին մանրամասն յիշատակութիւն
Պօղոս Վարդ. Յովիսանեանից եւ Սեբովք Պե-
տրոսեանից գրուած 1851 եւ 1852 թուերին,
այսինքն՝ Միհրգատեանի Հրատարակութեան
տարում, եւ չեն յիշում մի ձեռագիր Մար-
մաշնում գրուած Ռժէ = 1568 թուին, թէ-

պէտ պիտի յիշէին՝ եթէ այդպիսինը լինէր,
որովհետեւ նրանք ինսամքով յիշում են յա-
նուանէ եւ անանուն “նորոգ”, օրինակների եւ
տարածուած լուրերի մասին թէ շահագիտական
նպատակները գեր են խաղում կեղծելու ձեռա-
գրերի բուն արժանիքը: Երբորդ Հ. Յ. Տա-
շեան թ. 52 եւ 86 ձեռագրերի նկարագրու-
թեան մէջ նոյնպէս առիթ չունի յիշելու “Մար-
մաշնու, օրինակը, միայն էջ 347թ (ցուցակ
վիեն. Միհրթ. Հարց Մատենադարանի ձեռա-
գրերի) յիշում է կասկածով Միհրգատեանի
տեղեկութիւնը Ռժէ թուից յիշուած ձեռագրի
մասին եւ աւելացնում, բացասելով Միհրգա-
տեանցի հազորդածը՝ Ռժէ թուի ձեռագիրն իր
ձեռքին ունենալու մասին, որ “յէջմիածին ինքն
էր ընդորինակած:”

Այս բոլորը հարազատ է այն կասկած-
ներին, որոնք Միհրգատեանցի Հրատարակու-
թեան շուրջը գոյութիւն ունէին իւր ժամանակ.
Հաւասարին այն է լոկ, որ ՌժէԱ = 1672 թիւն
է մնում ինչպէս Ղազարի նոյնպէս եւ Սեբէսոփի
ամենահին ձեռագրի մասին. իսկ Սիմեոն Ապա-
րանցու օրինակը աւելի հնագոյն մի ձեռագիր
էր՝ “Ղազարի Առաջին ճառով:”

Գալով այն հարցին թէ որտեղից է քա-
ղուած եւ ով է յերիւրել Սեբէսոփի = Անա-
նունի Բ. դպրութիւնը ուրեմն եւ թէ ով է
“Ղազարի Առաջին ճառը,” Սեբէսոփին տուել —
այս ինդիրը գիւրաւ կարող էինք լուծել, եթէ
հնարաւորութիւն ունենալոյնք էջմիածնում աշ-

խատելու, կամ եթէ խորենացու գիտնական հրատարակութիւնն ունենայինք ձեռքի տակ: կասկած չը կայ որ Սեբէոսի Բ. դպրութիւնը սկզբից մինչեւ երկանուն եւ եռանուն ժամանակագրութիւնը, մինչեւ “Եւ եղեւ յետ մահուանն Արտեւանայ՝ որդւոյ Վաղարշու” հատուածը՝ բացառութեամբ Մամիկոնեան գաղթի պատմութեան, առնուած է ինչպէս ուրիշները նկատել են, խորենացու եւ Ասողիկի պատմութիւններից: Գալով սինխրոնիզմ ցանկերին, պարզ է որ հին դարերի գործ համարուիլ նրանք չեն կարող որովհետեւ միայն 11րդ դարից սկսած Հայոց մէջ սինխրոնիզմ ցանկեր են հանդէս դալիս եւ Ե դարից սկսած՝ երր պատմական մատենագրութիւնը խանձարուրի մէջ էր, ոչ ոք չէր մոտածում սինխրոնիկի մասին, այլ միայն հատակոտոր ազգային յիշատակարաններով էր լրանում ամէն պահանջ: Մի նշանաւոր սինխրոնիկ պատմութիւն ունի Աւետիս Եւդոկիացին՝ կազմած 1714 թուից, ձեռագիր է եւ անյայտ մնացած քննադատութիւնից (Ներսիսեան Դպրանցի թ. 26 ձեռագիրը): Յառաջաբանի մէջ նա բացատրում է, որ ուսանող սերունդը անկարող է հանդիսանող պատմութիւնը սովորել առանց սինխրոնիկի, որովհետեւ յիշատակարանները շատ են եւ յաճախ հակասական: Այդ պատճառը, որ դրդել է Աւետիս Եւդոկիացուն կազմել իր խիստ ծանր աշխատանքը, շատ նշանակալից է եւ պիտի լինի նրանց համար մանաւանդ, որոնք ենթադրում

են թէ Անանունի սինխրոնիկը Ե. դարուց կարող է լինել: Հնարաւոր է ընդհակառակն մտածել, որ Աւետիս Եւդոկիացու նման որեւէ պատմամէր Սիմ: Ապարանցուց յետոյ Ղազարի Առաջնառը խմբագրելու ժամանակ, սինխրոնիկ ցաները կազմեց եւ կցեց Անանունին այն չափով, որով պէտք էր Անանունը իրեւ Սեբէոսի գործը ընդունելի կացուցանել — մինչեւ Սեբէոսի շոշանը¹:

1 Ներսիսեան Դպրանցի թ. 26 ձեռագիրը մի շաբաթականական ուշադրութեան արժանի է. նախ Հայկացանի շրջանի պատմութիւնը Գր. Մագիստրոսի յիշած մակդիրներով է հաղորդուած եւ խորենացու հատուածները տեղ սահաւորի չափով են: Երկրորդ՝ Եւդոկիացին իր դարը 1650—1714 մանրամասն է յիշել: Երրորդ՝ Աւետիս Եւդոկիացուն շարունակել է նոյն ձեռագրի մէջ Յակոբ Շամանիցի վարդապետը՝ յետոյ կաթուղիկոս եւ արան Էլ շարունակել է Ղունիկանսունն մինչեւ 1788 թիւը՝ իւրաքանչիւրն իր ժամանակիւաց նշանաւոր գեպերի նկառագիրն անելով (Այդ մասում յիշուած է ի թիւս այլըց նաեւ Գէորգ Եպիսկոպոս Եւդոկիացու հալածանքը, որը մինչեւ այժմ յայտնի էր միայն Զամբուից էջ 212թ ձեռագիրը յիշում է Գէորգ Եպիսկոպոսի բանագրութիւնը գլւասորապէս Պատրիարքարանի եւ Կըմիածնի աթոռի մէջ եղած անտեսական եւ իշխանաօթրական պայմանների լուսաբանութեամբ): Անանունի եւ Աւետիս Եւդոկիացու Անիխրոնիկ ցանկերը կազմուած են միատեսակ ուղղութեամբ, բայց ժամանակագրութեամբ տարրերում են: Աւետիս Եւդոկիացին, որ բազմաթիւ ծանօթութիւններով Հնագոյն պատմիչների տարածայն տեղեկութիւնները յիշում է եւ նրանց հաշուեցնելու անհնարաւորութիւնը խոստովնում, Անանունի սինխրոնիկ ցանկերը լրացնեան է տալիս եւ չի յիշում ոչ այդ ցանկերը եւ ոչ Էլ ընդօրինակում է նրանց: Երեւի կամ Անանունի ցանկերը անյայտ են նրան եւ կամ խոսան է նա Ճանաւել այդ ցանկերը:

Բ. Անանունի ժամանակը եւ նպատակը:

Այն լուսաբանութիւնները, որոնք վերեւում տեսանք Սիմեոն Ապարանցու ցուցումների առիթով, բացի Պաղարի Առաջին ճառի, տեկստը սահմանելուց՝ պարզում են նաև այն հարցը, թէ ինչ հետաքար ժամանակում եւ նպատակով է կազմուել Պաղարի Առաջին ճառը կամ Անանունի յիշատակարանը:

Նախ՝ ժամանակը, որ պարզուում է այսպէս: Մամիկոնեան տոհմի պատմութիւնը երեք մասերից է շաղկապուած. 1. Մամի եւ կոնակի գաղթը, 2. Ճենաց երկրի նկարագիրը եւ 3. Ճենբակուրի քաջագործութիւնը: Այս մասերը երեք տարբեր աղբիւներից են քաղուած: Առաջին հատուածը՝ Մամի եւ կոնի գաղթը յայտնի է Փաւստոսի Պատմութիւնից (Էջ 199, 240 եւ 241, Հրատ. 1832), ուր Մամ եւ կոն անունները հանդիպում են ձեռագրերի մէջ Ման(ուէլ) կոն եւ կոմս ձեւերով: Այդ շեղումը՝ բացի ձեռագրական պատճառներից, կարէ նկատուիլ նաև աւանդութեան տարբեր վարիանտների արդիւնքը: Սիմ. Ապարանցու (= Պաղարի Ա. Ճառ = Անանուն) Էջ 28—30 “Զի պատմագիրն ոչ ախորժեալ... Ազգ մեծագոյն հզրացեալ”, պատմուած է այդ աւանդութիւնը այն վարիանտով, որը յայտնի է նաև Խորենացու Բ. 81-ից եւ Սեբէոսի Բ. Դպրութիւնից: Այն հարցը թէ Պաղարի Առաջին ճառի, հեղինակը — Սիմ. Ապարանցու աղ-

բիւրը — ինչպիսի եւ որ աղբիւրից է օգտուել՝ Փաւստոսից թէ որեւէ այլ աւանդութիւնից, այդ հարցը կարեւոր չէ առ այժմ, բայց կարող ենք ասել, որ՝ ինչպէս ներքեւում կը տեսնենք “Ղաղարի Առաջին ճառի”, հեղինակը Սեբէոսից եւ Խորենացուց կանուխ լինելով՝ կարէր օգտուիլ կամ որեւէ ժողովրդական աւանդութիւնից եւ կամ Փաւստոսի նախագոյն անտիւեղծ օրինակից: Երկրորդ հատուածը — Ճենաց երկրի նկարագիրը քաղուած է կեղծ Խորենացու Աշխարհագրութեան էջ 616 “Ճենաստան յելից կարով Սկիւթից”, հատուածից, որից Խորենացին եւս օգտուել է Բ. 81 մէջ “Աքանչելի է աշխարհն առատութեամբ”, հատուածի համար: Այս քաղուածը ժամանուած է Սիմ. Ապարանցու, Էջ 30—31 “Նախնաց անուամբն պարսպեալ... եւ զբնակիչս յզփացուցեալ”: Երրորդ հատուածը — Ճենբակուրի քաջագործութեան աւանդութիւնը քաղուած է կամ Ղեւոնդ Պատմիչի ՓԱ. Էջ 38—40 (Պետերբ. 1887) եւ կամ մի աւանդութիւնից, որից օգտուել է նաև Ղեւոնդը, որը աւելի հաւանական է՝ ինչպէս ներքեւում կը տեսնենք. այդ է Սիմ. Ապարանցու, Էջ 31—32 “Բնաւ հինից զնա ոչ տեսեալ... զՃեն անուն ի միտ բերեալ”¹:

1 Սիմ. Ապարանցու ոտանաւորի Էջմիածնական սիսալալստ հրատարակութիւնը իր իջահամարների մէջ սիսալ թուակարգ ունի: Սակայն այդ չեղինդ թիւրիմացութեան տեղիք տալ ոտանաւորի ամբողջութեան մասին, որովհետեւ նրա ամբողջութիւնն անթերի է, ինչպէս տապարական թերթերի թուակարգն է այդ ցոյց տալիս:

Այդ բոլորից ահա հետեւում է, որ
“Ղաղարի Առաջին ճառը” կարող էր գրուել
ամենավաղը Ղեւոնդ Պատմիչի ԺԱ Գլխի ժա-
մանակագրութիւնից զինի, ուր պատմուած է
Վլիթ Ա. ամիրապետի օրով Մուհամեդ զօրա-
վարի աշխարհակալական ձգտման մի նմուշը,
իսկ Վլիթ Ա. ապրում էր 705—715թ.: Աա-
կայն եթէ համարենք թէ “Ղաղարի Առաջին
Ճառի” աղբիւրը Ղեւոնդի պատմութիւնը չէ, որ
աւարտուած է 788թ.: այլ որեւէ ուրիշ ա-
ւանդութիւն, ապա չենք կարող այդ աղբիւրն
աւելի վաղ շրջանում որոնել, քան գեպքի
ժամանակը, այն է՝ Ը գարի առաջին քառորդը:
“Ղաղարի Առաջին Ճառի” ծագումը նոյնպէս
այդ համեմատութեան հետ է կապուած:

Բայց այս եղբակացութիւնը կարող է
հեշտութեամբ նսեմանալ մի հարցի առաջ, որը
եւ կանխում ենք մենք. արդեօք Սիմ. Ապա-
րանցին ինքը չէ, որ քաղել է Մամիկոնեան
տոհմի պատմութիւնը այլեւայլ աղբիւրներից
հատուածօրէն եւ իր քաղուածքը վերագրել է
Ղաղարին՝ իրեւ նրա պատմութեան Առաջին
Ճառը, որը այսօր մէջ տեղում չի երեւում:
Ուրիշ խօսքով առած՝ արդեօք մի կեղծիքի հետ
չի մեր ուշադրութիւնը: Այս կասկածը եւ
հարցը անտեղի է հանդիսանում, նկատելով այն
մանրակրկիտ համեմատութիւններն ու ցուցում-
ները, որ Ապարանցին անում է իր միւս աղ-
բիւրների մասին, որոնք են Աստուածաշունչ,
Խորենացի եւ “Ղաղարի Առաջին Ճառը”, համե-

մատութիւններ, որոնք արդարանում են եւ
գնահատելի են այսօր իսկ: Մանաւանդ ուշա-
դրութեան արժանի են Խորենացու եւ “Ղա-
ղարու Առաջին Ճառի” համեմատութիւնները,
որոնք ինչպէս տեսանք գործիս երկրորդ գլխից,
արդի Անանունի կամ կեղծ Սերէսոփ Ա. դպրու-
թեան ծշտագոյն պատկերն են տալիս: Նրանք
ոչ թէ կեղծիքն են վկայում, այլ Անանունի
արդի խառնակուած վիճակի մի իմաստաւոր
ստուգութիւնն ու նախնական տեկստի գյու-
թիւնը: Եւ այդ բոլորը տեսնելով՝ անհնար է
հանգիսանում այլեւս Սիմ. Ապարանցուն թէ-
կուզ առանց միտումի որեւէ կեղծիք վերագրել:
Յետոյ՝ ինդրին ըստ էութեան մօտենալով, տես-
նումը ենք որ Վլիթ Ա. ի շրջանի պատմութեան
միակ աղբիւրը՝ Ղեւոնդի ԺԱ գլուխը որոշ
տարբերութիւն ունի Սիմ. Ապարանցուց. այդ
տարբերութիւնն անշուշտ չէր լինիլ եթէ վեր-
ջինս օգտուէր Ղեւոնդի ԺԱ գլխից: Ղեւոնդ
գրում է. “Բանակէր առ եզր գետոյն հզրա-
գունի, որ Բօտիսն կոչեն, իսկ Սիմ. Ապարանցին՝
“ըստ խրատուն զՓեյսունը անցեալ”: Այս տար-
բերութիւնը Սիմ. Ապարանցին չի նկատել,
որովհետեւ նա քաղուածք էր անում՝ ինչպէս
ինքն էլ ասում է, “Ղաղարի Ա. Ճառից” եւ
ոչ թէ Ղեւոնդի ԺԱ գլխից: Դրա հակառակ
արդի Անանունի Առաջին մասը եւ Ղեւոնդի ԺԱ
գլուխը մի հարազատ ոճաբանութիւն ունին:
Անանուն գրում է. “Պատասխանի ետ նմա-
չայկն եւ ասէ՝ Շուն ես դու եւ յերամակէ

շանց՝ գու եւ ժողովուրդ քո՞յ: Ղեւոնդ գրում
է միեւնոյն ոճով՝ որ Ճենքակուր եւ իր մարդիկ
Պահմէդին “գրեն բանիցն պատասխանի եւ ա-
սեն” : այլ գիտասջիր, զի լիրք քան զամենայն
շուն իցես գու եւ ի տոռն պագչոտութեան վա-
րանեալու: Այս պարագան ցոյց է տալիս, որ
նախ Անանուն (= Ղաղարի Ա. Ճառի Հեղինակը)
եւ Ղեւոնդ իրենց պատմութեան օրոշ մասերը
միեւնոյն աւանդութեան տարբեր վարիանտ-
ներից են քաղում եւ երկրորդ՝ թէ հարազատ
ոճաբանութիւնը եւ թէ գետի տարբեր անուա-
նակոչութիւնը այդպիսի վարիանտներից են ան-
ցել Ղեւոնդին եւ Անանունին == “Ղաղարի
Ա. Ճառի, Հեղինակին, վերջնիցս էլ Սիմ. Ապա-
րանցուն: Այսպիսով Սիմ. Ապարանցուն կեղծիք
վերագրել եւ “Ղաղարի Ա. Ճառի”, մասին նրա
ցուցումը կասկածի տակ դնել՝ համարելով որ
նա ինքն է քաղուածք կատարել՝ Ղեւոնդից եւ
ոչ թէ “Ղաղարի Առաջին Ճառից” — մենք
չենք կարող:

Ուստի ի Հետեւումն աղեիւթների այդ հա-
մեմատական պատկերի “Ղաղարի Առաջին Ճառը”
այլապէս Անանունի պատմութիւնը, կազմուած
կարող է լինել և դարի առաջին քառորդից ոչ
վաղ, այն է 705 թուից զինի:

Երկրորդ՝ Նպատակը: Այսուհետեւ
երբ յայտնի է յիշատակարանի ծագման շրջանը,
ինքնուսինքեան լուծուում է նաեւ նրա նպա-
տակի հարցը. դրան օգնում է մի կողմից ազ-
գային պատմութեան եւ մատենագրութեան այն

վիճակը, որ յայտնի է ուրիշ աղբէւրներից
Ը դարի համար, եւ միւս կողմից ինքը յիշատա-
կարանի բովանդակութիւնը իր համամիտ տե-
ղեկութիւններով միեւնոյն շրջանի ձգտումներն
է հանդիսագրում մեր առաջ. այդպիսով ստա-
ցուում է մեր ազգային կեանքի եւ պատմական
մատենագրութեան ամբողջ պատկերը փոխա-
դարձ ազդմամբ, բնական եւ պատճառաբանա-
կան վիճակի մէջ: Այլապէս ասած՝ “Ղաղարի
Առաջին Ճառը”, հանդիսանում է արձագանքը
թագաւորական գաշին ձգտող հայոց ֆէոդո-
լական տոհմերի ջանքերի, այն տոհմերի՝ որոնք
միջին դարերում եւ յատկապէս է եւ և դա-
րերում կարիք ունէին իրենք իրենց ցուցագրելու
իբրեւ շառաւիղներ այս կամ այն թագաւորա-
կան ցեղի:

“Ղաղարի Առաջին Ճառի” մէջ հաղոր-
դուած էր Հայկազն, Արշակունի, Մամիկոնեան
եւ Բագրատունի տոհմերի առասպելական ծա-
գումը: Բայց Մամիկոնեան տոհմը եւ նրա
պատկանոր սպարապետը, Ճենական փառա-
պանծ տոհմից էին, Բագրատունեանց տոհմն էլ
Հայկազն էր եւ նրանք զարգացել ու զօրացել
էին յիշեալ դարերում: Իսկ ինչ միտք ունէր
յիշել յիշատակարանի մէջ արդէն սպառուած
տոհմերին Հայկազունի եւ Արշակունի հարս-
տութիւնները. այս սպառուած տոհմերի անցեալ
փառքի շարունակութիւնը պիտի կազմէր “պա-
կաւոր սպարապետը, եւ իր տոհմը, որը Ճենաց
նշանաւոր թագաւորների հատուածն էր եւ

սպառուած տոհմերի իրաւունքների ժառանգը
պիտի լինէր։ Եւ իսկապէս և դարից սկսած Մա-
միկոնեան պատմիչների հաղորդածը վահանի,
Գայլ-Վահանի, Սմբատի եւ Մուշեղի քաջու-
թիւնների մասին ցոյց է տալիս, որ ստեղծուած
էր կուսակցական ձգտումն, առաջ էր եկել
միապետական, պսակման տեսչանք։ Թովմա
Արծրունին՝ թէպէտ ուշ դարերից, հաղորդում
է, որ Վարդանի թագաւորական իրաւունքների
մասին կասկած չը կար իւր դարում։ Մի շարք
Մամիկոնեան պատմիչների գոյութիւնը նշնպէտ
այդ նախարարութեան ծաղկման եւ յիշեալ
ձգտման արդիւնքն է, ինչպէս է՝ Փաւստոս,
Եղիշէ, Ղազար, Զենոր, Յովհան Մամիկոնեան
եւ — “Ղազարի Առաջին Ճառը” որի մէջ նյժն
ձգտման արձագանքն եղաւ “պսակեալ սպա-
րապետի, անուան կցումը նրա տոհմի ճենական
արքայական ծագման աւանդութեան։ Մրցակից
էին արդեօք նրա գրութեան ժամանակ Մամի-
կոնեան եւ Բագրատունի տոհմերը թէ ոչ՝ տե-
ղեակ չենք նրա տողերից. բայց գրականութեան
այդ պատառիկը՝ որչափով նրա մէջ արտա-
ցոլում է կեանքի պատկերը, վկայում է, որ նա
գրուած է քէոդոլական իշխանութեան այնպիսի
զարդացման բոպէներում, երբ հարց կարող էր
լինել կամ Մամիկոնեան եւ կամ Բագրատունի
տոհմերի մասին միայն, եւ երբ դեռ եւս գոյու-
թիւն չունէր խորենեան ուժեղ գրչի հարուածը
յօգուտ Բագրատունի տոհմի, այլ՝ ընդհակա-
ռակն Փաւստոսի, Ղազարի եւ Յովհան Մամի-

կոնեանի խմբագրութիւններն ապացուցա-
նում էին որ Մամիկոնեան տոհմի անցեալը
նրան արքայական պատուի է արժանացնում։

Յիշուած ձգտման եւ շրջանի յայտնի
սիմպումն է նաեւ այն հանդամանքը, որ այդ
երկու տոհմերից իւրաքանչիւրի ծագման մասին
երկերկու տարբեր-տարբեր աւանդութիւններ
կային։ Ինչ պայմանների մէջ էին կազմուում
նրանք։ Սկսենք այնտեղից, որ Փաւստոսի Ե-
դպրութեան այն էջերը, որ յիշեցինք վերեւում,
իրբեւ Անանունին համաձայնող հատուածներ,
հանդիսանում են պարզ անախրօնիզմի վիճա-
կով։ Թէպէտ Արշակի եւ Շապուհի, ինչպէս եւ
Մանուելի եւ Արտաւազդի կամ Պապի եւ Մու-
շեղի իսօպերը եւ գործերը՝ ուր յիշուած է
Մամիկոնեանների ծագման աւանդութիւնը ժո-
ղովրդական աւանդութեան նիւթ կարող էին
դառնալ հէնց Դ դարում, բայց անհնար է որ
բիւզանդական կրթութեան տէր անձնիք պատ-
մութիւն համարէին այն աւանդութիւնները
հէնց իրենց շրջանում, ժամանակակից գրեթէ
ականատես մարդու պայմաններում։ Սերունդներ
պիտի անցնէին, որպէս զի առասպելական երգը՝
իրբեւ միակ յիշատակարանը անցեալի մասին,
դառնար առիշգոյէ այլ նիւթերի պատմութեան
աղբիւր։ Իսկ մինչ այդ՝ երգը փոփոխում եւ
դարերի հայեացքին ու տենդենցին էր ենթար-
կուում, պատմական բոլոր երգերը, միջնադարեան
վիպասանների եւ աշուղների երգածները կու-
սակցական միտումից էին ծագում, մանաւանդ

ֆէոդոլական տոհմերի քաղաքական ձգտումների, կրօնական հակումների եւ խնամիական կապերի արտայայտութիւնները՝ Պատմական պամֆլետները՝ նոյնպէս¹ Կովկասեան լեռնական ցեղերի մէջ բազմաթիւ աւանդութիւններ կան ցեղերի իշխանական եւ արքայական ծագման մասին եւ նրանց մէջ թագնուած ճշմարտութեան աստիճանը սահմանել անհմանել անհնար է մինչեւ անդամ, եթէ կողմանակի աղքիւններ չը գտնուին: Նցնը նաեւ հայոց ֆէոդոլական մրցող տոհմերի աւանդութիւնների մասին պէտք է նկատել՝ առթիւ Բագրատուննեաց ծագման ըստ Խորենացու հրէական աստուածընտրեալ, ըստ Ղաղարի Առաջին Ճառի հայկազեան արինից, հաւասարապէս նաեւ Մամիկոննեան տոհմի ծագման տարբեր վարիանտների առթիւ ըստ Խորենացու եւ ըստ Անանունի = Ղաղարի Առաջին Ճառի:

Մեկնուում է նաեւ այն հարցը թէ ինչո՞ւ կեղծարար հեղինակը այդ քաղաքական տենդենցը արծարծելու համար գործիք է դարձրել Ղաղար Փարպեցու անունը, իր աշխատութիւնը նրա անուան վերագրելով: Դեռ Խորենացին չը կար իր հեղինակութեամբ (լիներ անդամ՝ նա Բագրատուննեաց կուսակիցն էր եւ ընդդէմ այդ տոհմի որեւէ աւանդութեան հրատարակումը Խորենացու անունով չը կարող ընդունուիլ): Բայց կար ճարտասան եւ Փիլիսոփայ Ղաղարը,

¹ Բէկել՝ Psychologie der Volksdichtung: Գր. Տէր-Պօղոսեան՝ Լեռնականք Բ. Թագաւորեան Հասարակութիւն:

Ճշմարտասէր եւ ստուգաբան, արձանախօս սանատորուկեան շրջանի: Ազգեցիկ էր Ղաղար նոյն խսկ այնքան ընդարձակ շրջանով, որ Խորենացին նրանից յետոյ յատկապէս նրա տողերով իր աշխատութեան արժանահաւատութիւնը կամեցաւ ապահովել՝ ինչպէս նկատեցինք նախորդ գլխում: Եւ համբաւաւոր Ղաղարի պատմութեան կցեց իր կեղծիքը Անանունը կամ ԿեղծՍերէսը, որի Մամիկոնեան եթէ ոչ ծագումը գոնէ շահախնդրութիւնը անկասկած է: Թէ ովէ է նա, գիտուար է ասել. բայց կարող է լինել կամ Ղաղարի պատմութիւնը խմբագրողը ուշ ժամանակում եւ կամ շատ մօտ կանգնած մի անձն այն գրական շարժման, որի գպրոցն անշուշտ Տարօնում էր գտնուում: Այդ նկատում ենք մենք եւ թուում մեր հիմքերը. — Ինչպէս Արշակ Արշակունու գաղթի պատմութիւնը գէպի յունաց երկիրը կցուած է Մարտատեան գատչի նկարագրին Ղաղարի մէջ, նոյնպէս Ճենական գաղութի պատմութիւնն է կցուած Ճենաց Երկրի գովաբանական նկարագրին Անանունի = “Ղաղարի Առաջին Ճառի” մէջ. յօրինուածքից յետոյ ոճաբանութիւնը մէկ է այսպէս. Ղաղար Փարպեցին Արարատեան Դաշտի համար գրում է. “Բերէ Աինքեան զօրինակ լիութեան ըստ բանի զրցն, զերկրին Եգիպտացւոց եւ զգրախտին Աստուծոյ, Իսկ Անանուն = “Ղաղարի Առաջին Ճառը” ըստ Ս. Ապարանցու ունէր —

“Այլ եւ զաշխարհն ներբողեալ
Մինչ Ագենայ համեմատեալ”:

Բացի այդ՝ Հայկի խօսքը “Ճուն ես դու
եւ յերամակէ շանց՝ դու եւ ժողովաւրդ քո՛,
որ յիշում է Անանոն եւ ապա նաեւ Վարդանի
պատմութեան մէջ պատահում է “Ճուն զնա
կոչեաց, ձեւով, մի քանի անգամ՝ իբրեւ
թշնամանքի սովորական արտայայտութիւն ունի
Յօհան Մամիկոնեանը. “Այլ գիտեմ զի սուտ
ես եւ իբրեւ զշուն քծնիս, էջ 31, հրատ.
1832, “ապա թէ ոչ, մեռանիս որպէս զշուն, *ib.* 32. “Ի քո աստուածքդ շուն խառանեմ, որ
փոխանակ դոցա հաջն ի ձեզ, *ib.* 37. “Պար-
սից արքային եւ մեռեալ շուն մի ոչ տամ, որ
Ճաշ ուտէ՝ առանց գնոյն, *ib.* 37: Արտայայ-
տութեան այդ ձեւը տարածուած էր Մամիկո-
նեան գաղութի մէջ ոչ միայն պարսիկ ու հայ
քաջերի խօսքերի վիպական արտաբերութեան,
այլ եւ Ճենբակուրի եւ Մահմէդի դիմառնական
զըսցի վարիանտների մէջ, ինչպէս տեսանք վե-
րեւում:

Անանունի ժամանակի, տենդենցի եւ հե-
ղինակի հարցերը եւ նրանց լուծումը սերտ կա-
պուած են մեր պատմական մատեն ադրու-
թեան զարգացման փուլերի հետ, որոնք նկա-
րագրուած չեն գեռ պատճառաբանական կար-
գով: Առանց այդ փուլերը գէթ համառօտակի
յիշելու անհնար է յիշեալ հարցերն ու նրանց
պատասխանը պարզած համարել: Ահա այդ
հարցերի մի համառօտ ստորագրութեամբ կու-

զենանք վերջացնել մեր խօսքը Անանունի մասին,
նկատելով որ Փաւստոսի պատմութեան խմբա-
գրութիւնը մեր պատմական մատենագրութեան
զարգացման ընթացքում յատուկ մի փուլ է
պատկերացնում:

Արդէն վերեւում ասուեց մի քանի ակ-
նարկներով, որ Փաւստոսի խմբագրութիւնն ու
խառնակումը կանուխ էր քան Ղազարի խմբա-
գրութիւնը, իսկ Ղազարինը կանուխ քան Խո-
րենացու խմբագրութիւնը. Սերէոս Ղազարից
յետոյ, բայց Խորենացուց կանուխ: Այժմ կը
պարզենք մեր հայեացքն այդ բոլորի մասին
ընդհանուր գծերով, մանրամասն հիմքերն ու
տեսութիւնները նրանց մասին թողնելով ուրիշ
առիթի:

Մկրեց սկսած մեր պատմական մատենա-
գիտութիւնը երեք զարգացման շրջան է անցել
մինչեւ հասել է Յովհաննէս Կաթողիկոսը, որի
պատմութիւնը վերջին շրջանի կազակարն ունի:
Առաջին շրջանում՝ մեր հեղինակները բացի
թարգմանութիւններ անելուց, կենսագրում էին
պատմական անցուգարձները՝ կամ եկեղեցական
եւ կամ քաղաքական խոշոր անձանց հետ կա-
պելով այդ անցուգարձները. այդ կենսագրա-
կան բնոյթ ունեցող երկերը մեզ չեն հասել,
նրանց անունները միայն մենք գիտենք, իսկ բո-
վանդակութեան մասին գաղափար են տալիս մեր
պատմական յիշատակարանները, բացի մէկից,
այդպէս են “Գիլը Գրիգորիսին (Ագաթանգե-
զոսի պատմութեան մէջ խմբագրուած), Կերսէս

Մեծի վարքը (Փաւստոսի պատմութեան մէջ խմբագրուած), Ս. Մեսրոպի վարքը — Կորիւնի, Ս. Սահակի, Վարդան պատկեալ սպարապետի եւ Վահան Մամիկոնեանի վարքերը (Ղաղարի երեք գրուագների մէջ): Տառերի գիւտից յետոյ դ եւ Ե գարերի այդ պատմական դէմքերի մասին կենսագրութիւնները բազմացան, Աստուածաշնչի Մակարէների, Թագաւորների եւ դատաւորների կենսագրութիւնների նման մէկից աւելի գրքեր երեւացին միեւնոյն դէպքի եւ անձի մասին. Եւ ահա կարիք զգացուեց հատակոտոր յիշատակարանները իրար կցել Աստուածաշնչի օրինակով՝ արհեստական թուահամարով. Նպատակը պարզ էր — որպէս զի պատմութիւնը ի դէմն նշանաւոր անձանց՝ տարբեր հեղինակներից գրուելով անդամ՝ պահպանէր քրօնիկական ընթացքը. այդ նպատակին հասնելու համար, երկու կուսակցութիւն իրենց միջներն առաջարկեցին. մի կուսակցութեան մարդիկ Հայոց պատմութեան սկիզբը համարելով քրիստոնէութեան մօւտքը Հայաստան՝ Ագաթանգեղոսի մէջ խմբագրուած պատմութիւնը անուանեցին Առաջին պատմական գիրք, Փաւստոսի մէջ խմբագրուածը Երկրորդ պատմական գիրք եւ Ղաղարի մէջ խմբագրուածը Երրորդ պատմական գիրք (տես Ղաղարի Յառաջարանը եւ այս յօդուածների Բ. գլուխը), իսկ միւս կուսակցութեան մարդիկ Հայոց պատմութեան սկիզբը համարեցին առաքելական շրջանը եւ Թաղէոսի պատմութիւնը անուանեցին Առաջին

պատմական գիրք, Գրիգորի եւ իր որդւոց պատմութիւնը Միջին պատմութիւն. իսկ Ներսիսի պատմութիւնը Աերջին պատմութիւն (տես Փաւստոսի Գ. 1—2 գլուխները եւ այս յօդուածների Ա գլխի ... կէտը եւ Բ գլուխը): Փաւստոսի արդի խմբագրեալ յիշատակարանը նոյն իսկ Գ գպրութիւնով է սկսուում այդպիսի խմամքի հետեւանքով, որի մանրամասնութիւնները նյոյն իսկ սեղ տեղ դժուար է բացատրել՝ հաւանօրէն ժամանակի պատմական յիշատակարանների եւ հեղինակ խմբագրողի հայեացների մեզ անյայտ վիճակով: Աստուածաշնչի Մակարայեցւոց գրքերի թարգմանութիւնը աչքի առաջ ուներ այդ խմբագրող հեղինակը, որը նկատելով, որ Կիւրենեան հինգ գրքերի նման՝ Հայոց «ի ձեռն այլոց», «բազում ձառք առաջնոց մատենագրաց» պատմական գրքերը շատ անդամ իրար թերեւս կրկնութիւններ եւ հակառակութիւններ բովանդակելով, մանաւանդ կրօնական հայեացքների եւ գաւանաբանական նրազգաց տեսութիւնների տարբեր լրսաբանութեամբ շփոթութիւն տարածելով աւելի վնասակար են քան օգտակար, խմբագրեց բոլորն ի մի. Կարծում էր այդ խմբագրողը, որ այնու հետեւ չարիքի առաջն առնուեց, բայց ինչպէս կը տեսնենք, այդ էլ չը բաւականացրեց նորանոր պահանջներին: Ղաղարի խմբագրողը բողքեց Փաւստոսի խմբագրած պատմութեան մէջ անդամ խառնակող ձեռքի գէմ, իսկ խորենացին չը հաւանեց այդ նախորդ

կուսակցութիւններից եւ ոչ մէկն։ Հետաքրքիր է պատմական մատենագրութեան երկրորդ շրջանի անբաւարար նկատուելու դրդիչն իբրեւ երեւոյթ, որը կախումն ունէր անիշխանական շրջանի ֆէոդալական իշխանութեան պահանջներից։ Երկրորդ շրջանի թուահամարած կարգը՝ բացի ազգային պատմութեան սկզբնական կէտի համար սխալ որոշում՝ տալուց՝ ուրիշ պատճառով եւս խոտան ճանաչուեց. բազմաթիւ հեղինակներ մի եւ նոյն շրջանը պատմած գէպքում մի եւ նոյն թուահամարով նրանց կոչել չեր կարող յետին ընթերցողը, քանի որ մանր կենսագրութիւնները խմբագրելու եւ թուահամար ստեղծելու ժամանակ՝ կարող էին ոչ բոլոր գործերը յայտնի լինել խմբագրողն։ Ինքն ըստ ինքեան ամէն մի ընթերցող ցանկութիւն պիտի յլանար արգեն խմբագրուածը նոր խմբագրութեան ենթարկելու, որպէս զի դուրս մնացած եւ վերջում յայտնի գարձած յիշատակարաններն եւս ներմուծուեն թուահամարեալ կարգի մէջ. այդպիսի բնական ցանկութիւնը մի հետեւանք կարող էր առաջ բերել, որ ողբալի պիտի համարել. ամէն մի հատակոտոր, որ կորստի եւ անյայտութեան էր մատնուած, խմբագրուելուց եւ թուահամարի մէջ մուծուելուց յետոյ մանաւանդ՝ աւելորդ ճանաչուեց գոյութիւն ունենալ եւ արդի խմբագրեալ յիշատակարանների գոյութիւն ստանալով նրանց հատակոտոր աղքիւրները ջնջուեցին. այդպէս են չորփսիմեանց աւանդութեան, լուսաւորչի

երազի, Ա. Սահակի տեսիլքի, Տառերի գիւտի պատմութեան (Ղաղարից), Յակոբ Մծրնայ հայրապետի, Աղուանից Գրիգորիսի եւ այն կեանքի (Փաւստոսի դպրութիւնների մէջ) նախնական աղքիւրները։ Այդպիսի հատակոտոր աղքիւրներից խմբագրուած եւ յետոյ այն աղքիւրները ի սպառ ջնջուած եւ անյայտացած դրութիւնը ամէնից լաւ պատկերացնում է Փաւստոսի Զ. դպրութիւնը, որի չըս տարրեր հատակոտորից խմբագրուած լինելը ցուցել ենք ուրիշ անդամ (տես Ազգ. Մատեն. Ալ):

Սակայն այս բոլորը զուտ մատենագրական դրդիչ ու երեւոյթ են, որոնք պատմական դրականութեան զարգացման համար վերջում մի երրորդ եւ վերջն փուլ ստեղծելուն նպաստաւոր եղան, մինչդեռ այդ փուլը պահանջ դարձաւ երբ փոքր նախարարութիւնները ձուլուելով հերոսական շրջանում ստեղծուեցին երկրի խնամարկու մեծ նախարարութիւնները. որանց առաջ գալը եւ չետպհետէ զարգացումը իշխանասիրական տենչով՝ ծնաւ մի հարց թէ որ տոհմը իրաւունք ունի իր ծագմամբ մի պահաւոր, բարձր բազդի. ինքնըստինքեան քաղաքական այդ տենտենցը մատենագրութեան նոր զարգացման դրդիչ գարձաւ. պէտք էր տոհմերի հնագոյն անցեալը գտնել. դրան պիտի օգնէր առասպելը, աւանդութիւնը եւ երեւակայութիւնը, այսինքն բոլոր պատմական տարրերը միջնադարեան պատմիչի համար։ Եւ նաև սկսեց որոնել իր տոհմի ծագումը ոչ միայն

Քրիստոսից վաղ ըրջանում, այլ նոյն իսկ Աղէ-քսանդր Մակեդոնացուց, այդ ամենամեծ պատմական երեւցիթից էլ վաղ՝ ջրհեղեղից եւ նոյն իսկ Աղամից սկսած՝ Եւսեբիոսին վարժապետունեալով իր համար:

Ինչպէս գրդիչն ու նպատակը այդպիսի պատմիչի համար քաղաքական բարձր զգացմունքն էր, նոյնպէս եւ այդպիսի մի մատենագրական պատմական թուչքը մեծ էր եւ գլխաւորը՝ նոր. եւ նման դէպքերի օրինակով միանգամից չը ծնաւ նորը, այլ հետզհետէ եւ փոքրփոքր փորձերից յետոյ, մինչեւ Խորենացին եւ նրա պատճառաբանեալ «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց», այդ ուղղութեամբ ճանապարհը յորդող հանդիսացաւ Անանունը, մեղ յայտնի առաջին պատմիչը որ ֆէոդալական տենդենցով գրեւ շարժեց յօդուտ Մամիկոնեան նախարարութեան պսակաւորուելուն, քանի որ այդ տոհմի պատմիչները նախորդ ըրջաններով հողէին պատրաստել նոր եւ մեծ տենդենցը հիմնաւորելու՝ եթէ մէկը այդ ուղենար: Այնուհետեւ միայն Խորենացին երեւաց իրբեւ Բագրատունեաց գերազանցով տոհմի հզօր գրական ոյժը, որը պատմական մատենագրութեան մէջ սիստեմ մըրեց, որպէս զի այդ սիստեմի մէջ Բագրատունեաց գերազանցով թիւնը անհերքելի երեւայ. Խորենացու սիստեմը գործ գրին հետեւեալ պատմիչները սկսած Յովհաննէս կաթողիկոսից, որը բնականօրէն ոգեւորուած էր նոյտութեամբ եւ գրեթէ անդիր գիտէր սիստեմի

առաջին գրական երկը՝ Խորենացու պատմութիւնը, նոր սիստեմի յաջողութիւնը պայմանաւորած էր Բագրատունեաց յաջողութեամբ. բայց այդ ծանօթ է եւ մեր հարցից դուրս¹:

1 Հ. Բ. Ա. Սարգսեան Ագաթանգեղոսի իւր յայտնի ուսումնակրութեան մէջ գիտել է որ Անանուն կոչուել է Ապարանցուց Դավար, սակայն մեր թղթերն ու գրքերը մեռքի տակ չունենալով՝ հակառակ մեր ցանկութեան անկարող ենք ցոյց տալ իւր գրքի էջը:

ՅԱԽԵԼՈՒԱՅ

Դապարայ Փարսկեցոյ Պատմութիւն չայոց:

“ԺԱՌ ԱՌԱՋԻՆ”

(Համաձայն Սիմէռն Վարդապետ Ապարանցու ցուցումների:)

Ի հետեւումն գործիս Բ. Եւ Գ. Գլուխ-
ների մէջ մի շաբք մեկնութիւնների՝ առաջար-
կում ենք “Ղաղարի Առաջին Ճառը.” —

1. զեղչելով Սեբէսի Բ. դպրութիւնից
մէծ մասը.

2. աղքիւրներից Եւ վարիանտներից առ-
նելով Եւ գնելով [] նշանների մէջ յապաւեալ
մասերը, “Առաջին Ճառի” պատկերն ու բո-
վանդակութիւնը պատկերացնելու համար:

3. Սիմ. Ապարանցու ոտանաւորի ընթաց-
քով՝ արդի Անանունի անկապ մասերը տեղա-
փոխել ենք, Եւ որպէս զի պարզ լինի համեմա-
տութիւնը,

4. Սիմ. Ապարանցու համապատասխանող
ոտանաւորը կցել ենք մէն մի հատուածին, իսկ
անկապ մասերին վերաբերող

5. մատենագրական ցուցումը ոտանաւո-
րով պահպանել ենք իր տեղում:

Մի քանի մանրամասնութիւններ Ապա-
րանցին չունի, այդպէս են՝ Հայկի Եւ Քէլի կուուի

մանրամասնութիւնը, գահակալող տոհմերի ա-
նու անացուցակը Եւ յառաջաբանը. ուրիշ նկա-
տողութիւններ մատենագրական անյարիրու-
թեան մասին Ապարանցին ունի, իսկ Անանուն
չունի. այդ դէպքերում առաջարկել ենք հա-
տուածն իր տեղում Եւ ոտանաւորը շարունա-
կաբար, բայց նշանակել ենք որ բացակայում
է համապատասխանը միւսից:

Այս եղանակով ուրեմն առաջարկում ենք
Դամ Սիմէռն վարդապետ Ապարանցու “Ղիպա-
սանութիւնն” (էջ 7—34 (1870, Վաղարշապատ)
առանց որեւէ տող զեղչելու Եւ առանց տեղափո-
խելու ոտանաւորի մասերը՝ Եւ Երկրորդ՝ Սեբէ-
սի Միհրդատեան հրատարակութեան Առաջին
գպրութիւնն ամբողջապէս Եւ Երկրորդ գպրու-
թիւնից միայն Մամիկոննեան տոհմի գաղթի պատ-
մութիւնը — տեղափոխուած հատուածների
կարգով՝ ըստ Ապարանցու ոտանաւորի ընթացքի:

Սիմ. Վ. Ապարանցու ոտանաւորի ուղա-
գրութիւնը պահպանել ենք, իսկ Անանունի
Պսկեդարեան գրաբար հատուածները ընդօրինա-
կել ենք՝ աննշան բացառութեամբ՝ Հ. Աղ.
Մատիկեանի սրբագրած հրատարակութիւնից
(Աղդ. Մատ. Հ, Անանունը կամ Կեղծ-Սեբէսու,
էջ 73—91): Ցեխադարեան գրաբար հա-
տուածներն առաջարկում ենք՝ նշանակելով ծա-
նօթութիւնների մէջ խորենացու Եւ Ագաթան-
գեղոսի ոճաբանական հանդիպութիւնը, որոնք
ցայժմ չեն նկատուած:

Նախազիտելի:

[Ս. Ապարանցի]

ԶՀակառակողուն մտածեալ
Զորմանացանսն խոկայեալ
ԶՓարգեցոյն ճառն ըն-
թերցեալ
Այն որ Լազարն կոչեցեալ.
Փիլոսոփային աշակերտեալ
Ալմանակն հպատա-
կեալ
Ի յԱրծրունեացն աղնու-
ացեալ.
Ի յանապատն առանձնա-
ցեալ.

Եւ եղեւ ոչ ի կամայա-
կան պիտոյից¹ քարժ² խու-
դամանակ եւ զնախնիք քա-
ջացն ձեռնարկելով դրոշել
վիպատանութիւնս³, զիմն
յիշատակել զառաօպելոյն.
Եւ ի նոյն շարագրելով ա-
սացից զառ ի յապայօն ե-
ղելոյ եւ ցուցից համառաւ-
տիւք զարգեաց ժամանա-
ցեալ.
Կայս զալետիցու վերաբե-

1 Ու եթէ կամք ինչ յօժարեցաք հաւանել առանել
զայս: Ակամայ ընթացեալք ի բռնութենէ հրամանացն եւ
հարկապահանջմանը իշխանացն (Ադաթ, Տիկին 1882, էջ 10-11):
2 Ո՞նչ Արաթանգեղոս . . . քարժեալ հայերենի ա-
րուեստն (ib. 15):

3 Խուզիւրն ի մէջ բերեալ զկարգ պատմութեան
(ib. 11):

4 Տպագերը զանոտոքութել եւ զանոտոքութեալ.
Քան եղեալ թողովիկ որ յետ մեր գոյցին (ib. 11):
Քան յանձին կամբալ մտանել ի պատմագիր մտանիս խո-
րութեան (ib. 15): Եւ մեր զայս ջանձին կայեալ ան-
կեալ ի վաճառականութիւն լանից (ib. 11): Կարող է այս-
պիսի ջան վաստակոց . . . անձամբ անձին մտանուցանել (ib. 10):
Մի գերին ինչ ջան համարիչիք: Առան բազմացն հաճու-
թեան ջան յանձն առաք (Բ. Մակարյաց, Գլ. Բ., 27 և. 28):

5 Ու զիւր քաջութիւնն սուս ինչ հրամայեաց մեզ
վիպատանել (Ադաթ, էջ 16):

6 Ու զքմազարդ բնչից ինչ առասպելս աւելի քան
զարժանն ընթանաւ (ib. 16):

7 Առ այսպիսի աղէտո տարակուսի . . . անկանել
յօժարեն (ib. 8):

Յումէ Լազարն համբակեալ բութեան, զամն եւ զա-
մպուր վարուցն նախան- ևուրս հինգ թագաւորացն
ձեալ յիշատակելով⁴.

Ի մանկական տիս երեւեալ
Ի սնոսեացն արտակացեալ,
Եւ անգստին սկիլիքն արարեալ,
Ցիմսատութիւնն պարապեալ
Ի Յունականն երկիր գնացեալ
Եւ զարտաքնոցն հանձարս ուսեալ,
Աթենացի զիկոն առ ձայնեալ,
Քան զնոսա պլ հմտացեալ
Եւ յիւրական բնիկն եկեալ
Ի Մարզպանէն եղեւ պատուեալ
Մատիկոնեան Տեառն ընտրեալ
Ահան ասպետն շքեղացեալ
Ի հոյակապն նատուցեալ
Զոր Յիսուսի ուռամբ հարեալ
Ի Վարդգէսէ նախիկն շինեալ
Եւ Վաղարշայ կրկին պատեալ
Վաղարշապատ անուն եղեալ
Եւ նոր քաջաք հայոց կոչեալ
Զաթուուն սուրբ ի նա յանձնեալ
Ու Մարզպանին եր սիրեցեալ
Յորմէ զգարտոն հատուցեալ
Եւ ի մերը ին կը լուն եղեալ,
Քան զնորս մասն յաւելեալ
Զի զանկապոյտն փոխանակեալ
Զկամն հայցմանն կատարեալ

1 Այս փոքրիկ հասուածի եւ Ագաթանգեղոսի յա-
ռաջարանի հանդիպման յաճախումը, որ շարունակութեան
մէջ եւս պիտի երեւաց, անցուչո ունի իր առ այժմ ան-
բացատրելի պատճառը. թերեւս պատմական յիշատակա-
քանների յետին խրագրովի ներկայութիւնը նկատուի այդ
յառաջաբանների մէջ (տես վերեւ գլուխ Ա):

Այս հատուածը ցեխադարեան գրաբար է՝ ըստ Հ.
Ա. Մատիկանի:

Եւ Պատմագիր հայոց եղեալ.
Ի Մովեսին կարգն ոկտեալ
Եւ զմացեալոն վիպառանեալ:

[Ս. Ապարանցի]

Ի Մաքաբայ մատեանս մը-
տեալ Արդ¹ հայելով ի մա-
ԶԱՅծունացւոյնն վերծա-
նեալ տեանն Մաքաբայ Փիլիսո-
Եւ զվաշնչուցն թարգմա-
նեալ արձանի ԱՅծին քաղաքի
Հելէն գրով նուրբս գտեալ
արքայի հանդէպ դրան ար-
քունական տաճարին, ծած-
կեալ յաւերածի արքուն
նական կայենիցն²: Քանդի
զարւնս տաճարին պյնորիկ
Խնդրեալ ի գուման արքային Պարսից, եւ բացեալ զա-
ւերացն վասն ուանցն ընդ դիպան արձանագրին դրոշ-

¹ Բառ Հ. Աղ. Մատիկեանի ոսկեգարեան գրաբար է Հարանակաբար՝ բացի մի քանի ներբեւում նշնաւիւելիք յաւելուածներից:

Արդ ջանձին կալեալ: Արդ համան հա-
սեալ: Արդ հասեալ առխո համանի: Եւ արդ քանդի
ըստ օրինակի գրելոցս: Արդ ելից ի մտաց երիգարն
(Ագաթան. 1882: Ցիցիս, էջ 15, 16, 18, 19):

² Բառ Հ. Աղ. Մատիկեանի՝ Այսեղ պակասում
է երեք բառ՝ “գրեցից զնախնեացն պատմութիւնն”: Մեջ
թուում է որ ոսկեգարեան այս հասուածը միջնադարեան
ոճարանութեան է ենթարկուել: Թէպէտ նախնի մտանու-
գրութեան եւս օտար է այնպիսի անջրաբետող միջնկեալ
առացուածքի կիրառումը, ինչպիսին այստեղ՝ “Քանզի զիւնու
տաճարինը հասուածն է, որը” Հ. Աղ. Մատիկեանից պա-
կաս ենթարդուած բայց վերջում հիւսուող տողերը — զոր
իմ գտեալ: Կամեցայ ձեզ զրոցակարգելոց բաժանու մէ է
նախորդ իմաստից:

մեալ ի վերայ վիմի զամն եւ զաւուրոս հինգ թագաւու-
րացն Հայոց եւ Պարթեւաց յունարէն դպրութեամբ,
զոր¹ իմ գտեալ ի Այծագետոս ի նորին աշակերտացն,
կամեցայ ձեզ զըսւցու կարգել: Քանզի այսու ունէր վեր-
նագիրն այսպէս.

[Ս. Ապարանցի]

ՅԱԿԱԹ անդեղոսէ դրոշ Ես ԱԿԱԹ անգեղոս գրիչ
մեալ գրեցի ի վերայ արձանին
Ի վերնագրէն զայս իմաւ այսորիկ իմավ ձեռամբա-
ցեալ զամա առաջին թագաւու-
րացն Հնկից թագաւու-
րեալ բաջին Տրդատոյ՝ առեալ
Հայոց եւ Պարթեւաց տի-
րեալ ի դիւանէ արքունի զոր²
փոքր մի եւ ապա յիւրում
աեղւոջն տեսցես զպատ-
ճէնն:

Բայց ես նախ առաջին
զիւնակարեցին արքայ³ եւ
յարի այրն սկսայց ասել⁴, նախ զնախնեացն պատմու-
թիւնս, ուստի եղեւ սկիզբն ամենայն երկրի շնուռա-
ծոց լրմանց⁵, եւ անտի ի սոյն պատուաստելոյ յաւ-

¹ Հասուածս “զոր իմ գտեալ, . . . ունէր վերնագիրն
այսպէսո՞յ ցեխադարեան դրաբար է” ըստ Հ. Աղ. Մա-
տիկեանի:

² Հասուածս “զոր Փոքր մի եւ ապա . . . իսկ Հայկն
արի աղեղամբ հալածեաց զնայ ցեխադարեան դրաբար է
ըստ Հ. Աղ. Մատիկեանի:

³ Ա.Հեղեղ եւ երեւելիք առաջինը ի դից: Խորեն, Ա.
թ. 31/17 (1913):

⁴ Յորում է սկիզբն բանիցն այսպիսի: Խորեն, Ա.
թ. 31/16 (1913):

⁵ Ավեարհի մեծամեծ բարեաց պատմաբար, որ սկիզբն
աշխարհի եւ բազմամարդութեան: Խորեն, Ա.թ. 31/17—18:

գել¹ զղուցակիարդութեան² վէպս հոկայաշանցն³ եւ զառասպելս ունայն անհանձար զաւրացն⁴. զոր ի մեծ եր-

[Ս. Ապարանցի]

Այլ եւ զբելաց բուռն հաւ կանցն աշտարակին յլուրեալ թիւն ծնանելով⁵ ցըր ընդ գեղեցիկ ոճով պատմեալ մեծ անսապատ անթիւ⁶, որ մեալ ի կայս անլուրս ձայնից անմշ խօսաց հոկայացեալ դադար⁷ ի վերայ առն բնելու զառաջինն թագ կաւ կերի առնոյր սուրն Տիւրեալ տան⁸, յորում առաջին

1 Արդ՝ ասամի սկիզբն արացուք բանիցդ պատմել խոսացելոց, այօձափ ինչ զաւդեսցուք յառաջին անդր՝ Բ. Մակար. Բ. 33:

2 Եւ այս կարդ զըսուցանութեան դադարումն առցէ: Խորեն. Ա. Թ. 32/6:

3 Եւ ի սոցանէ հատեալ գտան ազդ սկայիցն: Խորեն. Ա. Թ. 31/18-19:

4 Թերեւս պիտի կարդացուի սկյն երկու բառը սան-հաճոյս լուղարնն: Հմմա. “Փաւստոս այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լուղաց բանս կարդէր ի պատմութեան իւրում” Պաղար Փարագ. էջ 4/29-30 (1904): “Գրեցին յինքեանս ձառս ընդունայն եւ անպիտանարանս եւ խառնեալ եղին ի գիրս գիտուն լուղաց: Պաղար Փարագ. 5/2-3:

5 Ուր յացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարից խորհուրդ աշտարակալնութեանն: Խորեն. Ա. Թ. 31/20-32/1:

6 Յօր հողմ ահագին իմն եւ ասսուածային շնչեցեալ ի դիցն ժամանե՛ ցըր զամբարտակին: Խորեն. Ա. Թ. 32/2-3:

7 Եւ մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշիւեալ, աղմուկ շփոթի ի մեջ արկանէին: Խորեն. Ա. Թ. 32/3-4:

8 Այլ իւրաքանչիւր սուր ի կող ընկերի իւրց ձգեւով ջանացին տիրել ի վերայ միեւանց, ուր պատաշմունք ի գեպ ելանէին բելցոյ բանանալ ունել զամենայն երկիր ։ Խորեն. Ա. Թ. 33/1-3:

թագաւորեաց ի վերայ երկրի:

Եւ¹ Բէլն Տիւանեան ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան զիւրն ոչ ճանաչելով զնութիւն. այլ զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր: Ապա յայնը ժամանակի Հային Աքեթածին ոչ կամեցաւ հաղանգիւլ ի ծառայութիւն Բէլայ արքայի. արհամարհեաց զնա Աստուած կոչէլ. անդ Բէլ ի վերայ Հային յարձակեալ մարտիւ: Իսկ Հային արի ազեղամբ հալածեաց զնա:

[Ս. Ապարանցի]

Չունի:

Արդ՝ Այս է Հային՝ որ ծնաւ զԱրաւանեակ զորդի իւր ի Բարելոն: Եւ ծնաւ Արաւանեակ ուստերս եւ գստերս բազումն յորոց անդրանիկն Արաւայիս: Եւ ծնաւ Ամասիա ուստերս եւ գստերս բազումն յորոց անդրանիկն Գեղամ: Եւ ծնաւ Գեղամ ուստերս եւ գստերս բազումն յորոց անդրանիկն Հարմա: Եւ ծնաւ Հարմա ուստերս եւ գստերս բազումն յորոց անդրանիկն Արամ: Եւ ծնաւ Արամ ուստերս եւ գստերս բազումն յորոց անդրանիկն Արայն գեղեցիկի:

Արդ այս են անուանք ազգածինն արանց անգրանիւնին ի Բարելոն, գնացելոցն ընդ կողմանս հիւ-

1 “Եւ Բէլն Տիւանեան . . . իսկ Հային արի աղեղումի հալածեաց զնայ, շարունակութեան քաղուածքն է:

Որեւէ հնագոյն աղբւրի (լուսաւ Հ. Աղ. Մասիկեանի Փաւստոսի նախարիխտոնէտիան շըլանի պատմութեան) այնպիսի խառնամբաց համառօսութիւնը, որ տեսանք նախորդ համառօսութիւնը, յիշեցնում է Եղիշէի պատմութեան նոյնանման համառօսութիւնը, որ տպագրուած է “Հանդէսոյի 1893, Մայիս թուին մէջ:

սիսոյ յերկիրն Արարադայ: Զի չուեաց խալաց գնաց Հայկն ի Բաբելոնէ կնաւոն եւ որդւովքն եւ ամենայն աղևին հանդերձ: Եւ չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ ի տանն որ ի լեռնոտաինն, զօր զառաջին շնեալ էր Զբուանայ հաւըն եղարքըն հանդերձ: Եւ ապա ետ զնա Հայկն կալուած ժառանգութեան կադմեաց թռոփին իւրում որդւոյն Արամանեկիյա: Եւ ինքն չուեաց գնաց անտի եւս ի հիւսիսակողմն եւ չոգաւ բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միով. Եւ կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հաբը, յանուն Հարցն: Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք՝ որ են հայտ զամբք հանդերձ¹:

[Ս. Ապարանցի]

Չունի:

Եւ արդ այս Հայկ հզաւը
զաւրութեամբ եւ բարի
անձամբ եւ կորովի աղեղամբ
եւ մարտիկ յոյժ²:

1 Ոսկեդարեան գրաբար լեզուի սցս հասուածները դում ենք Հ. Աղ. Մատիկեանի սբրագրութեամբ, որի ժամանակ Հայր հեղինակը նկատի է ունեցել միայն զրական լեզուն եւ չի կանխատեսել ժողովրդական ոճաբանական ձեւերը, որոնց նմյներն են զըր = բ, եւ եղբարբքն, Հայազամբք հանդերձ (տես էջ 75, ծնթ. 4, 5 եւ տող 16):

2 Խուսափելով երկարութիւնից, առաջ չենք բերում համեմատուող առղերը Խորենացուց, ըստ նացած որ նորա էլ մատենադիտական եւ լեզուագիտական որոշ հետաքրքրութիւն ունին:

Այս՝ Ապարանցու ոստանաւորների մէջ բացակայող հասուածք կրնութիւն է, երկրորդ անդամ Հայկի սերունդը Անանուն յիշում է Հայկի եւ Բէլի կռուից յետոյ: Ապարանցին վերջնն է համառօտել ի բաց թռողելով առաջնորդը (տես էջ 101 ծնթ. 1):

[Ս. Ապարանցի]

Անանուն

ԶԲարիրն¹ քաղաք շնեալ Յայնմ ժեմանակի թաւ կինքն Աստուած ուն գաւորեաց ի Բաբելոն որ ասացեալ սորդ հակայ Բէլն Տիտան Զգեղ պատկերին նկարաւ գրեալ ցեալ, որոյ հզաւը զաւրութեամբ եւ սաստիկ յոյժ Ազգաց բաղմաց հրաման գեղ պարանոցի իւրոյ: Եւ տուեալ էր իշխան ամենայն ազգաց Ծոռնր կրկնել ախտացուց ցեալ ուց ամենայն երկրի: Որոյ Ոմն նմա լնդգիմացեալ արարեալ առ աշաւք կաշեւ զհրամայեալոն անդուս նեալ հրամանու թագաւորական Արեթածին Հայկն գովեալ Այս ամենայն ազգաց, եւ Հպարտութեամբ ամբարտաւաց կեալ նութեան իւրոյ կանգնեաց ընդգէմ Բէլայ գոռողաւ ցեալ կեր պագանել իրբեւ Աս Ի Հիւսիսոյ կողմն չուեալ, զոհս մատուցանել: Եւ վաղվազակի կատարէին ամենայն ազգքն զհրամանու նորա, բայց մի ուն Հայկ անուն նահաւեատ ազգացն ոչ չնազանդ եցաւ ի ծառայութիւն նորա եւ ոչ մեծարէր զնա աստուածաւրէն շքով: Եւ էր անուն նորա Հայկ, ընդ որում ծնաւ աբբային Բէլայ սիսութիւն մեծ: Եւ զարաժառով լինի Բէլ արբայ ի Բաբելոն եւ դիմէ գայ ի վերայ Հայկայ սպանանել զնա:

1 Այս. Ապարանցու իր աղեկիրին՝ “Դազարի Առաջն ճառին” հարազատ մնալու մի ակնյայտնի նշանն է սցս Բաբելոն ձեւը, որը ունի նմեւ Անանուն (տես Հ. Մատիկեանի հրամա. էջ 75, ծնթ. 3):

[Ս. Ապարանցի]

Չունի:

Գայ հասանէ յերկիրն
Աբարադայ ի տունն որ էր
նոցա հայրենի՝ որ շինեան
էր ի լեռնոտին. եւ կադմոս

փախստական գնաց ի Հարք առ. Հայր իւր ազդ առնել
Նմա, եւ առէ. Գիմեալ գայ Բէլ ազգայ ի վերայ քո,
եկն եհաս մինչեւ ի տուն անգր, եւ ես կնաւ իմով
եւ որդւովք ահաւափի կամ փախստական:

Առնու Հայկն զԱբամանեակ եւ զկադմոս զրդի
իւր եւ զորդիս նոցա եւ զորդիս եւթանեցունց գտանե-
րաց իւրոց, արս հսկայս եւ նուազունս թուով: Եւ ի
զիմի հարկանի Բէլայ աբրայի, եւ ոչ կարաց զդէմ ու-
նել բարձր թեան արանց հսկայից սպառազինաց: Անդ
ի զիմի հարկանի Հայկն Բէլայ եւ կամեցաւ ըմբռնել
զնա Բէլ ի բուռն իւր: Խոյս ես Հայկն յերեսաց նորա,
եւ գնայր նա փախստական եւ Բէլ զհեա նորա երթալր
պնդագյնս հանդերձ զինակրաւն իւրով: Զտեղի կալաւ
Հայկն՝ եւ առէ յնա. “Զի՞ պնդեալ գաս զչետ իմ-
դարձիր անդին ի տեղի քո՞ զի մի մեռանիցիս այսաւը
ի ձեռաց իմց, քանզի ոչ վրիփի նետ իմ իւրէ»: Պա-
տասխանի ետ Բէլ եւ առէ. “Ղան այնորիկ, զի մի
անկցիս ի ձեռու մանկուց իմց եւ մեռանիցիս, այլ եկ
ի ձեռս իմ, եւ կաց ի տան իմում իսազազութեամբ,
ունելով ի գործս զմանկունս ի տան իմց զրտականս»:
Պատասխանի ետ նմա Հայկն եւ առէ. “Ճուն ես գու եւ
յերամակէ շանց գու եւ ժողովուրդ քու: Եւ վասն այնո-
րիկ թափեցից իսկ այսաւը ի քեզ զկապարձս իմ»: Եւ
աբրայն Տիտանեան սպառազինեալ եւ վատահացեալ ի
կուռ սպառագինութիւն անձին իւրոյ: Եւ Հայկն
Աբեթայն մերձենայր եւ ուներ ի ձեռին իւրում զա-
զեղն, որպէս հեծան հզաւը մայրափայտեայ: Եւ Հայկն
զտեղի կալեալ պատրաստի ընդդէմ նորա աղեղամբ:

[Անանուն]

101

[Ս. Ապարանցի]

[Անանուն]

Ի կորովի բազկացն մեռեալ Եւ կանգնէ զկապարձսն-
Հսկայօրէն ի գիրկ մոտեալ ի գեպնոյ ընդ ինքեան յա-
կա եռաթունն թափան- զեղն սկայաւրէն կամարին,
ցեալ Եւ ընդ գիրկ մոտեալ զաւ-
Այնուհետեւ գոռն լռեալ ըութեամը հարկանէ նետիւ
Խաղաղական կեանս սոտա- զոտախտակս, եւ ընդ պղնձի
ցեալ վահանն ի թափ անցու-
ցանէ ընդ մնեցէն արձանն
յերկիր խարսխեալ վոտա-
րեալ նետն եւ վաղվազակի
յերկիր կործանեալ զաստուածակարծեալ հսկայն եւ
զաւրիք նորա փախստական ընէին: Եւ նորա զհետ մնեալ
թափեցին ի նոցանէ երամակս ձիոց եւ ջորեաց եւ
ուղարուց:

Եւ Հայկ դարձաւ ի տեղի իւր եւ չոդաւ կալաւ
Հայկն զերկիրն Աբարադայ եւ բնակեցաւ անդէն ազգաւ-
իւրով մինչեւ ցայժմ: Եւ ի ժամանակի մահուան իւրոյ
ետ զնա կալուած ժառանգութեան կադմեայ թոռին
իւրում, որդւոյ Աբամանեկայ եղբաւը Հարմայի: Եւ
Աբամանեկայ հրամայեաց երթալ ի հիւսիսակողմն՝ ուր-
իսին իսկ գադարեաց զառաջինն:

[Ս. Ապարանցի]

[Անանուն]

Հայկաղնէի ազգն աճեցեալ Եւ եղեւ յետ մահուանն
Մինչ ի յԱբայն գեղեց- Հայկայնակ զոր-
կացալ զիս իւր եւ զդստերս իւր
եւ զարս նոցա, եւ զքորս
եւթանետին եւ զարս նոցա,
զուստերս եւ զդստերս նոցա

1 Եյս հատուածի բովանդակութիւնը կրկնուած է
Հայկի եւ Բէլ կռուի նկարագրին կանխող հատուածի մէջ
(տես էջ 98 ձնթ.), Ապարանցին համառօտել է վերջինը:

Եւ զամենայն աղիս իւր: Եւ չոգաւ բնակեցաւ անդէն յառաջնումն զաւառին, զր կոչեցին յանուն Հարց իւրեանց՝ Հարբ: Ապա գնայ անտի եւս Արամենակ ի հիւսիսակողմն եւ երթեալ իջանէ յերկիր մի խորին դաշտավայր, որ կայ ի մէջ բարձրաբերձ լերանց, եւ հատանէ անցանէ ընդ մէջ նորա գետ յորդահոսան, զօրով անցեալ Արամենակ բնակէ անդ, եւ շնէն զերկիրն կալուած ժառանդութեան իւրոյ՝ զվայրն լեռնակողմն եւ զառապար:

Զինի Արամանեկայ՝ որդի նորա Արամայիս շինէ իւր ի վերայ գետեղն տուն բնակութեան եւ անուանէ զանուն նորա ըստ անուան իւրոյ Արամայիր: Եւ որդիք նորա սկսան բազմանալ եւ լուռ զերկիրն: Եւ շինեցին զաւառը, մեռաւ եւ Արամայիս եւ կալաւ զերկիրն որդի նորա Ամասիա: Եւ ապա յետ նորա Գեղամ: Մեռաւ Գեղամ՝ եւ ափեաց որդի նորա Հարմայ. ապա որդի նորա Արամ. ապա որդի նորա Արայն գեղեցիկ, որով անուն իսկ զաշտին այնորիկ կոչեցաւ յանուն Այրարադ:

[Ս. Ապարանցի]

Զոր Շամիրամ կմին շամ-
շեալ սորւոց արքային Նինոսի,
Կին Կինոսի արքային լեալ.
Ի համբաւոյ զգեղն իմա-
ցեալ առնել ընդ նմա բարեկա-
Սիրեցելոյն նամակ գրեալ
Բայց ըղձալին իւր ոչ քանզի լուր լուր
լուրեալ կութեամբ, քանզի լուր լուր
Պատերազմաւ ընդիմա-
ցեալ. համբաւոյ յոյժ տոփեալ
Զզըրութիւն Հայոց ըե-
կեալ. զոյ նորա գեղեցկութեանն:
Զերկիրն լնքեան գիմա-
գրաւեալ:

[Անանուն]

Եւ Շամիրամ կինն Ա-
շեալ սորւոց արքային Նինոսի,
Քանզի լուր վասն գեղեց-
ի կութեան նորա, կամեցաւ
կութեալ ընդ նմա բարեկա-
մութիւն, որպէս զի կատա-
րեցէ ըզկաման նորա պոռն-
կութեամբ, քանզի լուր լուր
համբաւոյ յոյժ տոփեալ
էր ի վերայ անձին եւ գե-
զոյ նորա գեղեցկութեանն:
Զին զտանէր յայնմ ժա-
մանակի նման նորա այր ոք
ամենեւին՝ այր պատկերա-

Ճոխ յղէ առ նա հրեշտակս
պատարագաւք եւ կոչէ զնա
առ ինքն ի Կինուէ: Իսկ

Արայն ոչ զպատարագն նորա ընկալաւ եւ ոչ յանձն
առնու երթաւլ ի Կինուէ առ Շամիրամ, ապա առնու
զպաւրն իւր Շամիրամ եւ գնայ ի վերայ նորա ի Հայո:
Գայ հասանէ ի գաշտն Արայի, եւ տայ պատերազմ ընդ
Արայի, հարկանէ զզաւըն եւ սպանանէ զԱրայ ի պա-
տերազմն: Եւ հրամայէ Շամիրամ տանել զդի նորա
ի վերնատունն ապարանից իւրոյ եւ ասէ. “Ես ասա-
ցեց աստուածոց լիզուլ զվերս նորա եւ կենդանասցի,,;
Իսկ իրեւ նեխեցաւ դի նորա ի վերնատանն, հրամայեաց
գաղտնի ընկենուլ ի վիհ եւ ծածկել: Եւ զարդարէ զվի
զոմի ի հոմանեաց իւրօց այր պատշաճող եւ համբաւ
հանէ զԱրայի լիզուլ աստուածոցն եւ յարուցանել:;
Ունի ի ծածուկ եւ ոչ ումեք ի ծանօթից նորա ցու-
ցանէ զնա, եւ այնպէս հանէ համբաւ Արակեզաց տիկինն
Շամիրամ:

Յայնժամ տիրեաց Շամիրամ ի վերայ երկրին
Հայաստանեայց:

[Ս. Ապարանցի]

Ասիւրականն բռնացեալ
Զայքն ի նուաստութիւն
արկեալ.
Ամաց բազմաց ի մէջ ան-
ցեալ կութեամբ, ապա ապօ-
սամբեցին յԱսորւոց թա-
գաւորացն ծառայութենէ:
Այն որ ի Հրեաստան եկեալ
Եւ հրեշտակէն զօրքն մե-
կեալ.
Ինքն ի յորդոցն սատա-
կեալ:

[Անանուն]

Գ. ոռողութիւն շարին շի-
ջեալ Շաւարչ, ապաֆառնաւազ:
Կրկին Հայոց գլուխ բար-
ձեալ զբազարատ եւ Բագարատ
ի յԱսորոց վտարանչեալ
Նախ Զարեհի զթագն ա-
ռեալ թագարատայ ժա-
ւագա Արմոքն արիացեալ
Զինի Սարհանդն սիրացեալ
Շաւարչ զՓառնաւազ
տուեալ ռանգեցին զժառանգու-
թիւնս իւրեանց ի կորմանս
Արեւմնից, այսինքն է Ան-
գեղ տուն, վասն զի կոչե-
ցաւ Բագարատ եւ Անգեղ,
զոր ի ժամանակին յայնիկ
ազդ բարեարոսացն առ-
տուած կոչեցին:

[Ս. Ապարանցի]

Այս հնգերինս² խրոխտա-
ցեալ Այս Փառնաւազ հնա-
Զպատերազմ աղանց վա-
նեալ Եւ ապա յայնմշետէ Բա-
իսկ ներհակին ոգի առեալ բելացւոց եւ Մարաց թա-
նարուգոդնոսոր իշխեալ գաւորն տիրեցին մինչեւ
ՅԱպանազեան գունդն կո-
չեալ ցԱղեքանդր Մակեդոնա-
ցի, որ զամենայն տիեզերս

¹ “Սա ծնաւ զբագամ . . . Ասուած կոչեցին” բա-
գրասունի տոհմի ծագումն է, որ չի յիշում Ապարանցին
եւ որը զանազան նկատողութիւնների է արժանացել (տես
Հ. Ա. Մատիկեանի ուսումնասիրութեան, էջ 48–49
եւ 82): Պէտք է դիսել հատուածիս հնութեան խնդրի
առիթով որ Ապարանցին առհասարակ տոհմերի սերունդա-
ցուցաները չի յիշել: օր Արշակունեաց, Պարթեւաց եւ
նոյն իսկ Հայկազունեաց:

² Էջմիածնի հրատար ունի “Հինգ երեքինս”:

Զթագն ի գլույ նոցա ա-
ռեալ հնազանդեցոյց ի ծառայու-
թիւն: Եւ ծառայեցին Մա-
փառնաւազայ այս պատա-
համբութիւնն Պարթեւաց
ի բարելոն վախճանն ե-
ռադիքն բագարատայ ժա-
ւագա Արմոքն արիացեալ
Զինի Սարհանդն սիրացեալ
Շաւարչ զՓառնաւազ
տուեալ ռանգեցին զժառանգու-
թիւնս իւրեանց ի կորմանս
Արեւմնից, այսինքն է Ան-
գեղ տուն, վասն զի կոչե-
ցաւ Բագարատ եւ Անգեղ,
զոր ի ժամանակին յայնիկ
ազդ բարեարոսացն առ-
տուած կոչեցին:

Զախողակի իմն աշողեալ
Վատաբախալցին պերճա-
ցեալ
Զայրականն քէն յիշեալ
Զոր ընդ Բէլայ Հայկն ա-
րարեալ:

[Ս. Ապարանցի]

Որպէս երբեմն Կինոս Խոր-
հեալ
ի յԱրամէ վրէծ խնդրեալ
Բայց թաքուցեալ կեղծա-
ւորեալ
Զի զքաջութեան համբաւն առեալ.
Տող մարդարտեայ ընծայ յիշեալ
Եւ զնա երկրորդ իւր անուանեալ

Այս նախադասութիւնը նկատուած է յաւելում,
որովհետեւ կապուած չէ “ի Պամասկոսէ ասեն գնացեալ”
հատուածի հետ, բայց ինչպէս ցոյց ենք տուել Բ. զԱսի
մէջ, այդ հատուածը իր տեղում չէ, իսկ նախադասու-
թիւնը կապուած է “Ապարանցին Պարթեւաց որ եղէ
ի յայս ժամանակիդ հատուածի հետ”:

Աստ թունաթափ սոցա եղեալ
 Զհուր բարկութեանն հրդեհեալ.
 Բաղում ամօք զշայք տողորեալ
 Մինչ Աղեքսանդր թագաւորեալ
 Սորա Վախէ ոմն ընդգեալ
 Ի Հայկազնի զարմէն յայտնեալ.
 Աղեքսանդրէ զմաչ ճաշակեալ
 Եւ իւր ցեղին վերջին եղեալ
 Այսուհետեւ անտիրացեալ
 Եւ այր զարամբ ասեն եղեալ.
 Վասն այսորիկ դիւրաւ մոտեալ
 Ի Հայս Արշակ մեծ ասացեալ
 Արդ յառաջնն¹ կարդ դարձեալ
 Իմ Արմենի որ զայս ոգեալ:
 Զի պատմութիւնս² է վերջոտնեալ,
 Զհայկազանցն անդիտայցեալ,
 Եւ նորագոյն իմն սկսեալ
 Զքետուրածինս ազգաբանեալ.
 Զոր ի գլուխ գրոցս գրեալ
 Զհինդ թագաւ որս նախաճառեալ
 Կմին իրի անդրադարձեալ,
 Զելս նոցա ճառէ անսխալ,
 Թէ ով ոք են ուստի եկեալ
 Այս Ճոխութեանս պատահեալ

[Ս. Ապարանցի]

[Անանուն]

Զիկիսոսփային վկայ առեալ Զունի:
 Զիրողութիւնս չորիւք
 ստոգեալ
 Աերջկոյս զվասն էրն ծա-
 նուցեալ

¹ Խորենացու Պատմութիւնը:² “Ղազարի Առաջին ճառը”:

Յորմէ եւ իմ վահան առեալ
 Զի ներհակին դիմի հարեալ
 Փութով ընդ կրունկն դարձուցեալ,
 Եւ ճշմարտին բան զօրացեալ
 Զելուզակաց հոյսն աղարտեալ
 Թէ առարկեն վասն էր գրեալ
 Անոտապատւաստ ճառս յարմարեալ
 Յայնժամ լիցին շառագունեալ
 Յորժամ զպատճէն ի ձեռն առեալ.
 Եւ ներսէսի թէպէտ վիպեալ
 Բայց իմն նորա ներհակ չեղեալ
 Ոչ ի հեռին տարածայնեալ
 Եւ ոչ զորքյ բանն երկորդեալ
 Այլ զմիջնն համբուրեալ
 Որ յաստանօրն չէ գրեալ.
 Խուն ինչ խօսիւք ծայրագալեալ,
 Որ ի նմանէ է մնացեալ
 Եւ զընթերցողն թելադրեալ
 Զուսումնասէրն ի յայս առեալ,
 Որք միանգամ մտօք հպեալ
 Զիմաստ տառիցն ճաշակեալ
 Կոյցա եւ այս չանպիտանալ
 Այլ գուղնագեայ քաղցր երեւեալ:
 Եւ մի ի յայս ոք ախտանալ,
 Ի թիւ մեղացն իմ մերձենալ
 Յընդունելցն օտարանալ
 Պարզամտաց կարծիս ինչ տալ.

[Ս. Ապարանցի]

[Անանուն]

Կամ առ այսու հիւանդա- Զունի:
 նալ
 Խորթ է համարել զայս շա-
 րագեալ.
 Թէ այնպիսի մեղօք մեռեալ

Եւ յիմաստից ունայնացեալ
Զիարդ եղեւ արժանացեալ
Մինչ զի ի Հայս համարձակեալ,
Այս՝ ստոյդ է ձերդ խորհեալ
Ընթիւ մեղօք իմ զառածեալ.
Մինչ զի մտացս մասին յաղթեալ
Առ ի թւելն անկարացեալ
Բայց ի հոգին ապաւինեալ
Այն որ զակարս զօրացուցեալ.
Նախ հալեցէ զջուրս սառեալ
Ապա տացէ հրաման գնալ
Արինքն զմիտ իմ յամառեալ
Ար չար ախտիւք է զոփացեալ.
Ցուցցէ շաւիդ անըստերիւրեալ,
Զարբունականն ընթանալ.
Այլ եւ առ սուրբս ձայն ամբարձեալ
Եւ մանաւանդ ձիր ընձեռեալ
Ի յայս հանդէս թիկունս հասեալ.
Մաքուր անձանց զձեռս տարածեալ
Զի ցոլեսցեն մատուակեալ
Արբուցանել զիս զկարօտեալ
Եւ իմ ի յայս ապաստանեալ
Դարձայց յուստէ եղէ սկսեալ
ԶՊահաւկացն յայս բերեալ
ՅԱբրահամէ շառաւիղեալ.

[Ս. Ապարանցի]

Նախկին սոցա Եմուար գու-
վեալ Ապարանցութեան Պարբեւաց-
ի յարեւելս քուշանս մուեալ ու էնթւ ի յայս ժամանակէ
Ար ըստ աւրէ փարթա-
մացեալ Աղեքսանդրու կայսէր Մա-
եւ զՃահաստանն Բահալ Պարթիւք Մակեդոնացւոց
շնեալ. ամս կը Քանդի թա-
Զի էր նորա որդի ծնեալ գաւորեաց Սելեկիոս Կի-

[Ասանուն]

Եւ գանդրանիկն Բահալ կո-
չեալ Կանովոս Սոտեր՝ ամս
Յորմէ անուանցն կյոր-
գեալ ամն Ժ. Եւ յամի մտա-
կրկուցն մի բայիւ ցուցեալ.
Ի վեհազանցն զայս ուսեալ
Ի յարբայիցն աւրինադրեալ ի բաց
Որդւոց զՀայրս փոխանա-
կեալ ևոց Եւ թագաւորեաց
Մինչ ի յԱբշակ քաջն ա-
սայեալ Արշակ մեծ որդի արքային
Ի մէջ վեհէից վեհ երեւեալ
Եւ տէրութեան մասին հա-
սեալ: Արշակ արքայն ամե-
նայն զաւրաւըն հանդերձ յարեւելից երթալ ի Բաբե-
լոն, յառաջին թագաւորացն կալուածն զի անդ հաս-
տառեցէ զմագաւորութիւն իւր. Եկն եհաս ի Բաբե-
լոն: Խոկ Անտիոքոս իրբեւ ետես զի այնչափ բազմու-
թեամբ եկեալ հասեալ էր ի վերայ նորա Արշակ ար-
քայն Պարթեաւց, այնուհետեւ ոչ կարացեալ վաստա-
հանալ յիւր զաւրացն բազմութիւն եւ ի գիմի հար-
կանել վիրագին այնմիկ, խոյս ետ յերեսաց նորա. փա-
խեաւ եւ գնաց յԱսիաստան:

[Ս. Ապարանցի]

Թէպէտ սուշ ինչ ի լուծ
մուեալ Եւ թագաւորէ ի վերայ
Աելեւկիայ հնազանդեալ, Ասիաստանու ամս Ե, եւ
Այլ փութապէս զնա հեր-
գեալ յԱսիաստան ի ժամանակս
Եւ ինքնագլուխ աղաստա-
շեալ, ինչ: Եւ Արշակ արքայ
շնացն զի ծառայուց ի ծառայու-

Վաթառուն եւ մի ամ յերա-
կալեալ
Գայեակ որդւոցն իշխող
եղեալ.
Աղեկսանդրոցն գահոյն տի-
րեալ
Զկնի մահուան պայազաւ-
տեալ
Բայց միմեանց հակառա-
կեալ
Զթշնամութիւնն յաւե-
լեալ.
Պարթեւազանցն զայն տե-
սեալ
Զծառայութեան լուծն ըն-
կցեալ
Զպատերազմունս սաստկա-
լու զուցեալ
Եւ զարեւելս յինքեանս
թափեալ.
Զթետալացիսն գումարեալ
Ընդ նիկանով խազմ ա-
րարեալ
Բաբելոնէ զնա հալածեալ
Ի Պարեհէ գահէն մեր-
ժեալ :

[Ս. Ապարանցի]

Հարիւր՝ և երսուն ամաց
Եղեալ թեւաց, որք թագաւորեա-
լը սորեսին որդիս ծնեալ ցինն վկնի Արշակայ հաւր
Միոյն թէտեալս գահ յօ- իւրեանց ի Բահմակա-
ըինեալ հաստան յերկիրն Քուշա-
թուքոմածնացն իշխան եւ նաց: Որդիք չորք ասեն
դեալ Արշակայ արքայի

ԱՆԱՀԻՆԴՆ

Պիւսոյն ի կիւլիկէն նստեալ
Ընդ Ասիացին ճակատեալ
Զերորդն ի Պարթեւու կա-
ցուցեալ
Խակ չորրորդին զշայք ժա-
ռանգեալ
Թէպէտ այսպէս գու զա-
տուցեալ
Բայց ինքնազլուխ ոչ զաք
կոչեալ
Մինչև զաւուրքն վճարեալ
Արտաշէսի զգահն աւան-
դեալ
Եւ այսօրէն անշարժ կա-
ցեալ
Փառք անդրանկացն ա-
ռաւելեալ
Առ հարս ասէ լիցին բնա-
կեալ
Զինի մահուանն թագա-
կալ
Արտաշէսի զայս ունա պա-
հեալ
Երսուն եւ մի ամ զայե-
լեալ

Պարթեւաց զառաջինն ա-
սեն թագաւորեցոյց թե-
տալցաց աշխարհին զեր-
կորդն ի վերայ կիլիկեց-
ւոց զերրորդն ի վերայ
Պարթեւաց զըորրորդն ի
վերայ Հայաստան աշխար-
հին ։ Եւ¹ լինին ամենայն
ամք Արշակայ կենաց իւրոց
Ճ. ամ. եւ թագաւորեաց
ամս յիսուն եւ վեց Զինի
նորա թագաւորէ որդի նոո-
րա Արշակ ի վերայ Պար-
թեւաց ի Բահլ Շա-
հաստանի յերկիրն Քուշա-
նաց՝ ամս Հ՝ Ապա որդիի
նորա Անաշ՝ ամս Լի ։
Ապա Արշէն ամս Իբ. ապա
Արշաւիր՝ ամս Խե. ։
Ապա Արտաշէս՝ ամս ԼԳ.
Ապա Դարեհ՝ ամս Լ. ապա
Արշակ՝ ամս Ժ. ապա Նո-
տաշիր՝ ամս ԽԶ. ապա
Կերոզ՝ ամս ԿՊ. ապա
Վաղարշակ՝ ամս Ծ. ապա
Արտաւան՝ ամս ԼԶ. ապա
լինին ամենայն ամք Պար-
թեւաց տէրութեանն ամք

Վ. Ազարանցի |

Ապա Ալբանին քաջացեալ Իբրեւ ետես Գեմետրիսու,
Այն որ զԴեմէտր ձեռքա- զի այնչափ բազմութեամբ
կալեալ եկն եհաս ի վերայ նորա

Անանուն

Ապա Ալբանին քաջացեալ Իբրեւ ետես Գեմետրիսու,
Այն որ զԴեմէտր ձեռքա- զի այնչափ բազմութեամբ
կալեալ եկն եհաս ի վերայ նորա

Յառաւատին յերկիր տաւ-
բեալ
Յերկաթեղէնս զնա կա-
պեալ
Անտիոքայ եղբօր լուեալ
Ընդ Արշակայ սկսաւ գու-
ռալ.
Յանձուկ տեղւոջ պատե-
րազմեալ
Հանդերձ զաւրաւք տաւ-
պաստ անկեալ
Պարթեւազինն զաւրացեալ
Եւ զերրորդ մասն բռնաւ-
կալեալ
Արշակ, տեղի եւ նմա եւ
գնաց մինչեւ ցԱնտիոք եւ
անդ ճակատեցաւ ընդդէմ
Արշակայ ի պատերազմ՝ Եւ
եղեւ պատերազմ մեծ առ-
Անտիոք քաղաքաւ. Հար-
կանեն եւ սրբաշունչ առ-
նեն զղաւրն Գեմեարայ եւ
ձերբակալ առնեն զԳեմե-
տրիոս, կապէ զնա Արշակ
արքայ ոստիւք եւ ձեռաւք
եւ առնու գնայ յարեւելս
ի Բահլ Շահաստան: Իբրեւ
ետես Անտիոքոս եղայր
Գեմետրեայ եթէ ըմբռնե-
ցաւ Գեմետրիոս ի ձեռու
Արշակայ արքայի, ինքն
թագաւորէ ի վերայ Ասորուոց եւ Ասիաստանի. զաւրա-
ժողով լինի եւ գնայ ի Բարեկըն զկնի տասն ամի: Ազդ
լինի սորին՝ եթէ թագաւորեաց Անտիոքոս եղայր Գե-
մետրեայ եւ եկն ի Բարեկըն: Լուծանէ Արշակ զԳե-
մետրիոս զկնի տասն ամի եւ արձակէ առ եղայրն, որ-
պէս զի խաւոսեսցի ինչ առնել նմա եւ Գեմետրիոս ոչ
գնաց առ եղայրն իւր ի Բարեկըն, այլ յԱսիաստան
անցանէ: Ապա խաղայ գնայ Արշակ ի Բարեկըն երեք-
տասան բիւրովք: Յամի հարիւրերորդի քսաններորդի
ութերրորդի թագաւորութեան իւրոյ իւրեւ մուտ եղեւ
ի Բարեկըն, անկանի ի վերայ նորա Անտիոքոս յանկար-
ծակի ի ձևուն ժամանակի՝ ի նեղ վայրի. եւ ոչ կարեն
զաւրել, սպառեն զղաւրն, զարկանեն եւ ընկենուն զԱն-
տիոքոս ի խոնարհ եւ սպանանեն. եւ ձերբակալ առնեն
զԱնկեւկոս զորդին Անտիոքայ, զոր ունէր ասեն արքայ
ի գրանն իւրում թագաւորին:

[Ս. Ալպարանցի] [Անանուն]

Ապա եղբարբն ձիր չնոր-
հեալ
ԶՀայաստանեայս ի նա
յանձնեալ
Աբբայօրէն թագաղարդեալ
Եւ ծիրանի զգեցուցեալ.
ԶՄծրին նմա գահ պար-
գեւեալ
Սահման զԱրասփ լեառն
հատեալ
Մինչ յարեւեմուտս ծովն
ծփեալ
Եւ զհիւսիով անդրադար-
ձեալ.
Մինչ ի կովկաս լիառն հա-
սեալ
Որ յարեւելս կայ ձգեալ
Մինչեւ ի Մարստարածեալ
Եւ զկիւլիկէ ի մէջ առեալ.
Զայսքան միջոցս յինքն ըն-
կալեալ
Մերս Վաղարշակ¹ գունա-
գեղեալ
Իմաստութեանցն հոգ տա-
րեալ
Եւ զՀայկաղնիս գըով
գտեալ.

Ա Անանունին եւ Խորենացուն հալակցնելու համար
Ս. Ապարանցին Արշակ փարքին անուանում է՝ “մերս Ալա-
շարակին, այլևս՝ “իմաստովեանցն հոգ տարեալ, զՀոյ-
կազիս դրով գտեալ”:

[Ս. Ապարանցի]

Անթիւ զաւրացն ամբու- Եւ յուղարկէ զնա ի
խեալ Մրծանայ ընդ արեւմնւտա
Բիւրաւորացն զմիւն յաղ- զաւրաւ մեծաւ եւթանա-
թեալ սուն հաղարաց սպառա-
ի Մծրանայ արտաքս ելեալ զինաց. Եւ մեծամեծ իշխա-
Եւ յարեւմնւտա ի մարտ նաւք նախարարաց հաղա-
գիմեալ.
Բագարատայ նդ առաջ բարէր զդէմ ունել
ելեալ,
ի Հայկազանց վսեմացեալ պատերազմաւ: Այս ընդ
ի յարգայէն չնորհ գտեալ առաջ ելանէր Բագարատն
Եւ բարեկամն համարեալ Փառազեան յորդւոցն Ա-
Թագաւորին փեսայցեալ.
Զտանուտրութեան պա- րամանեկայ նախարար մեծ
տիւն առեալ հանդէրձ զաւրու: Մատու-
իսկ Վաղարշակ զուն ըն- գնանէ նմա պատարագ ուկի
թացեալ Եւ արծաթ Եւ զարդարէ
Եւ արծաթ Եւ փակաս.
Ապակէ զնա ի թագ հայ-
րենի. Եւ նստուցանէ զնա
ի վերայ ոսկիապատ ակա-
նակուռ զահոյիցն Եւ տայ
նմա զդուստր իւր ի կուռ-
թիւն: Զսա արար Արշակ
Զիշխանութիւն յինքն կոր-
գեալ արքայ ասպետ Հայաստան
ԶՄակեդոնեան անունն եկեալ.
Զիշխանութիւն յինքն կոր-
գեալ երկրին, որ էր իշխան Եւ
Հրամանատար ամենայն
Թագաւորութեան հրա-
մանաց գլուխ, Եւ հայր
արքայի Եւ եղբայր. որում
Ետ իշխանութիւն տէրու-
թեանն այնորիկ: Նա կո-
տորեաց զհոկայն որ զաւ-
րաժողով եղեն ի վերայ
նորա ի Միջագետս Ասոր-
ւոց:

[Անանուն]

[Ս. Ապարանցի]

Եւ այսքանիւք ոչ չատա- Եւ այս են թագաւորք
ցեալ Արշակունիք որդի թագաւոր-
Այլ ի յորդին ձեռնար- րեցին Հայաստան երկրի
կեալ. զկնի Արշակայ մեծի: Արդ՝
Արքունիք ազգին զանումն թագաւորէ Արշակ Փոքր
առեալ կոչեցեալ՝ յամի հարիւ-
Մինչ ի Վարդանն պաս- բերորդի քսան եւ իններորդի
կեալ. թագաւորութեան Արշա-
կայ հաւը իւրոյ ի վերայ
Հայաստան երկրի ի Մըր-
ծուին քաղաքի եղարքը
Եւրով Վաղարշակաւ՝ զոր թագաւորեցոյց Հայաստան
աշխարհին՝ ամս ԽԲ. ապա Արշակ՝ ամս ԺԳ. ապա
Արտաշէն՝ ամս ԽԵ. ապա Արտաւան Եւ Արշաւիր՝ ամս
ԺԲ. ապա Արշակ որդի Արշաւիր՝ ամս ԼՀ. ապա
Երսուանդ որդի Արշակայ՝ ամս ԽԱ. ապա Արտաշէն Եղ-
րայր նորին ամս ԾԲ. ապա Տիրան որդի Արտաշէնի՝
ամս ԽԲ. ապա Տիրան եղբայր նորին ամս ԽԲ. ապա
Արշամ ամս Ի. ապա Արգար որդի Արշամայ՝ ամս ԼՅ.
ապա Սանատրուկ Քեռորդի Արգարու՝ ամս Լ. ապա
Արտաշէն որդի Սանատրկոյ՝ ամս ԽԱ. ապա Արտաւազդ
Եւ ապա Տիրան, որդի Արաշիսի՝ ամս ԻԴ. ապա
Վաղարշ որդի Տիգրանայ՝ ամս Ի. ապա Քաջն Խոսո-
րով որդի Վաղարշու՝ ամս ԽԸ. ապա Մըծն Տըգատէս
որդի Խոսորվու՝ ամս ԾԶ. ապա Խոսորվ որդի
Տըգատայ՝ ամս Թ. Տիրան որդի Խոսորվայ՝ ամս ԽԸ.
Արշակ որդի Տիրանայ՝ ամս Է. Պապ որդի Արշա-
կայ՝ ամս Է.

Վարազդատ¹. Արշակ Եւ Վաղարշակ որդիք
Պապայ. Խոսորվ Արշակունի. Վամշապուհ Եղբայր

1 Ա. Ապարանցու օրինակում Արշակունիների ցանկը
Պապով չեր ընդհասուում, ինչպէս արդի Սանատռն ունի,
այլ շարունակուում էր մինչեւ “Վարդանն պատկեալ”:
[| նշանների մէջ այդ պակասը մըր լուցրածն է:

Խոսրովու . Արտաշէս Մանուկ որդի Վահամշապհչոյ :
Ազա Վարդան Սպարագետ :

[Ս. Ազարանցի]

Չորք հարիւր եւ հինգ ամ Եւ յետ նորա² պայտա-
տեւեալ զատք նորին² զնոյն ձեւ
ՅԱրտաշէսէ թագն Բար- աւրինադրեն զՄամիկո-
ձեալ նէիցն ասկա ազգաց զնե-
ի յայս միջոցս բանս լաւեալ¹ զութիւնն³ : Քանդի ոչ են
ի յըլլիւն գոլով կուսեալ սոքա որդիք ազգածնինն
Զի պատմազին¹ ոչ ախօր- Արամանեկայ, այլ են ե-
ժեալ կեալ ի Ճենաստանէ յամն
Զքերթողին կրկնարաննեալ Արտեանայ արքայի Պար-
Այլ զճէնաստանս յիշատա- թեւաց եւ Մեծին խոսրո-
կեալ զու արքայի Հայոց որդէս
ԶՄամիկոնեանս զեկու- լուայ յառնէն մեծէ՝ որ
ցեալ եկեալ էր հրեշտակու-
վասն սոցա գրուակա- թեամբ ի Ճենաց թագա-
գրեալ որիէն առ արքայի խոսրով,
Բայց Մովլիսի ոչ ձայնակ. յոր իմ հարցեալ ի գրանն
ցեալ արքունի եթէ “Ազգ մի մեծ

1 Այս ճանոթութիւնը Ապարանցունն է եւ վերա-
բերում է Ընանունի ընդհատորէն պատմագրելուն . նրա
խօսքը “Ղազարի Առաջին ճառից մասին է : “Դրուակա-
գրեալ, բայց որեւէ վերնագրի է ենթագրում Մամիկոնեան
առհմի պատմութեան համար :

2 Իմա՞ Վարդանայ, Դերանուանական արտայայ-
տութիւնն մացել է “Ղազարի Առաջին ճառից,, որը
կանխող հատուածի վերջում յիշել էր Վարդանին (աես
Ծնթ. 39):

3 Արտաշէս Մանուկից յետոյ “Ղազարի Առաջին
ճառի,, մէջ հաւանօրէն յիշուած էր հայոց անխնամ վի-
ճակը եւ նեղութիւնը, որի առիթով նաեւ “Պասկեալ
Վարդանը,,

Աւրինագրէն Մհրդ . հրատարակութեան մէջ :

Ագաթանգեայ գուլ հե- ի Հայաստան երկրի կայ՝
տեւեալ զորմէ ասէն եթէ ի ձերմէ
Այս որ զդեսպանս ճենաց աշխարհէն գնացեալ են,,:
Հարցեալ .

[Ս. Ազարանցի]

Ի սոցանէ զստոյդն ուսեալ Եւ նա ասաց ինձ . “Ա-
Յորմէ զրով մեզ աւան- սեն, ասէ, գուսանք եւ ի
դեալ մերում աշխարհին յերգո
Մամն եւ կոնակն փախու- իւրեանց, զՄամիկն եւ զկո-
ցեալ ասկա արս երկուս լեալ
Ճենաստանէ ի Պարս ան- քաջս եւ գլխաւոր եղարս
ցեալ : հարազատս, որդիք կառ-
կառնամայի որդիք եղեալ նամայ նախարարին՝ որ էր
Որ ի յերկրորդ գահն էր երկրորդ ի թագաւորու-
թեանն Ճենաստանի : Որոյ
Յորժամ նորա մահն հա- յետ մահուանն առնս այսու-
սեալ րիկ, առ զին սորին թա-
զկինն Ճենաց արքայն ա- գաւորն նոցին ի կոնոթիւն :
ուեալ . Եւ եղեւ ի նմանէ որդի՝ որ
ի նմանէ որդիս ծնեալ զինի մահուան հաւր իւրոյ
Եւ զաթոռ հաւրն յաջոր- յաջորդեալ նոտաւ յա-
ցեալ : թռո. հայրենի թագաւոր-
Երկու եղարց միարանեալ րութեանն : Եւ Նորա եր-
Մասն ինչ զաւրացն հրա- կու եղարք նորա ի մաւրէ
պուրեալ եւ ոչ ի հաւրէ, ապստամ-
ըեալ ի բաց կացին ի նմանէ .
տեալ եւ միաբանեալ ընդ ին-
Զարքայութիւնն նախան- քեանս զման մի ի նախա-
ձեալ րարացն եւ ի զաւրացն
Յայնժամ Ճենացն գումա- առնեն ուխտ միաբանու-
րեալ : Որոց խորհեալ խոր-
իւրդ չարութեան սպա-
նանել զեղացին իւրեանց
զթագաւորն աշխարհին

Ճենբակուր եւ առնուլ
զմագաւորութիւն նորա:
Եւ զաւրաժողով լինէին Մամիկ եւ Կոնակն ի վերայ
նորա ի միում տեղւոջ աշխարհին իւրեանց, եւ բաժանի
զաւր աշխարհին յերկուս: Ազդ լինի Ճենբակուրի, զու-
մարէ

[Ս. Սպարանցի]

[Անանուն]

Առ Արտաւան արքայ ան-
կեալ Գումարէ եւ նա զզաւրս
կերպ իւրոյ կողմանն եւ գնայ
Զկենդանութիւն ինքեանց ի վերայ նոցա ի պատերազմ
շահեալ Եւ յարձակին ի վերայ մի-
խակ Ճենբակուր զայս իմաւ-
ցեալ մեանց՝ հարկանեն որով
սուսերի, եւ սպառեն
Մեծ աղերսիւ պարգեւս զզաւրն ապստամբական:
ինդրեալ. Փախստական յեալ Մամիկն
եւ կոնակն գնայ՝ առ ար-
քայն Արշակունի, որ նստէր
ի Բահը Շահաստանի յեր-
կիրն Քուշանաց: Եւ եր խաղաղութիւն ի մէջ երկո-
ցունց թագաւորութեանցն այնոցի:

Յայնժամ մեծաւ աղերսիւ անդրեալ զնոսա Ճեն-
բակուրի՝ յարքայէն Պարթեաց. զի բարձգէ ի միջոյ,
ապա թէ ոչ՝ լուծցի ուիտ խաղաղութեանն, որ ի միջի
մերում:

[Ս. Սպարանցի]

[Անանուն]

Թօգաւորին յարսն խնաւ-
յեալ Խոկ նորա ինայեալ
Միայն բանիւ պատասխան-
նեալ Խաղաղութեան մերոյ, ասէ,
թէ մի լիցի ու խտին լու-
ծեալ հաստատուն կացցէ ի միջի

Զի այսոցիկ է իմ երգ-
ուեալ. մերում, զի երգուեալ եմ
առ նոսա, զի նոքա մի մեռ-
Յիմ աշխարհէս ասեմքնալ ցին, այլ ետու տանել զնո-
ւու անծանօթս պանդիստա-
նալ յեզր երկրի՝ ի տեղին յայն՝
Խաղաղասէր Ճենացն զի-
չեալ ուր արեգակն ի մայրն
մոտնէ: Յայնժամ հրա-
կա զնմանէ չնորհակալեալ.
մայէ արքայն Պարթեաց
Խոկ արքային զնոսա կո-
զեալ զաւրաց իւրոց տանել զնո-
սա զգուշութեամբ մեծաւ՝
Մեծ ամրսիւ, Հայս առա-
քեալ. կնաւ եւ որդւովքն իւրեանց
ՅԱրշակունեացն եղին պա-
տուեալ. եւ ամենայն աղսիւն իւր-
ազգական յեր արքայն Ար-
Ազգ մեծագոյն հզաւրա-
ցեալ. շակունի՝ որ էր թագաւոր
Կախնոյ անուամբն պարս-
պեալ շակունի՝ որ էր թագաւոր
Այսու զբուռը յեղն որո-
շեալ: եւ եղեն յազդ մեծ ի Մա-
միկոնայ եւ ի կոնակայ:
պետ:

[Ս. Սպարանցի]

[Մ. Խոյոննացի Բ. ԶԱ (1913)]

Այլեւ զաշխարհն ներբո-
ղեալ Սքանչելի է եւ աշխարհն
Մինչ Աղենայ համեմա-
տեալ առաջարկ: Բու-
րազմատեսակս քրթմաւէտ ւէտ եւ սիրամարգաշատ եւ
Սիրամարգաք գեղեցկացեալ բազմամետաքս, անբաւու-

¹ Աւ զզուած է առ Վարդան պատկեալն, որի առ-
նուան Վազգարի Առաջի ճառին, մէջ կցուած էր Մամի-
կոնեան տոչմի գաղթի պատմութիւնը:

Հրաշեւք էշ այծեմամբք, թիւն յամուրաց եւ հրե-
Յամօրէիւք հովիսք լցեալ. շից, եւ որ էշայծեմունող
Անգին ակամիք եւ մար- անուանեն. ուր հասարա-
գարտիւք կաց կերակուր ասեն զառ-
Հասարակաց գեղազարդեալ մեղ պատուական եւ սա-
Զառ մեղ ազնիւն զհազիւ կաւուց ճաշակելիս՝ զփա-
գտեան սեան եւ զփոր եւ պիլք այս-
Զթագաւորաց պիտոյա- պիսիք: Այլ զականց եւ¹
ցեան զմարգարտաց ոչ ասեն գի-
Նոյց յամպէտս է համա- տել զհամար մեծամեծացն.
բեալ,
Սակս բազմութեան առ- իսկ պատուականքս առ մեղ
ընդունեալ զգեստուց եւ սակաւուց
Քան զհանուրս պարարտա- ագանելիք՝ հասարակաց նո-
ցեալ
Եւ զբնակիչս յդիացու- ցաց է զգեստ: Եւ այս յա-
ցեալ.
Ունչ տեսողացն ցանկա-
ցեալ
Երանութեան բանս բար-
բառեալ
Անդ ուր այրին ոչ դառ-
նացեալ
Եւ ոչ որբոյն յոդւոց հա-
նեալ:

1 Արդի Ընանունը չունի համապատասխանող հա-
տուած: Համեմատուում է նաեւ Սուտ-Խորենացու Աշխար-
հագրաւթեան 1865 թ. հրատ. էջ 616 “Ճենաստան յելից
կալվ. . . , Ամէն համեմատող կը նկատի որ տարբեր տար-
բեր գարիտաներ են խորենացու, Սուտ-Խորենացու եւ
“Ղազարի Առաջն ճառի, = Աիմ. Ապարանցու հաղոր-
դածը Ճենաստանի մասին:

[Ս. Ապարանցի]

[Դեւնդ Վարդավակն Պե-
տերք. 1887. ԺԱ, 37]

Բնաւ հինից զնա ոչ տե- գայնու¹ ժամանակաւ
սեալ դարձեալ գրգռէր սիրտ
ՅԱղեքսանդրէ ոչ աւա- զաւրավարին Մահմետի ի
րեալ վերայ աշխարհին Ճենաց. եւ
Ի Մահմէտէ ոչ կասկա- ինդրէր յիշխանէն խմնյե-
ծեալ լի զըր բազում, եւ խոն-
Այլ խարկանօք զզաւրսն տանայր նմա ածել զար-
կոտորեալ: քայն Ճենաց ի հնազանգու-
թիւն ծառայութեան: Խսկ
նորա գումարեալ զաւր
բազում եւ տայ ի ձեռն
նորա իրեւ արս մու: Եւ խաղսցեալ Մահմէտ ի կող-
մանցն Դամասկեայ բազմութեամբ զաւրացն ի կողման-
արեւելից՝ անցանէր ընդ Ասորեսուան, ընդ Աշխարհն
Պարսից եւ ընդ Խորասան. եւ երժեալ հասանէր ի
մասն ինչ Ճենաց աշխարհին եւ բանակէր առ եզր գե-
տոյն հզաւրագունի, որ Բաւտիսն կոչի: Գրէ հրովար-
տակ առ արբայն Ճենաց. “Ընդէ՞, ասէ, գու միան
Ընդզգեալ ոչ մտանես ընդ հնազանգութեամբ իշխանին
մերց, զի ամենայն ազգք սարսկցին ի մէնչ: Արդ գու
յո՞վ ապաստանեալ չհնազանգիս մեղ. մի արգեօք իրեւ
զաղջկունսդ քո համարիս զմեղ, յորոց միջի վերեւե-
տեալ Ճոխանսու: Այլ արդ եթէ ոչ մտցես ընդ լծով
ծառայութեան մերց՝ գիտասչիր զի անապատ արարից
զերկիրդ քո ի բնակչաց, եւ վախճան արարից արքայու-
թեանդ քո: Բայց մի յանհոգս լեալ յապաշեցես զպա-
տասխանի գրոյս, այլ արագ դարձուցես այսէնն:

Իրեւ ընթերցաւ զգիրն արքայն Ճենաց, որ կո-
չէր Ճենբակուր՝ կոչէր առ ինքն զամենայն փշպիպանսն
համահարզս իւր եւ խորհէր, թէ զինչ տացէ բանիցն
պատասխանի: Եւ խորհեալ առ միմեանս՝ գրեն բանիցն

1 Այլ հատուածի մասին տես գործիս Գ. Շլուխը:

պատասխանի եւ ասեն. “Մի՞ արդեօք հզաւրագոյն իցես
դու քան զամենայն թագաւորս, որ ի սկզբանցն”

[Ս. Ապարանցի]

Յորժամ պղծոյն անդ ժառ
մանեալ բայ աշխարհիւ: Բարելաց-
ջաշագելուայ աղջկունս տե-
սեալ ւոց թագաւորն, որ տիե-
չենքակուրին զգացուցեալ դոնացւոյն եւ Պարսից
Խրսուն հաղար կոյս աղեր-
սեալ տիրել ի վերայ աշխարհիս
մեր: Այլ գիտասջիր, զի
լիր քան զամենայն շուն
իցես դու եւ ի տոռն պագ-
շոտութեան վարանեալ. եւ այդորիկ աղագաւ չար ցան-
կութիւն քո ի համբաւ գեղեցիկ կուսից իմոց ինեղու
արկեալ՝ հարկեցոյց զքեղ զնել զանձն քո եւ զանձինս
զաւրացդ եկելոց ընդ քեզ, իբրեւ թէ ոչ գոյին գերեզ-
մանք ի Գամասկոս անձանց ձերոց: Այլ արդ գիտաս-
ջիր, զի աշխարհս մեր ոչ է մտեալ ընդ հարկաւ ու-
րուք. եւ ոչ ես ի յանձին կալայց. բայց թէ ընդայ
յինէն ինդրեսցեն ըստ աւրինի թագաւորաց՝ տաց քեզ,
եւ յարուցեալ երթիցես խազաղութեամբ ի տեղի քոյ:

Իսկ Մահմետի դարձեալ յղեալ առ Ճենքակուր՝
“Տնւր ինձ, ասէ, աղջկունս լու, եւ գնացից ի քէն ինաղա-
ղութեամբ. ապա թէ ոչ՝ պատերազմաւ ելեց ընդդեմ քոյ”:

Եւ յանձին կալաւ արքայն Ճենաց պատ ժամին
յղելց, եւ առաքեաց առ Մահմետի ասէ. “Մասն այդրէն
ի բանակի քում, մինչեւ կատարեցից զինդրուածն քոյ:

Եւ նոյնժամայն հրաման. ետ զաւրաց իւրոց, կազմել
սայլս փաշիւք դիպակաւք եւ զընտիրս հեծելոց իւրոց
կուռ սպառազինութեամբ բառնալ ի վերայ սայլիցն
փոխանակ աղջկանցն զորս ինդրեաց, որպէս զի կարասցէ
զնոսս որսալ յորոգայթ իւրու:

[Կեւոնդ Վարդապետ]

[Ս. Ապարանցի]

Իսկ նա զվաշէս սպառազիւ
նեալ տոյն՝ բանակէին ընդդէմ
Եւ կանացի զգեստիւ ծած-
կեալ նոցա: Եւ էին ի վերայ
մարդարուն այսու սայլիցն աւելի քան զիս
վուտ փորդարէն այսու արամիք
Եւ ստութիւնն յանդիմաւ
նեալ ցունց իրբեւ վտաւանաւք
Յորմէ Մահմետ անմտա-
ցեալ ինչ սակաւ. եւ առաքէր
Աստ խրատուն զՓեսուն
անցեալ “Արի, ասէ, զոր հայցեցերն
յինէն, զայս լու աղջիկո
Զխառնիձաղանձն յայու-
կոյս թողեալ
Եւ զմեծազգիս յայնկոյս
տարեալ:

Թուոյ վիճակաւ ում ումմէր եւ հասցէ. գուցէ մարտ
պատերազմի լինիցի ի մէջ զաւրաց քոյց: Եւ ետ տա-
նել նաւս յայնկոյս գետոյն, զի միանգամայն անցենն
առ նա: Իսկ նոցա անխորհուրդ մտաւք ընտրեալ զպա-
տուական զաւրացն՝ անցին յայնկոյս գետոյն իբրեւ
արք լու:

[Կեւոնդ Վարդապետ]

[Ս. Ապարանցի]

Եւ եկեալ յեղր գե-
նեալ տոյն՝ բանակէին ընդդէմ
Եւ կանացի զգեստիւ ծած-
կեալ նոցա: Եւ էին ի վերայ
մարդարուն այսու սակաւ արամիք
Ճենքակուր սակաւ արամիք
բանակէր բացագոյն ի նո-
նեալ ցունց իրբեւ վտաւանաւք
ինչ սակաւ. եւ առաքէր
առ Մահմետ զաւրավարն
ցեալ “Արի, ասէ, զոր հայցեցերն
յինէն, զայս լու աղջիկո
յամենայն իշխանութեան
իմում ընտրեցի պատուա-
ւորաց քոյց: Արդ սակաւ
զպատուաւորս քո զաւրու գ-
ըստ թուոյ աղջկոնցս իմոց՝
անց յայնկոյս գետոյս եւ
տաց զաղջունս իմ ըստ
Ճենաց վիճակաւ ում ումմէր եւ հասցէ. գուցէ մարտ
պատերազմի լինիցի ի մէջ զաւրաց քոյց: Եւ ետ տա-
նել նաւս յայնկոյս գետոյն, զի միանգամայն անցենն
առ նա: Իսկ նոցա անխորհուրդ մտաւք ընտրեալ զպա-
տուական զաւրացն՝ անցին յայնկոյս գետոյն իբրեւ
արք լու:

[Կեւոնդ Վարդապետ]

Եւ մինչ կամէր զւարճանաւ
Ընդ աւրիսորդսն փափիկա-
նաւ արքայն Ճենաց յարձակել
Մանկունքն ի սայլէն վայր
հոսեալ,
Եւ կերկառյին ի գործ ար-
կեալ.

Եւ իբրեւ բախեցին զմի-
մանս մարտիւ պատերազմի՝
վազվաղակի ելին եւ որք

Զերսուն հազարն Խողխո-
ղեալ ընդ վաշիւքն թագուցեալ
Վահմէտ սակաւ արամբ էին, եւ ի մէջ առեալ կո-
տորեցին ի սուր սուսերի,
ապրեալ. մինչեւ ոչ մնայ ի նոյանէն
Այնուհետեւ ոչ յաւելեալ ապրեալ եւ փախստական:
ԶՃէն անունի միտքերեալ: Եւ հատին զար նաւուցն՝
զի մի՛ ոք ապրեսցի. յորմէ
ոչ ոք ապրեցաւ. բայց
միայն Մահմետն սակաւ
արամբք հեծեալ յերիվարն՝ անկան ի դետն, ապաստա-
նեալք ի քաջութիւն երիվարացն: Եւ այնպէս կօրա-
գլուխ ամաւթով գարձեալ յարբայէն Ճենաց՝ գնացին
յերկիր բնակութեան իւրեանց: Եւ ոչ եւս յաւել
ելանել ի պատերազմ ի վերայ աշխարհին Ճենաց: Որ
ամս ժ ամիսս լ կեցեալ զախճանի:

[Ս. Ապարանցի]

Զայս ամենայն¹ մեղ ծա-
նուցեալ² ի Դամասկոսէ ասեն
Եւ զո՞ւ բանին առ. այլս
փոխեալ², գնացեալ զՄարսեակն զնն-
ԶՄարսակէ սկիզբն արա-
րեալ ստամի երկուց լիւանցն, որ
Արբահամու ընդոծին լեալ: Հային հանդէպ մեծի գաշ-
ի Սահակէ ապստամբեալ տին Արայի, յԱրագած կա-
Դամասկոսէ ի Ճայք ըսւեալ տար եւ ի գեղ լեառն:

¹ Իմա՝ 1. Մամիկի եւ Կոնակի գաղթը, 2. Ճենաստա-
նի մասին աշխարհագրական տեղեկութիւնները եւ 3. Ճե-
նացոց քաջագործութիւնը Մահմետի գէմ: Այս երեք հար-
ցերի սկզբան եւ վերջում մասնագրական տեղեկութիւն
է տուել Սիմ. Ապարանցին, որովհետեւ այդ հարցերը ան-
կազ էին Մարսեակի պատմութեան համեմատութեամբ եւ
ամբողջութիւն են:

² Խօսքը “Առաջին Ճառին հեղինակի” Ղազարի մա-
սին է:

Յերկուց լերանց սաին ընա-
կեալ նուն իւր, որում Ազատն
Որ յԱրայի գաշտ նայեւ կոչեն լեառն: Եւ լինին նո-
ցեալ: բա երեք որդիք. Փառոսին
Երից որդւոցն հայր եղեալ նա է Եղիազար եւ Փա-
ՅԱրամանեայն ազգն խառ-
ուխտ կոչեն զոեղի ընա-
նեալ. կութեանն, եւ Փառականն
ԶԼեառն երիցուն անուա-
գաշտ որսոց եւ արշաւա-
նաց նոցին, որ խառնին
ԶԵղիազարն Ազատ փու-
յազգ Արամանեկայ:

[Ս. Ապարանցի]

Եւ ընդ սմա¹ շարունակեալ
ԶԲուզայս որ զՄտամբուլ շնեալ
Բիւզանդիայ յեղաշրջեալ
Իւրով կոչմամբն պարփակեալ:
Մինչ կոստանդին հաւատացեալ
Զծիր պարպին հաստահեղեալ
Կայսերական անուամբ գգուեալ
Այլ Բուզային չանհետացեալ².
Այդ զառաջն ճառն աւարտեալ³
Եւ զհարկանորն գծագրեալ
Ցոլով տոհմուք զանց արարեալ
Զոր քերթողին է շարադրեալ.
Եւ երկրորդին առջնորդ երեալ⁴
Սոյն իմ Ղազարս սիրեցեալ
ԶՓոստոսի գիրն յուզեալ

¹ Իմա՝ Մարտեակի գաղթի պատմութիւնը

² Ղազարի յառաջարանի մէջ է այդ աւանդութիւնը,
որով վերջանում էր “Ղազարի Առաջն ճառը”, (Տես 1904.
Հրատ: Տիգիսի, էջ 3-4:)

³ Իմա՝ Ղազարի:

⁴ Այս երկրորդ ճառը այժմ Ղազարի Ա. Դրուագն է:

ԶԲիւզանդացւոյն սատար առեալ.
 ի սմանէ աղբերացեալ
 Եւ զահաւէտս շաղաշարեալ
 ի թագաւորս զհիմն եղեալ
 Յսպարապետս՝ գիւսաւորեալ
 Կան Արշակայ բարեպաշտեալ
 ՅԱՀրարատէ նժդեհացեալ
 ԶՊարսից կալուած կամաւ թողեալ
 Ընդ անօրէնս ոչ բնակեալ
 Եւ այլն:



1 Համեմատուում է Ավարդան Պատկեալին պատ-
 մութիւնը Արշակունեաց պատմութեան կցուելու պարա-
 գային հետ, որ տեսանք վերեւում:

- Ա. Գարդեղեան Ձ. Կ. Մ., Ս. Ս., Ակնայ Գալուստյանը եւ Արդի Հայերէն լեզուն: 1912: Էջ Է+416: Փր. 8.-
- Ա. Մարկոսարտ Պ. Ա. Գ. Վ., Պատմութիւն Հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշտոցի: Թրգմ. Հ. Ա. Վարդանեան: 1913: Էջ Է+59: Փր. 2.-
- Եթ. Աճառիան Հ., Հայոց գրերը (ընդ մամով):
- Հ. Մատիկ Ա. Ա. Հ. Ա., Ասամունը կամ Կաղծ-Սեբէոս, քննական ուսումնասիրութիւնն: 1913: Էջ Է+91: Փր. 2.50
- ՀԱ. Թուրքումեան Տ. Ա. Յ., Երեմիա Զէլէպիի Քէօմիւթնան Ստամուցոյ Պատմութիւն: 1913: Էջ Է+412: Փր. 8.-
- ՀՅ. Վարդանիան Հ. Ա., Դասական մանր բնագիրներ եւ ձեռագրական համեմատութիւններ, Ա.: 1913: Էջ Ը+155: Փր. 3.-
- ՀԳ. Մարկոսարտ Պ. Ա. Գ. Վ., Հայ Բագրատունեաց ծրիւպագրութիւնը ծանօթութիւններով: Թրգմ. Հ. Մ. Հակոբիան: 1913: Էջ 68: Փր. 3.-
- ՀԳ. Մարկոսարտ Պ. Ա. Գ. Վ., Վառաքնական թիտողութիւններ, Ա. 1913: Էջ 120: Փր. 3.-
- ՀԵ. Գիւտերիոր Կ., Հոռվիշական Հայաստան եւ Հոռվիշական սատրապութիւնները Դ-Զարերուն, Թրգմ. Հ. Մկրտիչ Վ. Խորշուս: 1914: Էջ Է+94: Փր. 3.-
- ՀԶ. Վարդանիան Հ. Ա., Բառաքնական դիտողութիւններ, Բ. 1914: Էջ 110: Փր. 3.-
- ՀԵ. Մրապեսան Հ. Ի. Ս. Յակոբ ազգային հիւանդանոց: 1915: Էջ Ի9+477: Փր. 8.-
- ՀԶ. Գալէնը Արևան Հ. Գ. Ժ. Վ., Կանագրութիւններ երկու հայ պատքիարքներու եւ տան եպիսկոպոսներու եւ ժամանակն հայ կաթուղիկները: 1915: Էջ Ը+384: Փր. 6.-

- ՀԹ. Դաւիթ-Բեկ Մ., Արաքեքը գաւառաբար-
բառը: 1919: Էջ ԺԱ+292: Գր. 6.—
2. Տաշեան Հ. Յ., Արշակունի դրամներ. Ա: 1919:
Էջ Է+192: Գր. 4.—
- 2Ա. Տաշեան Հ. Յ., Պոնտական ուսումնափրու-
թիւնը: Մամն Ա: Հնտագոտական ուղմութութիւն
ի Պոնտոս. Յ. Գ. Կ. Անդեքսնի: Մամն Բ: Ռե-
ղեւորութիւն Շնախոսական հնտագոտութեան ի
Պոնտոս եւ ի Փոքր-Հայո. Գր. եւ Եւգ. Կիւլոն Եղ-
բարց: 1919: Էջ Է+420: Գր. 8.—
- 2Բ. Փերիսթեան Հ. Պ., Ցուցակ Եւրոպական-Հայ-
կական հրատարակութեանց 1896-1910: 1919:
Էջ Է+273: Գր. 6.—
- 2Գ. Գայեմբեկարեան Հ. Գ. Ի. Ժ. Ա., Նորագոյն
աղբերք Եղնկայ Կողբացոյ: 1919: Գր. 3.—
- 2Դ. Խաչաթեանց Բ., Արաբացի մատենագրեր Հայ-
աստանի մասին: 1919: Էջ Է+147: Գր. 3.—
- 2Ե. Տէր-Պողոսեան Գ. Ի., Նկատողութիւններ Փաւ-
սոսի պատմութեան վերաբերեալ: 1919: Էջ 126:
Գր. 3.—
- 2Զ. Ակիմեան Հ. Ս. Վ., Դաւազանագիրը Կաթողի-
կոսաց Աղթամարայ: Պատմական ուսումնափրու-
թիւն: 1920: Էջ ԺԱ+200: Գր. 4.—
- 2Է. Մատիկեան Գ. Ի. Հ. Ա., Կրօնի ծագումը եւ
դիցաբանութիւն ըստ համեմտական Կրօնագի-
տութեան: 1920: Էջ ԺԲ+334: Գր. 6.—
- 2Ը. Վարդանեան Հ. Ա., Նիւթեր Հայերէն բառա-
գրութեան: 1920: Էջ 80: Գր. 3.—
- 2Թ. Վարդանեան Հ. Ա., Յերսիմեայ վասն ի քամն
եւ յերկու զիրս առ ի Հերոայիցոց զպատմու-
թիւնն բաժանելոյ: 1920: Էջ 82: Գր. 3.—
- Դ. Տաշեան Հ. Յ., Հայ բնակչութիւնը Սև Ժովէն
մինչեւ Կարին. Պատմական-ազգագրական Հա-
րեւանցի ակնարկ մը: 1921: Էջ 84: Գր. 4.—

ՀՀ Ազգային գրադարան



NL0795218

